Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության միևնույն դասարանի համակազմում միաժամանակ ընդգրկ-

վում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2-3 երեխա՝ ըստ կրթական կարիքի բարդության: Դպրոցներում գործում է բազմամասնագիտական թիմ, որի մեջ ներգրավված են երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետներ՝ հատուկ մանկավարժը, սոցիալական մանկավարժը, հոգեբանը, լոգոպեդը, երեխայի ծնողն ու ուսուցիչը [2]:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների 70%-ը սովորում է ներառական դպրոցներում, 12%-ը՝ հաճախում է հատուկ դպրոցներ, 18%-ը՝ դպրոց չի հաճախում: Ի դեպ, դպրոց չհաճախողների թիվն ավելի մեծ է գյուղական վայրերում. Երևանում դպրոց չի հաճախում երեխաների 13%-ը, մարզերում այդ ցուցանիշը 18% է, իսկ գյուղական վայրերում՝ 23%: Ի դեպ, մարզերում դպրոց չի հաճախում տղաների 15%-ը, իսկ աղջիկների՝ 23%-ը, Երևանում՝ տղաների 11 %-ը, իսկ աղջիկների 15%-ը [5]:

Առավել հաճախ կրթությունից դուրս են մնում մտավոր (27%), հենաշարժողական (26%) և համակցված (20%) հաշմանդամություն ունեցող երեխաները:

Հատուկ դպրոցներ հաճախող երեխաների մեջ մեծ է լսողության խանգարումներ (36%) և մտավոր հետամնացություն ունեցողների (25%) ընդգրկվածությունը:

Մանկատանը խնամվող երեխաների համար ընդհանուր հանրակրթական դպրոցները գրեթե անմատչելի են. նրանց միայն 5%-ն է հաճախում հանրակրթական դպրոց, 25%-ը՝ հատուկ դպրոցներ, 70%-ը դպրոց չի հաճախում [4]:

Ներառական կրթության զարգացմանն աջակցելու նպատակով ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը,

Կրթության ազգային ինստիտուտը, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները (UNICEF, Հույսի կամուրջ, Առաքելություն արևելք, Վորլդ Վիժն Հայաստան) պարբերաբար իրականացվում են վերապատրաստման դասընթացներ, քննարկումներ, կոնֆերանսներ, կյոթ սեղաններ ուսուցիչների, ծնողների, նախադպրոցական և դպրոցական հաստատությունների մասնագետների համար: Վաղվա ներառական կրթության համակարգը համապատասխան գիտելիքներով զինված ուսուցիչներով ապահովելու նպատակով՝ Հայկական պետական մանկավարժական համալսարանի բոլոր ֆակուլտետների ուսումնական պլանները 2012–2013 ուստարվանից համալրվեցին ներառական կրթության վերաբերյալ համապատասխան առարկաներով, որոնք կդասավանդվեն և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում [1]: Մագիստրոսական կրթական համակարգում, «Ներառական կրթության կազմակերպում» դասընթացի մեջ ներառվել են «Բրայլյան գիր» և «Ժեստերի լեզու» մոդուլները, որոնց շնորհիվ ուսանողները տիրապետում են նաև տեսողության ու լսողության խանգարումներով աշակերտների հետ աշխատելու հմտություններին:

Այս ամենի հետ մեկտեղ հարկ է նշել, որ ներառական կրթության համակարգում դեռևս կան բացթողումներ ու խնդիրներ[2]: Մասնավորապես.

- Ներառական կրթության գաղափարախոսությունը դեռևս ոչ միշտ է ճիշտ ընկալվում: Դեռևս կարծիք կա, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան հիվանդ է, անօգնական, չի կարող սովորել հանրակրթական դպրոցում:
- Որոշ ծնողներ դեմ են իրենց երեխայի կողքին տեսնելու կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի:

- Կան դպրոցների շենքեր, որոնք լիարժեք հարմարեցված չեն այս երեխաների կարիքներին:
- Շատ դպրոցների կարևորագույն խնդիրը մնում է աշակերտներին ակադեմիական գիտելիքներով զինելը, ոչ թե նրանց պոտենցիալ հնարավորությունների բացահայտումն ու սոցիալականացումը:
- Դեռևս հստակ մշակված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գիտելիքների գնահատման սկզբունքները:
- Շատ ԿԱՊԿՈՒ երեխաներ գրանցված են ներառական դպրոցներում, սակայն նրանք դպրոց գրեթե չեն հաճախում, իսկ հաճախելիս դասերին հիմնականում չեն մասնակցում, այլ նրանց հետ աշխատում են միայն բազմամասնագիտական թիմի մասնագետները՝ լոգոպեդը, հոգեբանը, հատուկ մանկավարժը:

Կարևոր ենք համարում նաև նշել, որ խնդիրներ դիտվում են նաև ներառական կրթության բովանդակային հարցերում: Դրանցից մասնավորապես կանգ առնենք Անհատական ուսումնական պլանների (ԱՈՒՊ) վրա, քանի որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնական գործընթացը կազմակերպվում է վեջիններիս միջոցով: ԱՈՒՊ-ները կազմվում են դպրոցի բազմամասնագիտական թիմի կողմից՝ երեխայի կրթական կարիքը գնահատելուց հետո, մեկ ուսումնական տարվա համար: ԱՈՒՊ-ների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ.

- դրանց գերակշիռ մասը հին է, հիմնականում կազմված է երեխայի դպրոց ընդունվելու ամիթով, այ-

նինչ ԱՌԻՊ-ը պետք է արտացոլի երեխայի հետ աշխատող յուրաքանչյուր մասնագետի աշխատանքի պլանավորումը:

- դրանցում երբեմն նշված է ոչ հավաստի ինֆորմացիա երեխայի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ:
- նշված կրթական կարիքները հաճախ չեն համապատասխանում բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացության մեջ տրված կրթական կարիքներին:
- ԱՌԻՊ-ում նշված կրթական կարիքները ձևակերպված են սխալ, մասնագիտական տեսակետից ոչ գրագետ (օրինակ, ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարում՝ թեթև, չափավոր, ծանր, խորը: Մասնագետները գիտեն որ վերջինս վերաբերում է ոչ թե ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարումներին, այլ մտավոր հետամնացությանը):
- հաճախ ԱՌԻՊ-ում նշված և եզրակացության մեջ առաջարկված չափորոշիչները չեն համընկնում երեխայի զարգացման մակարդակի հետ:
- ԿԱՊԿՌԻ երեխաներից շատերը չունեն ԱՌԻՊ, ինչը անհասկանալի է, քանի որ անհնար է կազմակերպել

անհատական ուսուցում՝ առանց երեխայի հիմնախնդիրները սահմանելու, համապատասխան քայլերը առաջադրելու, տվյալ ուսումնական տարում յուրաքանչյուր ուսումնական առարկայի ուղղությամբ երեխայի կողմից յուրացվելիք գիտելիքների պաշարը մատնանշելու:

- Հաճախ ներառական կրթություն իրականացնող դպրոցների ԿԱՊ-ԿՌԻ աշակերտների ԱՌԻՊ-ները լրացված են նույն նպատակներով և քայլերով և հիմնականում միևնույն մարդու ձեռքով /ձեռագրով/, հիմնախնդիրների սահմանումը և դրանց իրականացման նպատակով սահմանված քայլերը հաճախ կարելի է հանդիպել տարբեր խնդիրներ ունեցող երեխաների մոտ, այլ կերպ ասած, դրանք իրենց բովանդակությամբ չեն համապատասխանում բուն նպատակներին:

Վերոնշյալ բացթողումների ու թերությունների վերացումը, իհարկե, մեծապես կնպաստի ներառական կրթություն իրականացնող դպրոցների զարգացմանը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր երեխաների՝ կրթության մեջ ներգրավմանը, նրանց համար ապահով միջավայրի և սոցիալականացման առավել մեծ հնարավորությունների ստեղծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մինասյան Ա.Մ. Դեֆեկտոլոգիայի հիմունքներ, Երևան, 1980, 261 էջ
2. Авакян А.В. Система специального образования в Армении, “Материалы международной научно–практической конференции «Специальное образование: пути развития за 20 лет независимости», Алматы 2012г.
3. Եսայան Ա. «Կրթական իրավունք»,–Երևան, 2011, 722 էջ
4. <http://www.edu.am>
5. <http://www.un.am/am/UNICEF>

ИНКЛЮЗИВНОЕ ОБРАЗОВАНИЕ: ДОСТИЖЕНИЯ И ПРОБЛЕМЫ

АРМЕНИИ АВАКЯН

Декан факультета специального образования Армянского государственного педагогического университета им.Х. Абовяна, кандидат педагогических наук, доцент

АРАКСЯ СВАДЖЯН

Преподаватель кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета им.Х. Абовяна, кандидат педагогических наук, доцент

В Армении дети с умственными и физическими нарушениями всегда были в центре внимания государства и народа. В статье представлена система инклюзивного образования, статистика зачисленности детей с особыми образовательными нуждами в процесс образования, проблемы инклюзивного образования и перспективы его развития в республике.

INCLUSIVE EDUCATION: ACHIEVEMENTS AND CHALLENGES

ARMENUHI AVAGYAN

*Dean of the Special Education Faculty after Kh. Abovyan
Armenian State Pedagogical University, PhD, Associate Professor*

ARAKSYA SVAJYAN

*Lecturer, Department of Special Pedagogy and Psychology after
Kh. Abovyan Armenian State Pedagogical University, PhD*

In Armenia, children with mental and physical disorders have always been in the center of attention of the state and nation. The system of inclusive education, the statistics of enrollment of children with special needs in the educational process, inclusive education problems and development perspectives in the Republic are introduced as well.

Keywords: inclusive school, individual educational plan, socialization, multiprofile team of specialists, educational needs of child, children with special needs.

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 4.03.14 թ

ՌՈՄԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ

Մարենադարանի ավագ գիրաշխարհող, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհաբանության ամբիոնի սահարենյուր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԱՆԱՀԻՏ ԶԻՉՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխարհաբանության ամբիոնի սահարենյուր, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՓՈՒԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Փոխարկերպվող հասարակության ժամանակաշրջանում ապրելով, մենք անմիջականորեն ու ակներև առնչվեցինք պետական այրերի՝ նեոկլասիկ տնտեսագիտությանը հարող այն մտածողությանը, որն «ատում է բյուջեի դեֆիցիտը և վճռականորեն հավատում պետական ծախսերը նվազեցնող մոտեցմանը» [8, էջ 10]: Այս մոտեցումն ուղղակիորեն իրագործվում է նաև սոցիալական քաղաքականության ոլորտում, որտեղ կոլեկտիվ պատասխանատվությունը կյանքի ծանր վիճակում հայտնված մարդկանց, նրանց բարեկեցության և սոցիալական ապահովության հիմնախնդիրների օպտիմալ լուծմանը այլևս պիտոյական և նախընտրելի չի համարվում, երբ հասարակության սոցիալական կարիքների համար պետական բյուջեի ծախսերը դառնում են **այնչափ նվազագույն**, որ սոցիալական ու հենց կարիքային հիմնախնդիրների լուծումը սկզբունքորեն դառնում է անհնարին: Այդ գործընթացը հատուկ է ոչ միայն Հայաստանին, ետխորհրդային պետություններին, այլ նաև տնտեսապես զարգացած երկրներին: «Համընդհանուր բարեկեցության հասարակության» գա-

ղափարախոսությունից հրաժարվելը հանգեցրեց «նպատների» հասարակության ստեղծմանը [8, էջ 10]:

«Սոցիալական աշխատանք» և «սոցիալական աշխատող» ինստիտուտի կայացման նախապատմությունը, ինչպես նաև ժամանակակից պատմությունը նկատելի է տալիս, որ հնուց ի վեր, իսկ ազգային պետությունների առաջացմամբ, այդ թվում նաև ժամանակակից շրջանում ու մեր տարածաշրջանում՝ հետխորհրդային ու նորաստեղծ ԱԳՀ-ի տարածքում առավել ընդգծվածությամբ, մարդկանց համատեղ կյանքում սկզբունքային իր կարիքի առումով մշտապես ունենալով ակտուալություն, տարբեր երկրներում այս ինստիտուտն իր ակտուալության ճանաչում ունեցել է տարբեր ժամանակներում: Անգլիայում այն նախնականորեն իր նախակերպարով, դեռ ոչ այժմյան անվանմամբ՝ որպես հենց «սոցիալական աշխատանք», սկսել է կազմավորվել արդեն XIX դ. և ուրեմն՝ փոքր-ինչ վաղ: ԱՄՆ-ում և եվրոպական տարբեր պետություններում՝ սոցիալական աշխատանքը, որպես առանձին մասնագիտական գործունեություն, ձևավորվել և հասարակու-

թյան մեջ մասնագիտությունների ցանկում իր ուրույն տեղն է հաստատել 20-րդ դարի սկզբում [6, էջ 290–293]: Խորհրդային Միությունում այդ ինստիտուտի կայացումը դարավերջի երևույթ է: Ժամանակային այդպիսի մեծ հեռակայքը կապված էր խորհրդային պետության սոցիալական քաղաքականության հետ, երբ «սովետական քաղաքացին» համարվում էր լիակատար պաշտպանված: Իսկ արդեն ժամանակակից իրականության մեջ սոցիալական աշխատանքը, որպես այդպիսին, ներկա է բազմադեմ և բազմաձևավալ գանազանությամբ: Ներկայում նրա գոյությունը հիմնավորված ու փաստված է՝

- արդի սոցիալական կյանքի անցուդարձով ու վայրիվերող ընթացքի օրինաչափություններով պայմանավորված՝ կարիքավորության բուն ֆենոմենի և այլապլ դրսևորումներով նրա հիմնախնդիրների խորության ու ծավալի աճով,
- մարդկանց ապրումներում դրանց հոգեբանական անդրադարձներով պայմանավորված տկարության, խոցելիության ու նաև արդեն վտանգվածության և երբեմն շեղված վարքի արտահայտություններով,
- հասարակական գիտակցությունում կարիքավորության ու մարդկային տկարությունների սոցիալականորեն նշանակալիության առավել խոր գիտակցմամբ,
- օրենսդրական դաշտում այդ կարիքավորության ու տկարությունների նկատմամբ սոցիալական հոգածության դիտավորության ու կատարումի պիտոյականության իրավաբանական ձևակերպմամբ [տե՛ս 1, էջ 16]:

«Սոցիալական աշխատանքն ուղղված է խոցելի կամ արդեն վտանգված՝ սոցիալական կյանքից տարանջատ-

ված անձանց, խմբերի կարիքային հիմնախնդիրների լուծմանն աջակցությա-
նը և հասարակական կյանքում նրանց վերստին ներգրավմանը» [2, 198]: Սոցիալական աշխատանքի ակտուալությունը մշտապես ընդգծված է նկատվում հասարակարգի և սոցիալական կյանքի փոփոխություններով լեցուն այնպիսի ժամանակաշրջաններում, երբ առավել չափով ու շեշտվածությամբ սոցիումի կյանքում գծագրվում են նրա անդամների՝ անձանց, խմբերի միջև խզումներ, կենցաղավարությունում ու նաև հոգևոր կյանքում անկարգավորվածություն ու անկում և այդ բոլորի հիմքում՝ **բազմաբնույթ կարիքավորություն** (տնտեսական, աշխատանքային ու դրամական, կրթական, առողջապահական, ...):

Հայաստանում հատկապես վերջին երկու տասնամյակներում սոցիալական աշխատանքը բուռն զարգացում է ապրել՝ իր դրսևորումների մեջ ունենալով խնդիրների բազմազանություն և բազմապլան ծավալում: Առհասարակ, աշխարհակարգի փոփոխման, նոր իրողությունների առաջացման և հաստատման հետ մեկտեղ փոխվում են նաև «նոր» աշխարհում մարդու մասնակցության հնարավորությունները և եղանակները, ինչը ենթադրում է նաև փոփոխություններ մարդկանց մտքերի ոլորտում՝ բանոլորտում: Գոյաշարժը, որն արտահայտվել էր նախկին աշխարհակարգի փլուզմամբ և նորի առաջացմամբ, ցնցել էր նաև մարդկանց մտքերը և բախում առաջացրել նոր իրողությունների նրանց ընկալումների ու նախկին աշխարհընկալման, աշխարհում մարդկային լինելիության կերպի՝ կյանքը, կենցաղավորությունը կազմակերպելու նախկինում հաստատված ձևերի միջև: **Սոցիալական գոյաշարժն** այսկերպ՝ սրությամբ ու հանկարծահաս, հասարակության կյանքում բացահայտե-

լով նաև սոցիալականորեն նշանակալի ներքին ու արտաքին **անպատրաստություն**, ըստ էության, ստեղծել ու առաջադրել էր «**փոխակերպվող հասարակության**» իրողություն ու **մարդկային ինքնության ու կենսակերպի բազմաբովանդակ խնդրակարգ**:

Վերջին 15–20 տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցող սոցիալական, տնտեսական փոխակերպումները դրականի հետ մեկտեղ ունեցել են նաև բացասական անդրադարձ հասարակության կյանքում, առաջ բերելով այնպիսի երևույթներ, ինչպիսին են՝ զանգվածային աղքատությունն ու գործազրկությունը [4, 183–197]¹, մարդկանց բարոյալքությունն ու արժեքանորմային համակարգի խարխլումը: Խորհրդային տարիներին ձևավորված և զարգացած ինստիտուցիոնալ ցանցը, որը բազմաճյուղ մասնագիտացված ծառայություններ էր մատուցում հասարակությանը, նույնպես հայտնվեց դժվարին իրավիճակում: Այս պայմաններում անհատ անձինք, խմբեր հայտնվեցին ծանր կացության մեջ: Լրացուցիչ ու առավել խորհրդածությունների մեջ է սուզում միտքը նշանակալի այն իրողությունը, որ փոփոխությունների այս բոլորապատույտում հայ ընտանիքը, որը դարեր շարունակ հանդիսացել է հասարակությունը, նրա արժեքային կողմնորոշումն ու համակարգը կայունացնող կարևորագույն գործոն, նույնպես հայտնվեց ճգնաժամի մեջ:

Մարդկային բնությանը սկզբունքորեն, ըստ յուրաքանչյուրի կարողության և գիտակցման, հատուկ է կարգավորված կենցաղավարության հաստատման

և, ըստ էության, ապրումներում, մտքերի ոլորտում, խոսքում ու գործերում այդ իսկ կարգավորվածության ներկայության ձգտում: Իսկ անընդհատ փոփոխվող կյանքի պայմաններում նախկինում հաստատում գտած գործունեության եղանակներն այլևս սպասելի արդյունքին չէին հանգեցնում, դառնում էին անկանխատեսելի, որը բերում էր մարդկանց մեջ ակտիվության նվազման, գործունեությունից հրաժարման: Արդյունքում մարդկանց մեծ բազմություն պասիվության մատնվելով, դառնում էր կյանքի բոլոր բաղադրիչներում (սոցիալական, տնտեսական, կրթական...) թեև իր պարադիգմային առումով՝ սկզբունքորեն ու նաև պատմականորեն ոչ այնքան նոր, բայց և՛ նախկինից տարբեր քաղաքականության, գործելաեղանակների, վարքի ու բարքի նորահաստատ իրողությունների ազդեցության **սոսկ կրողը**, կրավոր օբյեկտը, այլ ոչ մասնակիցը, հոգեբանորեն առանձնանալով ու անհադորդ դառնալով նորովի ձևավորվող սոցիալական կյանքին:

Սոցիալական կյանքում այդ ֆենոմենների խորացման հետևանքային դրսևորումները բազմազան են, և հաճախ հանգեցնում են ճգնաժամային, ստրեսային իրավիճակների՝ ընտանիքների, մարդկանց սոցիալական անապահովության, կարիքավորության, աղքատության և ավելին, երբեմն հոգեբանական և վարքային շեղումների, հիվանդությունների ու տկարությունների [5, էջ 107]²: Սոցիալական աշխատանքի Հայաստանում կայացման այս քննության առումով կարևոր է նշել, որ կան նաև տկարություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն սոցիալա-

¹ Ետխորհրդային պետություններում և հատկապես Հայաստանում «նոր» աղքատության և գործազրկության, նրանց առաջացման պատճառների և հաղթահարման ուղիների մասին մակրամասն վերլուծություն է կատարված Գ. Պողոսյանի աշխատությունում [տես 4, 183–197]:

² Որպես սոցիալական փոփոխված իրականության ցայտուն օրինակ, գրականության մեջ հաճախ քննարկվում է գործազրկության ֆենոմենը և նրա ազդեցությունը ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտի, անձի հոգեկան վիճակի և երեխաների՝ որպես առաքինի, կիրթ և ույալ անձեր կայացման վրա [տես 5, 107]:

կան կյանքում տեղի ունեցող փոփոխություններով, այլև տարիքային առանձնահատկություններով (երեխաներ և ծերեր), կյանքի ընթացքում ստացած վնասվածքներով կամ բնածին մարմնական, հոգեկան առողջության խանգարումներով:

Սոցիալական աշխատանքը մարդկային իրողություն է, գոյությունից ծնված ու մտածվող մի գոյացություն և, այդպիսով, կամայաժին և կամ մտացաժին (մականտաժական – Դավիթ Անհաղթ), սոսկ մտքի արգասիք և գոյությանը չառնչվող ֆենոմեն չէ: Այն իրապես գոյություն ունի և **գոյություն ունի հենց անձանց ու խմբերի սոցիալականորեն նշանակալի կարիքավորության ու տկարության ֆենոմենների վրա հիմնադրվածությամբ [8, էջ10], որ և ներկայանում է որպես սոցիալական աշխատանքի ուսումնասիրության և բուն գործունեության օբյեկտ**: Սա է սոցիալական աշխատանքի **օբյեկտայնությունը**, այլ կերպ ասած, **սոցիալական աշխատանքի ֆենոմենի գոյացման օբյեկտային հիմնավորվածությունը**: Սոցիալական աշխատանքի օբյեկտիվությունը, նախ և առաջ, նրա օբյեկտայնությունն է: Այսպիսով, կարելի է ասել, որ սոցիալական կյանքի մեջ տեղի ունեցող փոփոխությունների այժմյան իրողությունների համատեքստում իր առարկայականությամբ (օբյեկտայնությամբ) և կատարումով (դիտավորությամբ և ըստ այդմ՝ իրագործմամբ) սոցիալական աշխատանքը Հայաստանում արմատավորվել է և **գոյություն ունի օբյեկտիվ հիմնադրությամբ**¹:

¹ Սոցիալական աշխատանքի առաջացումը Մորալեսը և Շեֆորը կապում են հասարակությունում առաջացած այնպիսի երևույթների հետ, երբ բազմաթիվ դեպքերում շուկայական տնտեսության կամ քնտանիքի ռեսուրսները չեն բավարարում անգամ մարդկային առաջնային պահանջմունքները [տե՛ս 8, 10]:

² Հայաստանում սոցիալական աշխատանքի առաջացման տնտեսական և սոցիալ-քաղաքական դրդապատճառների մասին տե՛ս [6, 92–93]:

Իսկ ի՞նչն է կազմում սոցիալական աշխատանքի **կատարումի** բովանդակությունը: «Կատարում» ասելով, պետք է հասկանալ սոցիալական աշխատանքի և՛ նպատակը, և՛ ըստ այդմ իրագործումը: Սոցիալականորեն նշանակալի կարիքավորության հիմնախնդիրներն իրենց լուծումն են գտնում **աջակցության** ուղիով: Նկատենք, որ կարիքավորության բազմաբնույթ՝ հոգևոր ու նյութական, լինելը, բազմազանությունն ու խորությունը իրենցով նույնականորեն պայմանավորում են նաև աջակցության առանձնահատկությունները: **Աջակցությունը հարկ է հասկանալ և իրագործել կարիքավորությանն աղեկվատությամբ**: Սոցիալական աշխատանքի պրակտիկան նկատել է տալիս, որ Հայաստանում աջակցությունը ևս, ըստ կարիքավորության, **անհրաժեշտությամբ ու նաև նախընտրելիությամբ** կյանքի է կոչված երկբնույթ՝ հոգևոր ու նյութական, որակային ու քանակային նպատակային խնդիրներով և դրանց տարատեսակ, բազմաչափ խորությամբ ու ծավալով՝ երկարաժամկետ կամ կարճաժամկետ գոյականությամբ: Թեև պետք է նաև խոստովանել, որ ոչ միշտ է այն իրագործվում **ըստ անհրաժեշտ** ու նաև ավելին՝ հենց **նախընտրելի պիտոյականության**:

Կարիքավորության զանազանությամբ ու խորությամբ պայմանավորված՝ Հայաստանում առաջացել են սոցիալական շերտեր ու խմբեր, որոնք անտեսված ու արհամարհված են պետական և հասարակական **կարիքին համաչափ անհրաժեշտ ու բարեկարգության ուղենպաստ հոգածությունից**: Իրենց կենսակերպում՝ ոչ սոսկ կենսապահովման, այլև արդեն բովանդակ կենցաղապահովման հիմնախնդիրներում **սոցիալականորեն և նույնիսկ քաղաքակրթորեն նշանակալի կարիքավորություն** ունեցող սո-

ցիալական խմբերի մեջ կան այնպիսիք, որոնք ակներևաբար ունեն **նյութական և հոգևոր ու կրթական աջակցության կարիք**: Այս առումով անհրաժեշտ ու նաև նախընտրելի է դիտվում հոգաձույթյան ու աջակցության կոչված պետական կառույցների ու նաև ոչկառավարական կազմակերպությունների համար՝ կարիքավորության հաղթահարման և մարդկային ինքնության, բազմաբովանդակ կենսակերպի կայացման հիմնախնդիրներում **բարեկարգության ուղղորդված իրենց գործունեության դիտավորության** և ըստ այդմ՝ կայունորեն դիմամիկ ու ոչ երբևէ ստատիկ, ներքուստ առավելացող կատարելագործմամբ՝ այդ գործունեության **կերպարանումի**, այն է՝ նյութական, հոգևոր ու մարդկային ռեսուրսների նախատեսման ու աշխատանքային կարգի սահմանման ու այդ ամենի՝ **կարիքավորության համեմատ** նաև հետագա կորեկցիայի և, վերջապես, գործունեության բուն **կատարումի** մեկ-միասնական խնդրակարգի լուծման տեսությունում ու պրակտիկայում նկատի ունենալ **բազմապլանություն**:

Սոցիալական աշխատանքի պրակտիկ փորձառությունը ցույց է տալիս, որ գործնականում հանդիպում է նաև այնպիսի կարիքավորություն, որի դեպքում հնարավոր չէ **բարենպաստ** լուծումների հասնել, անգամ երկարատև ծրագրերի պարագայում, եթե սոցիալական աշխատանքը կողմնորոշվի իր կերպի ու չափի մեջ՝ միմիայն **մասնավոր աջակցության** և ոչ երբեմն՝ **կարիքին համապատասխան այնչափ կենսա- ու կենցաղա-նպաստ հոգաձության**, երբ սոցիալականորեն նշանակալի կարիքավորություն ունեցող անձանց ու սոցիալական խմբերին հնարավորություն է ընձեռնվում որոշակի ժամանակահատվածում թոթափել ընտանիքի հանապազօրյա հացը հոգա-

լու ճգնաժամային ու անհնարին դարձած խնդրի բեռը, ձերբազատվել անզորությամբ պաշարվածությունից և արդեն **կարեկից գորակցության պայմաններում**՝ ի գործու լինել իրենց ներքին ռեսուրսներն ու հոգևոր ուժերը համախմբել նաև այլ ուղղությամբ՝ վերամասնագիտացման ու այլ աշխատանքի, ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտի բարելավման համար ուղիներ փնտրելու, անմիջական շփման ու այլ կերպ ևս հնարավոր հաղորդակցության ունակություններն ու շրջանակներն ընդլայնելու, մտահորիզոնում (մտքի տեսադաշտում) ու նաև մտածելակերպում փոփոխությունների անհրաժեշտությունը գիտակցելու և ինքնակազմակերպվելու նպատակով:

Նկատվում է անհրաժեշտություն ու նախընտրելիություն՝ պետական և ոչ կառավարական կառույցների ծրագրերի շրջանակում նկատի ունենալ **կարիքավորությանն ադեկվատ սոցիալական աշխատանքի** հետ համատեղ, նույն այդ սկզբունքի համաձայն՝ իրագործել նյութական աջակցություն ևս: Հարկ է նաև, որ այդ ծրագրերի նյութական և հոգևոր, կրթադաստիարակչական աջակցությունը նպատակաուղղված լինի անձանց, խմբերի, համախմբությունների կարիքավորության հիմնախնդիրներում **մարդկային ինքնության ու համակեցության հոգևոր վերափոխմանը, մշակութորեն ներկրթյալ և այսու՝ քաղաքակիրթ կենսակերպի, միով բանիվ՝ բարեկարգ գոյության կայացմանը**, քանզի **կարիքավորության** և ուրեմն՝ **խոցելիության** և նույնիսկ արդեն **վտանգվածության** իրավիճակից դուրս գալու համար «պետք են և՛ բարոյական, և՛ ինտելեկտուալ, և՛ նյութական ներդրումներ, որոնք չունևոր կամ կարիքավոր անձանց մեծ մասն իրենց թույլ տալ չեն կարող»[3]:

«Սոցիալական աշխատանքը գոյու-

թյան է կոչված հասարակության կյանքում բարեկարգության հաստատման կարիքով և դիտավորությամբ» [1, էջ 20]: Սոցիալական կյանքում ընդհանրապես (կայուն թե փոփոխվող) անձանց և խմբերի տարիքային առանձնահատկություններով, ինչպես նաև փոփոխությունների ժամանակաշրջանում այլապես պատճառներով առաջացող կարիքավորության և տկարության վերը նշված ֆենոմեններով պայմանավորված սոցիալական մասնատվածության և սոցիալական կյանքից մեկուսի անդամների, խմբերի վերստին ու նորովի **մասնակցականության մեջ հաստատվելու**, այդ ընթացքում նրանց նվազագույն անհրաժեշտ **կարիքները հոգալու և աջակցության** խնդիրները, այս կամ այն ծավալով, տարբեր մոտեցումներով ու ձևերով դառնում էին ինչպես պետության, այնպես էլ՝ հասարակական կազմակերպությունների հոգածության առարկան: **Այդ հոգածության նպատակային կազմակերպված ձևերը, որոնք իրագործվում են անմիջական հաղորդակցությամբ, իրականացվում են հենց սոցիալական աշխատանքի միջոցով:**

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ սոցիալական աշխատանքի գոյությունը Հայաստանում ունի նաև **ծավալվող** միտում: Ինչո՞վ է այն պայմանավորված: **Կարիքավորության բազմատեսակ դրսևորումներն և հասարակության մեջ դրան կարեկից ու աջակից պատասխան-արձագանքը, լինի դա պետական կառույցների, թե՛ հասարակական կազմակերպությունների կողմից, պայմանավորում են սոցիալական աշխատանքի բազմադեմ ծավալումը:** Արձանագրենք, որ սոցիալական աշխատանքի ծավալվող գոյութենականությանը հատուկ է **տարաբնույթ բազմազանություն:** Նրա տարաբնույթ բազմազանությունը,

կախված դիտավորությունից (նպատակից) և ընտրված օբյեկտից, առկա է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր այժմյան հասարակական կյանքում՝ իր կայացման մեջ բացահայտելով ոչ սուկ այլոց փորձի ներմուծում, այլ **ստեղծագործական ներուժ և դրսևորում:**

Սոցիալական աշխատանքի ծավալումն ու զարգացումը ակտուալ էր դարձրել մասնագիտական կրթության, ինչպես նաև առավել սահմանափակ ժամկետներում մասնագիտացման ու անհրաժեշտ կադրերի պատրաստման կարիքը, որը և իրականացվում է վերջին երկու տասնամյակի ընթացքում: Նշված ՀԿ-ներն իրենց մասնաճյուղերն ունեն նաև մարզերում և գործունեություն են ծավալել Հայաստանի նաև այլ քաղաքներում: Սոցիալական աշխատանքի ակտուալությունը վերաճել է **մասնագիտական կրթության անհրաժեշտության**, և կարելի է արձանագրել, որ ոչ միայն արտերկրում, այլև հայ իրականությունում նույնպես սոցիալական աշխատանքն իր դրսևորումն ու հաստատագրումն է ստացել արդեն նաև մասնագիտական կրթության մեջ՝ կայանալով որպես **ուսուցակարգ:**

Հայ հասարակության մեջ անձանց, ընտանիքների, խմբերի տարիքային առանձնահատկությունների ու կարիքների և՛ ծավալով, և՛ զանազանությամբ պայմանավորված՝ սոցիալական կյանքի ասպարեզում այս տարիների ընթացքում ի հայտ են եկել և սոցիալական աշխատանքի ընդգրկմամբ ծավալուն ու տարաբնույթ գործունեություն են իրականացնում բազմաթիվ ու բազմադեմ հասարակական կազմակերպություններ: Այժմ գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ և նրանց, ինչպես նաև պետական, կառուցվածքներում սոցիալական աշխատանքն ընդգրկված է որպես անհրաժեշտ բա-

ղաղրատարք: Գործող հասարակական կազմակերպությունների շարքում, սոցիալական աշխատանքի ներգրավման և ծավալման առումով, կարելի է ընդգրկել ոչ բոլոր հասարակական կազմակերպությունները: Մասնագիտական ծավալուն սոցիալական աշխատանք են իրականացրել «Առաքելություն Հայաստան», «Օրբան», «Փյունիկ», «Հույսի կամուրջ», «Զանգակատուն» ԲՀԿ-ները, «ՄՈՍ մանկական գյուղեր»-ը, MSF-ը, ՀՕՖ-ը, “World Vision”-ը և այլն:

Էական է նաև նկատել, որ ինչպես բազմաթիվ այլ երկրներում, այնպես էլ Հայաստանում սոցիալական աշխատանքի տարաբնույթ բազմազանությունն իրագործվում է ոչ միայն որպես անձանց, խմբերի, հանրության ինքնության ու համակեցության տարատեսակ, **կոնկրետ ու մասնավոր կարիքավորությանը** համապատասխան իր կազմակերպվածության նպատակային կոչվածության ու ձևերի պրակտիկորեն բազմատեսակ և նույնպես կոնկրետ դրսևորումներով: Երկբնույթ իր արտահայտություններում՝ և՛ հոգևոր, և՛ նյութական, կարիքավորության զանազանությունը, համատարած լինելը և յուրաքանչյուր իր տեսակում թեթևի հետ նաև ծանր ու խորացած դրսևորումները անհրաժեշտ են դարձրել որպես **սոցիալականորեն նշանակալի դիտել** ոչ միայն **կոնկրետ կարիքը**, այլև սկզբունքորեն **կարիքը որպես այդպիսին**, այսինքն՝ **ընդհանուր կարիքը** կամ **ընդհանուր կարիքավորությունը**: Կարիքավորության ներկայացածության կոնկրետությունից բացի արդեն նաև **«ընդհանուր կարիքավորության» իդեան**, որ և կնշանակի՝ **ընդհանուր գոյք**, որպես ուշադրության, ապա նաև հասկացող հոգածության և պատասխան-արձագանքի անհրաժեշտ ու պիտոյական ճանաչելը սոցիալական աշխատանքի

գոյութենականությանը տարաբնույթ բազմազանություն է հաղորդում ոչ միայն որպես այնպիսի ֆենոմեն, որն արտահայտում է սոսկ **գործունեության կերպ** և նույնիսկ կոնկրետ գործելակերպ կոնկրետ կարիքի առնչությամբ, այլ նաև որպես **գիտություն**:

Այս առնչությամբ նկատենք, որ սոցիալական կյանքում տեղի ունեցող դինամիկ փոփոխությունների շրջանում կարիքավորության խորացմանը որպես պատասխան արձագանք **սոցիալական աշխատանքի ֆենոմենի կայացման** վերաբերյալ ասված այս ամենը նկարագրում և մտակերպում են դեռ ոչ առանձնակի՝ **անհատական ու անկրկնելի մի իրողություն**: Այստեղ էական է հիշատակել, որ սոցիալական և պատմական գիտություններում, ըստ Վ. Դիլթայի, որպես հետազոտության սկզբունքային օբյեկտ ու նպատակ է դիտվում մշակութային ու սոցիալական իրողությունների գոյավորության մոդուսին բնորոշ նկատվող առանձնակիությունն իր եզակիությամբ ու անկրկնելիությամբ: Սակայն, այլ է և մեզ ընդունելի՝ Վ. Դիլթայի հերմենևտիկայի մեթոդաբանական հայեցակարգից՝ էականորեն նշանակալի լրացումներով տարբերվող՝ Մ. Վեբերի տեսակետն այս խնդրի վերաբերյալ: Նրա «հասկացողական սոցիոլոգիայի» հայեցակարգում «իդեալական տիպ» հասկացության միջոցով հասկացման ենթակա են դառնում տվյալ կոնկրետ սոցիալական իրողությունը որակապես իդենտիֆիկացնող և ուրեմն՝ որոշիչ առանձնահատկությունները՝ այլ կոնկրետ սոցիալական իրողությունների հետ իր ընդհանրության իրագործվածությամբ ու նաև հետագայում ևս ընդհանրանալիության պոտենցիալով: Մույն հրապարակման մեջ փոխակերպվող հասարակությունում սոցիալական աշխատանքի

կայացման վերաբերյալ ասվածում նկարագրվում է որոշ գծերով **համընդհանուր ֆենոմեն**, ինչը որպես այդպիսին ու նաև որպես միտում ու սոցիալական դինամիկա՝ բնորոշ է ետխորհրդային տարածքում առաջացած նորանկախ պետությունների ազգային-ժողովրդական հանրակեցությանը, այդ թվում՝ նաև հայ իրականությանը:

Սոցիալական աշխատանքը գործ ունենալով **կարիքավորության և տկարության ֆենոմենների** հետ, նախ և առաջ ուսումնասիրում է դրանք, և վերջիններիս հասկացումն ու բացահայտումը, վերլուծությունն ու գնահատումը չի մնում միայն որպես սոցիալական աշխատող անհատ անձի անհատական **փորձառություն**, ինչը մասնավոր գիտելիք է, ոչ միշտ փոխանցելի ուրիշների, այլ՝ այդ բոլորը վերաճել և ձևակերպելի են արդեն որպես **«ընդհանուր կամ ընդհանրական գիտելիք»**, ինչը նշանակում է, որ այն այնպիսի գիտելիք է, որը կարելի է **փոխանցել և ուսուցանել**: Սոցիալական աշխատանքն այսպիսով սուկ փորձառություն չէ, այլ՝ ձեռք բերելով **ընդհանուր գիտելիքի** կարգավիճակ՝ գիտություն է և կամ արվեստ, ուսուցանելի այլոց, որով և՛ կայացել ու կայանում է որպես **գիտակարգ**: Այսպիսով, իր գործուն ծավալման և փաստականացող հաստատագրության գործընթացում սոցիալական աշխատանքն արդեն իսկ գտնվում է կայացման այն փուլում, որ կարելի է անվանել ինքնագիտակցում և կամ ինքնահասկացում, ձևակերպվելով նաև որպես առանձին գիտաճյուղ կամ գիտակարգ: Այսպիսի կարգավիճակով այն իր ներկայությունն ունի ոչ միայն արտերկրում, այլև հայ իրականության մեջ: Սոցիալական աշխատանքը գտնվում է այն փուլում, երբ նրա թեմատիկայով գրվում են և կգրվեն գիտական աշխատություններ՝ մենագրություններ,

հոդվածներ ու նաև դասագրքեր:

Կարելի է ասել, որ այժմ արդեն վեր բարձրանալով իր գիտականության էմպիրիկ կարգավիճակից, այն իր բովանդակությամբ այլևս գործնական իր պրակտիկայի փաստերի կապակցվածությունների մեջ տեղ գտած օրինաչափությունների սուկ **«դիտարկումների հավաքածու»** չէ: Սոցիալական աշխատանքն էմպիրիկ կայացման մեջ ձեռք բերած իր փորձառությամբ, ներքին կարիքով տեսականացվում է, ներընդգրկվում գիտական խորհրդածությունների ու քննության ոլորտում, դառնում հասկացման և մեկնաբանության թեմա: Այն հասկացման և մեկնաբանության մեջ ներառնվում է և՛ որպես նյութ՝ առարկայական տիրույթ, որի հետ գործ ունի գիտականորեն տեսաբանող միտքը, և՛ որպես կատարում՝ թեմականացնող դիտավորություն ու իրագործում, այսինքն՝ «սոցիալական աշխատանք» կոչվող գիտական գիտելիքի և հենց գիտակարգի կայացում:

Մեկ հարյուրամյակի ընթացքում նշանակալի աշխատանք է կատարվել սոցիալական աշխատանքի, որպես առանձին մասնագիտական գործունեության, վերլուծության ոլորտում, իսկ վերջին տասնամյակներում գիտական հետազոտություններում առավել ընդգծվածությամբ քննության է առնվում նաև նրա արդեն որպես ինքնուրույն սոցիալական գիտություն կայացումն ու ժամանակակից ներկայությունը: Սոցիալական աշխատանքի տեսական և գործնական բաղադրիչների վերաբերյալ գոյություն ունեցող գիտական քննարկումները շարունակական ընթացքի մեջ են, ինչը կնշանակի նաև, որ սոցիալական աշխատանքը գտնվում է առանձին գիտակարգ կայացող ներքին իր ընթացքի մեջ: Հարկ է նաև նշել, որ սոցիալական աշխատանքը համեմատաբար նոր գիտակարգ է, և

նրա վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առավելապես գերակշռող են նկատվում նկարագրական և վերլուծական մեթոդները: Համեմատաբար ավելի քիչ ու հազվադեպ են քննադատաբար վերլուծություն իրականացնող աշխատանքները, որոնցում միմյանց հետ համեմատությամբ, տեսակետների մեջ բանավեճի, գաղափարների ժառանգմամբ, լրացմամբ կամ մերժմամբ, քննադատաբար են ներկայացվում տարբեր, ճանաչված հեղինակների սոցիալական աշխատանքի ոլորտում հայտնի դարձած հայեցակարգերը, ինչը սովորաբար տեղի է ունենում գիտակարգերի պատմականորեն կայացող զարգացման ընթացքում՝ որպես գիտություն իրենց գոյությունը ինքնագիտակցելու փուլում:

Հայաստանում գործառնող ՀԿ-ների և պետական կառուցվածքների կողմից սոցիալական աշխատանքի վերաբերյալ կուտակված փորձը քանակականորեն ծավալուն է, որակականորեն բազմաբնույթ, և արդեն նկատելի է այդ փորձառության գիտական հետազոտության կարիքը: Հետազոտություններում կարելի է ու նաև նախընտրելի է ներկայացնել, թե ինչպես էին առաջանում խնդիրները, դրանց լուծման ստեղծագործական մոտեցումները, խմբային քննարկումները, որոնց ընթացքում, քննության առնելով հնարավոր լուծումների սպեկտրը, սոցիալական դեպքերի առնչությամբ ընդունվում էին տվյալ պահի ու խնդրի ակտուալությանը նպատակաուղղված լուծումներ, ինչպես նաև ռազմավարական բնույթ կրող վերջնական լուծումներ:

Սոցիալական աշխատանքի շարունակական կայացման համար ակտուալ անհրաժեշտություն է **կուտակված պրակտիկ փորձառության գիտականորեն հասկացումը, մշակումը, մեկնաբանությունը և, այսպիսով, որպես արդեն ընդհանրական դառնալի գիտելիք՝ ու-**

սուցանելի և ուսուցակարգ, փոխանցումը միմյանց՝ ընթերցել ու հասկանալ ձգտող ամենքին: Սոցիալական աշխատանքի «ինքնագիտակցման» և որպես գիտակարգ շարունակական կայացման ու զարգացման բոլոր փուլերում էական է ոչ միայն կազմակերպությունների խմբագործ, այլ՝ այդ ամենում նաև անձնական, անհատական փորձառության հասկացմամբ և, ըստ էության, **գիտական հասկացություններում այդ հասկացվածության ներկայացմամբ** ընթերցող մտքի ուշին հանդիման կացուցանել մարդկային ինքնության կեցողության և այլոց հետ համակեցության համար սոցիալական աշխատանքի առումով էականորեն նշանակալին: Կարելի է ամրագրել, որ ժամանակակից փուլում **սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյությունը ներկայանում է որպես եռամիասնություն՝ գիտություն, մասնագիտական արվեստավոր գործունեություն և ուսուցակարգ:**

Սոցիալական աշխատանքում, ինչպես և այլ սոցիալական գիտություններում, անհրաժեշտորեն առաջանում է սոցիալական իրողությունների ու փաստերի հասկացման ու մեկնության խնդիր: **Սոցիալական աշխատանքը կայանում է անձանց, խմբերի... սոցիալականորեն նշանակալի կարիքավորության հասկացմամբ ու մեկնողաբար բացորոշմամբ և ըստ այդմ՝ աջակցության իրագործմամբ:** Եվ էական առանձնահատկություն է նաև այն, որ սոցիալական աշխատանքը որպես այդպիսին կայանում է **անմիջական հաղորդակցությամբ:** Սոցիալական աշխատանքի գոյության այս իրադրությունից, դիտավորության ու կատարումի խնդրակարգից կարելի է նկատել, որ **հասկացման, ինքնահասկացման, փոխհասկացման ու մեկնաբանության խնդրակարգը** սկզբունքորեն ներհյուսված է սոցիալա-

կան աշխատանքում ու նրա կայացման համար ունի հիմնարար նշանակություն: **Հերմենևտիկան որպես հասկացման ու մեկնաբանության տեսություն և հենց մեկնագիտություն**, հումանիտար և սոցիալական ֆենոմենների հետազոտությունների ոլորտում արդեն իսկ ճանաչված է որպես **համընդհանուր մեթոդաբանություն** (Վ. Դիլթայ, Մ. Վեբեր, Ա. Շյուց և այլոք) և նույնիսկ **ունիվերսալ փիլիսոփայական հայեցակարգ** (Հ.-Գ Գադամեր, Պ. Ռիկյոր): Հասկացումը չի իրականացնում խնդրո առարկային արտաքու և նրանից տարբեր խնդիրների հետամուտ մոտեցում, որ հատուկ է նկատվում ինքն իրեն միտող, իրենում պարփակված, ինքնանպատակ և միայն քննադատականությունը արդեն իսկ դրական ու ինքնաբավ համարող՝ սուկ «գիտականակերպ» մտածումին: «Հասկացող» և՛կան «հերմենևտիկական» մոտեցումն առավելապես նկատի ունի հետազոտվող ֆենոմենի տեսության ուսումնասիրությունը «ներսից» և հետամուտ է տվյալ ֆենոմենի «**իսկության բացորոշում**» ներկայացող տեսության **ներքին** հարցադրումները, կառուցվածքն ու նշանակալիությունը բացահայտելու դիտավորության և ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի խնդրակարգին:

Սոցիալական աշխատանքի ֆենոմենի՝ և՛ որպես մասնագիտական արվեստավոր գործունեության տեսակի, և՛ որպես գիտության, ինչպես նաև այդ ոլորտին վերաբերող տեսությունների քննական վերլուծության, ըստ էության, **անհայտ, բայց և հասանելի որոնելի** բացահայտման ու ներկայացման համար որպես «բանալի» են «հասկացման» ու «մեկնաբանության» մեթոդները, ուստի և հերմենևտիկան՝ որպես հասկացման արվեստի տեսություն կամ մեկնագիտություն: Սոցիալական հետազոտություն-

ների ոլորտում դեռ XX դ. սկզբից նկատելի դարձած կարիքներից է, ուստի և այդ կարիքի տեսանկյունից նույնպես ակտուալ՝ սոցիալական և հումանիտար գիտությունների համընդհանուր մեթոդաբանություն և նույնիսկ ունիվերսալ փիլիսոփայական հայեցակարգ ճանաչվող հերմենևտիկայի կոնկրետ կիրառությունը, որն իրականացվում է արտերկրի ու նաև հայ մասնագետների գիտական աշխատություններում այնպիսի սոցիալական ու հումանիտար ֆենոմենների նկատմամբ, ինչպիսին են սոցիալական աշխատանքը, սոցիոլոգիան և բարեգործությունը, պատմությունը և այլն: «Իսկության հերմենևտիկայի», նույն է թե՛ ասել՝ իսկության բացահայտմանը հետամուտ մեկնագիտության, հայեցակարգով իրականացված հետազոտություններն իրենց խնդրո նյութի քննությունը, այն է՝ **սոցիալական աշխատանքի որպես այդպիսին գոյության իսկության բացորոշումը**, ինչպես նաև բարեգործական կոնկրետ ծրագրերի կամ պետական կառույցների գործունեության ու դրանցում այլևայլ իր մոտեցումների ու մոդելների մոդուսներով իրագործված «սոցիալական աշխատանք» ֆենոմենի հասկացումը, քննական վերլուծությունն ու մեկնողաբար ներկայացումը իրագործում է ներսից [տե՛ս 1]: Հերմենևտիկայի հայեցակարգով խնդրո նյութի ուսումնասիրությունն իրականացնելով «ներսից», բացորոշելի է դառնում ուսումնասիրվող ֆենոմենների գոյության իսկությունը և հնարավորություն ընձեռնվում ճշմարտությամբ բացահայտել, թե՛ արդյո՞ք համապատասխան է սոցիալական աշխատանքի ու բարեգործական ծրագրի գործունեության պոտենցիան և ակտուալացած գոյությունն իրենց սկզբունքային դիտավորությանը, ինչպես նաև այդ ֆենոմենների ակտուալացած գոյությունը՝ իրենց պոտենցիային:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Զիջյան Ա., Քոչարյան Ռ. (2009), Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը». «ԴԱԼԼ», Երևան:
2. Զիջյան Ա. (2013), Սոցիալական աշխատանքի որպես գիտության սահմանման որոշ յուրահատկությունները – Փիլիսոփայությունը արդի աշխարհում, գիտաժողովի կյուրթեր, «Եվրոպրինտ», Եր., 2013, էջ 198–205:
3. Муздыбаев К. Переживание бедности как социальной неудачи: атрибуция ответственности, стратегии совладения и индикаторы депривации. <http://www.nir.ru/sj/sj/sji-a/muz.html>
4. Погосян Г. А., Современное армянское общество: особенности трансформации. М.: «Академия», 2005.
5. Социальная работа, под ред. В. И. Курбатова. «Феникс», Ростов на Дону, 2000.
6. Healy L. M., (2001), International social work. Oxford University Press.
7. McDonald C. (2006), Challenging Social Work. The institutional context of practice. Palgrave Macmillan, London.
8. Morales A. T. & Sheafor B. W. (1992), Social work. A profession of many faces., Boston.

SOCIAL WORK IN TRANSFORMING SOCIETY

ROMIK KOCHARYAN

*«Matenadaran», Senior Researcher, P hD in Philosophical Sciences
Assistant of the Chair of Sociology and Social work, ASPU after Kh. Abovyan*

АНАНИТ ЖИЖЯН

ASPU after Kh. Abovyan, Chair of Sociology and Social Work, Assistant, Ph. D

The paper are reveals the specificities of formation and presence of social work in the “transforming society” of the Republic of Armenia. In contemporary Armenia the existence of the social work as such is present in three modes as professional activity, as educational discipline and also as a science.

СОЦИАЛЬНАЯ РАБОТА В ТРАНСФОРМАЦИОННОМ ОБЩЕСТВЕ

РОМИК КОЧАРЯН

*«Матенадаран», ст. науч. сотр., к.ф.н. ассистент кафедры
социологии и социальной работы АГПУ им. Х. Абовяна*

АНАИТ ЖИДЖЯН

АГПУ им. Х. Абовяна, кафедра социологии и социальной работы, ассистент, к. ф. н

В данной статье выявлены особенности формирования и присутствия социальной работы в «трансформационном обществе» РА. В современной Армении социальная работа присутствует в трёх ипостасях: как профессиональная деятельность, как обучающая дисциплина и как наука.

Հորվածի ներկայացման փուլերից [ը] 06.03.14 թ.

SCOTT WURDINGER

Professor of Minnesota State University, Mankato, USA

RUDOLPH JENNIFER

Professor of Minnesota State University, Mankato, USA

TEACHING IMPORTANT LIFE SKILLS THROUGH PROJECT BASED LEARNING

US high schools appear to measure success according to the number of students admitted into four-year institutions each year. Although this is one measure, there are some schools that focus on developing important life skills needed to become productive members of society. Online surveys were sent out to alumni, students, teachers, and parents to a student-centered charter school in Minnesota to explore definitions of success and determine if this school teaches life skills. One hundred and forty-seven surveys were collected from these four groups. Life skills such as creativity (94%) and ability to find information (92%) were ranked much higher than academic skills such as test taking (33%) and note taking (39%). Academic skills ranked low, yet 50 percent of the alumni polled graduated from college, which is considerably higher than the national average (39%). To further enhance the learning at project based learning schools, educators should provide opportunities for students to practice academic skills such as note taking and test taking so that students who plan to attend college will be better prepared. The research in this study showed that this school is excellent at teaching important life skills that help students succeed in college, and in life in general.

Keywords and expressions: charter schools, EdVisions, school reform, small schools

Mainstream US public high schools often measure success based on acceptance rates into post-secondary education institutions each year, while the less successful students are encouraged to pursue jobs after graduation (Bushaw, 2007). This measurement of success relies heavily on students' abilities to do well on college entrance tests, which typically require fairly high scores for admittance into undergraduate programs. Although college admittance is one way to measure high school success, other schools using innovative approaches to learning are reexamining what it means to be successful after graduating from high school. It is our assumption that schooling should be about more than academic skill development, and should focus on teaching important life skills such as creativity and problem solving that will help students become successful community members after they graduate from high school. This research study focuses on one school that has a broad view of success. Minnesota New Country School (MNCS), located in Henderson, Minnesota (50 miles southwest of

Minneapolis), uses project-based learning (PBL) as its primary teaching method. MNCS has a national reputation in the United States for designing their entire curriculum on PBL and was chosen for this study because of their emphasis on self-directed learning. MNCS's view of success is broader

than its traditional counterpart, and attempts to teach students important life skills that are needed to be productive members of society, regardless of whether they attend college or not. In 1994 EdVisions Cooperative was created alongside MNCS for the purpose of “creating a professional association of teacher/owners that contract with a school board to supply a learning program. It is based upon true site-based management and dynamic and flexible decision-making” (EdVisions, 2008). MNCS gained national attention in 2001 when the Bill and Melinda Gates Foundation awarded a grant to the original creators of MNCS to replicate the school. It was at this point that EdVisions, Inc., a non-profit organization was formed to oversee the replication process. Since 2001 EdVisions, Inc. has created over 45 schools across the US modeled after its flagship school. MNCS consists of grades 6–12 (11–18-year-olds), with a total of 109 students and eight advisors and eight teaching assistants (Study of the Minnesota New Country School, n.d.). Students who attend this school are from southern Minnesota usually within a 40-mile radius. They come from wide-ranging socio-economic backgrounds. Dee Thomas, lead teacher at the school who is responsible for collecting student data on family income, mentioned that the number of students at or below poverty as defined by the state department of education has ranged from 21 to 35 percent over the past 15 years. She also mentioned that the school is situated in a “proud farming community” where parents would be embarrassed to fill out income levels and so she believes the numbers are probably closer to 50–60 percent (D. G. Thomas, personal communication, 12 December 2008). The school consists of a large open room with several pods of computer workstations. Each pod

has 15–18 computer workstations, similar to what one would observe in a work environment, and each pod has one advisor. Students do much of their work at their computers, however there are several other rooms connected to the large open room where students can do specialized work such as design and build construction projects, record music, and grow plants to name a few. There is also a stage used for theater performances and project presentations. The project process consists of filling out a project proposal form, negotiating the details of the project with an advisory committee, doing the project, and presenting the project to the advisory committee. Much of the time students work alone on their own projects, primarily because of their own specific interests, however students are allowed to collaborate when they have similar interests in a project. Projects are broad ranging and have included designing museums, developing software programs, designing claymation characters, creating videos, and creating documentaries through pictures (Newell, 2003). Depending upon their complexity, these projects may take a few days or several months to complete. When students finish a project they demonstrate their level of understanding by doing a presentation for their advisory group consisting of peers, advisors, community members, and parents. After the presentation, advisors and students discuss what curriculum state standards have been met through the project, and how many credits they will receive for their work. Students must complete all of the state standards so they are provided a copy of the standards and asked to be mindful of how they will complete all the standards through their projects. Students move through this process at their own pace and finish their high school edu-

cation when they have met all the mandatory state standards. Advisors work closely with students to make sure that all standards have been addressed through their project work. Some students graduate earlier than their traditional counterparts and others graduate later. MNCS's approach to learning is quite different than the lecture format used by many schoolteachers, because with PBL, students take control of their own learning by choosing projects that are relevant and meaningful to their own lives. The theoretical underpinnings of the project method rely heavily on Dewey's (1938) "pattern of inquiry". The pattern of inquiry consists of six steps, however Dewey's explains that his theory is similar to the scientific method and highlights four basic steps (pp. 101–19). He explains that a relevant problem (step one) causes perplexity and desire to find an answer, which is then followed by creating a plan (step two), testing the plan against reality (step three), and reflecting on its worth (step four). The planning and testing phases of this learning process are critical to project based learning. Designing and building projects require students to solve problems and test out their ideas to determine solutions. Responding to instructor questions and reciting back information, which is a common teaching method in traditional education, allow students to talk, but learning becomes inspirational and exciting when students create plans to build projects and test them against reality. Creating a website, building a learning portfolio, performing an experiment, creating a piece of artwork, or building something off a blueprint, all require students to plan and test ideas in order to determine their worth. For Dewey learning meant doing something with the subject matter aside from reciting and memorizing

Համաշխարհային պրակտիկայում մարմնականության (телесность) և կուլտուրայի միջև եղած փոխադարձ կապը առաջին անգամ ուսումնասիրել է Մ.Մոսը (9), և հենց նա գործունեության մեջ դրեց «մարմնի տիրապետման տեխնիկա» հասկացությունը: Օրինակ, երեխաները տեղաշարժվում են այլ կերպ, քան մեծահասակները, նրանք այսպես են տիրապետում սեփական մարմնին: Մարմնի տիրապետման տեխնիկայի կարևոր բաղադրատոմս են հանդիսանում շարժողական պատրաստվածությունը և մարդու օրգանիզմի ֆիզիկական հնարավորությունները: Օրինակ՝ սովորական մարդու վազքը տարբերվում է մարզիկ-վազորդի վազքից: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարմնի տիրապետման տեխնիկան, մարմնի զգացողությունը, մարմնի հանդեպ վերաբերմունքը ձևավորվում են կուլտուրայի ազդեցության ներքո:

Յուրաքանչյուր հասարակություն, յուրաքանչյուր ժողովուրդ, յուրաքանչյուր քաղաքակրթություն, յուրաքանչյուր մշակույթ ունի անհատի իր իդեալը, օրինակ՝ «կուլտուրական մարդ» և այլն: Այդ դրսևորումներում, ինչպես երևում է, հատուկ տեղ է զբաղեցնում մարմնականությունը:

Բոլոր մարդիկ միմյանցից տարբերվում են արտաքինով, մազերի գույնով, մկանային ուժով, մարմնակազմությամբ և այլ առանձնահատկություններով: Գոյություն ունեն բնածին ու որոշակի մարդաչափական չափորոշիչներ՝ մարմնի հասակը, քաշը, երկարության ու լայնության մեծություններ, մարմնի տեսակարար կշիռը, մակերեսը և այլն: Մարմնականության սահմանների որոշման նպատակով օգտագործվում են այնպիսի կատեգորաներ, ինչպիսիք են գեղեցիկ-այլանդակ, երիտասարդ-ծեր, տղամարդկային-կանացի, նորմալ-աննորմալ, բարձրահասակ-ցածրահասակ և այլն:

Հետաքրքիր է, որ մարդկության զարգացման ողջ պատմության ընթացքում ընդամենը երեք մարդ է համարվում հավասարաչափ շնորհալի բոլոր բնագավառներում՝ բժշկագիտություն, քիմիա, ֆիզիկա, գեղանկարչություն, փիլիսոփայություն, բանաստեղծական արվեստ, աստղաբաշխություն: Արիստոտել, Լեոնարդո դա Վինչի, Միխայիլ Լոմոնոսով: Ի դեպ, երեքն էլ ունեցել են հզոր աթլետիկ մարմնակազմություն (22):

Այսպիսով, մարմնականությունը՝ որպես սոցիոմշակութային երևույթ, մարդու մարմինն է, որը սոցիալական ու կուլտուրական գործոնների ազդեցության ներքո վերափոխվել է ու կատարում է որոշակի սոցիոմշակութային ֆունկցիաներ: Դա հատուկ տարածություն է, ուր ներկա է մարդկային էությունը (8): Ուստի այն պահանջում է իր հանդեպ հատուկ ուշադրություն և ուսումնասիրություն:

Մարմնականությունը՝ որպես ֆենոմեն, որպես մարդկային բնության հիմք, պետք է վերլուծել փիլիսոփայության, հոգեբանության, սոցիոլոգիայի, ֆիզիկական դաստիարակության, սպորտային պատրաստության և այլ գիտությունների տեսանկյունից:

Դեռևս անտիկ դարաշրջանից հայտնի է, որ մարդու մարմնի առողջությունը ձևավորող կարևոր գործոններից են ֆիզիկական վարժությունները: Հետևաբար ֆիզիկական վարժությունները մարմնական դաստիարակության պրակտիկայի ելակետն են ու կառուցվածքային միավորը:

Հետաքրքիր է գերմանացի փիլիսոփա Հեգելի (1770–1831թթ.) տեսակետն այն մասին, որ մարդն իր բնական ձևը չպետք է թողնի այնպիսին, ինչպիսին այն կա, այլ պետք է նպատակաուղղված այն փոփոխի: Այստեղ նա ճիշտ է նկատել ֆիզիկական դաստիարակության կապը հոգևոր կուլտուրայի հետ ու առաջարկել է ֆիզիկական վարժությունների միջոցով ձևավորել մարդու մարմինը: Հեգելը վկայակոչում է հին հույներին, որոնք սկզբում ձևավորում էին իրենց մարմինը, և հետո այն մարմնավորում մարմարի մեջ:

Իր հերթին Ն.Գ.Չերնիշևսկին (30) մանրամասն քննարկում է մարդկային մարմնի գեղեցկության հարցը, նրա համաչափ զարգացման անհրաժեշտությունը, ճիշտ կեցվածքի մշակումը՝ համարելով, որ մարդկային մարմինը երկրագնդի լավագույն գեղեցկությունն է: Նմանատիպ մտեցումներ ենք տեսնում նաև մի շարք այլ հեղինակների աշխատություններում (16, 20, 24, 28):

Մեծ մանկավարժ Ի. Հ. Պեստալոցցին (25) ասում էր, որ երեխայի անընդհատ շարժվելու ձգտումը նպաստում է կրթությանը և մարմնական դաստիարակությանը:

Հատուկ ուշադրության են արժանի ֆրանսիացի գիտնական Ժ.Դեմենիի (10) հայացքները: Նա ֆիզիկական դաստիարակության վերջնական արդյունքն էր համարում մարդկային մարմնի կատարելության նվաճումը ձևերի, կառուցվածքի և շարժումների մեջ:

Մարմնային դաստիարակությունը ընդգրկում է կատարելության համակցություն, ինչը բերում է մարդու վիճակի բարելավմանը՝ առողջության ամրապնդման, գեղեցիկ մարմնակազմության, շարժումների ճարպկության, առնականության: Գերմանացի գիտնական Ֆ.Ա.Շմիդտը (31) մարմնամարզական վարժություններն անվանում էր մարմնական, որոնց ամենօրյա կատարումը բարձրացնում է աշխատունակությունը, զարգացնում մարմնի և հոգևորի ընդունակությունները:

Սոցիոլոգիական ժամանակակից հետազոտությունների արդյունքները նույնպես ընդգծում են տարբեր տարիքի ու սեռի դպրոցականների և ուսանողների արժեքային կողմնորոշումների համակարգում մարմնականության կարևոր նշանակությունը:

Հետաքրքիր է, որ նույնիսկ այնպիսի շարժողական գործողություններ, որոնք համարվում են բնական ամբողջ մարդկային ցեղի համար, տարբեր մշակույթներում կատարվում են առանձնահատուկ ձևով: Մշակույթային նմուշները ազդեցություն են գործում քայլքի, վազքի, լողի ձևերի, շնչառության, փոս փորելու, սեքսի, երեխային կրծքով կերակրելու, քնի ժամանակ մարմնի դիրքի և այլնի վրա: Հետևաբար, տարբեր ժողովուրդների մոտ գոյություն ունեն սեփական մարմնի օգտագործման տարբեր ձևեր ու եղանակներ:

Սեփական մարմինը տիրապետելու տարբեր կարողությունները դասակարգել կարողանալու համար ֆրանսիացի

գիտնական Մ.Մոսը (20) օգտագործում է այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են տարիքը, սեռը, ֆիզիկական հնարավորությունները, սովորույթները, ավանդույթները: Այսպես, օրինակ, համեմատելով երեխայի և մածահասակ մարդու շարժումները, նա եզրակացնում է, որ երեխաները տեղաշարժվում են այլ կերպ, քան մեծահասակները, այլ կերպ են տիրապետում սեփական մարմնին: Այստեղ, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն շարժողական պատրաստվածության մակարդակը, շարժողական հմտությունների տիրապետման աստիճանը:

Սեփական մարմնի կերպարը և էնպիրիկ մոդելը ձևավորվում են օստոգենետիկ զարգացման պրոցեսում և հատկապես նախադպրոցական տարիքում: Դպրոցական հասակում այդ մոդելը անցնում է գիտակցական մակարդակի, քանի որ այն զարգանում է ուսուցչի ղեկավարության ներքո, ով առաջարկում է լուծել բազմաբնույթ խնդիրներ: Կյանքի հետագա շրջաններում սպորտը՝ որպես կենսակերպ ընտրած, պատանիներն ու աղջիկները գիտակցականորեն մարզիչի ղեկավարությամբ ձևավորում են շարժման մոդելը, յուրացնում սեփական մարմինը և այն ենթարկում արդեն ձևավորված շարժողական ձևին: Ի վերջո, մարդկային մարմնի ճիշտ օգտագործման մեջ գերակայում են ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության գործոնները (17, 19, 21):

Հայտնի է նաև, որ կուլտուրան անխուսափելիորեն կապված է մարդու մարմնականության հետ (24, 35): Հին Հունաստանում ֆիզիկական վարժությունները օգտագործվում էին մտավոր, առավելապես փիլիսոփայական կրթության հետ հավասարաչափ: Դեռ այն ժամանակ լավ գիտակցում էին, որ ֆիզիկական և մտավոր դաստիարակությունները պետք է

ընթացանան զուգահեռ՝ չսպառելով երիտասարդ ուժերը, չզերագանցելով հնարավորությունները, միաժամանակ նպաստելով մարմնի ու մտքի ներդաշնակ զարգացմանը: Անտիկ կուլտուրայում ֆիզիկական զարգացումը մարմնային գիտակցության արտացոլումն էր համարվում, ինչն էլ իր ոգով «մարմնավոր» կուլտուրա էր: Այդ ժամանակներում մարմնի գեղեցկությունը իմաստավորվում էր ոչ միայն որպես ֆիզիկական, այլև առհասարակ՝ մարդու գեղեցկություն: Պատմությունը վկայում է, որ հենց անտիկ դարաշրջանում, անտիկ մշակույթում է կազմավորվել մարդու մարմնային և հոգևոր փոխհարաբերությունը:

Դ. Յու. Յուվենալը, վկայակոչելով Պլատոնին, առաջարկում էր «չզարգացնել մարմինը առանց ոգու, ոչ էլ ոգին՝ առանց մարմնի, այլ վարժել նրանց հավասարապես, ինչպես անում են կառքին լծված երկու վարգաձիերը» (32, էջ 96):

Հռոմեացի փիլիսոփա և հռետոր Ցիցերոնն էլ ասում էր, որ «մարմինը հակվում ու իջնում է լարված պարապմունքների և չափազանց հոգևածության հետևանքով: Ոգին, շնորհիվ վարժման, դառնում է առավել շարժուն և գործունյա» (32, էջ 95):

Այսօր բանավիճելի է այն հարցը, թե որ տեսակի մշակույթին է վերաբերում ֆիզիկական կուլտուրան՝ նյութական, հոգևոր, մեկ այլ, թե մի քանի մշակույթի օրգանական զուգակցմանը: Այս տեսակետից Մ. Ս. Կոզանը (13) դիտարկում է ֆիզիկական կուլտուրան որպես նյութական կուլտուրայի տարր՝ այն անմիջականորեն կապելով մարդու մարմնի ձևավորման հետ: Ֆիզիկական կուլտուրայի կապը նյութականի հետ դրսևորվում է շարժողական ակտիվության գործընթացում, որը կազմում է նրա գլխավոր բովանդակությունը (18):

Ուրիշ մասնագետներ ֆիզիկական կուլտուրան դասում են հոգևոր կուլտու-

րայի շարքին՝ համարելով, որ մարդը նախևառաջ հոգևոր է: Օրինակ, ըստ Ի.Ս.Բիխովսկայայի (7) ֆիզիկական կուլտուրայի ոլորտն առաջին հերթին աշխատանք է մարդու ներաշխարհի հետ, թեպետ այդ բնագավառում հետաքրքրության առարկա են հանդիսանում մարմնաշարժողական որակները:

Եվրոպայում գոյություն ունի, այսպես կոչված, անձնական աշխատանք մարմնի հետ, այսինքն՝ մարմնի հետ շփման հոգեբանական մեթոդիկա (23): Նման մոտեցումը հնարավորություն է տալիս մարդուն՝ ճանաչել ինքն իրեն, գիտակցել ու ըմբռնել սեփական մարմինը և հոգևոր միասնությունը:

Այսպիսով, ներկայումս գոյություն ունեն տարբեր մոտեցումներ ֆիզիկական դաստիարակության մեջ՝ մարմնականի և հոգևորի հարաբերությունը իմաստավորելու համար: Բայց բոլոր դեպքերում այդ գործընթացում մարմնավորվում է հոգևորի և մարմնականի միասնությունը:

Այսօր մարմնականը հստակ տեղ է գրավել հրապարակային տարածության մեջ: Մարմինն ակտիվորեն մասնակցում է տարբեր տեսակի մրցույթների և ցուցադրական խաղերի: Սովորական են դարձել նախկինում սակավ ընդունելի պլաստիկ վիրահատությունները, դաջումները, պիրսինգը, ընդհուպ մինչև մարմնի ուրվագծերի համակարգչային մոդելավորումը: Մարմինը դառնում է պաշտամունքի ու աստվածացման, ուժերի պահպանման ու երիտասարդ մնալու օբյեկտ: Այսօր գործում են տարբեր ծեսեր՝ շեյֆինգի, անբոքիկայի տեսքով, ակտուալ են դարձել հաճախումները շոգեբաղնիք, ֆիթնես-ակումբներ, մերսման սրահներ, արևաբուժարաններ և այլն:

Մարդու մարմինը կարող է ձևավորվել տարբեր արժեքային կողմնորոշիչների հիման վրա: Դրանց շարքին կարելի է դասել առողջության պահպանումն ու

ամրապնդումը, մկանների զարգացումը (կուլտուրիզմ, բողիբիդիզմ), զինվորական ծառայությունն ու ինքնապաշտպանության օպտիմալ պատրաստությունը, օրգանիզմի կորցրած (ծախսած) ֆունկցիաների վերականգնումը, շարժումների կուլտուրայի ձևավորումը, մարմնակազմության ապահովումը և այլն: Նման մոտեցումները պետք է կապակցվեն բանականության, մտածողության, հիշողության, ուշադրության, ստեղծագործական ընդունակությունների, գեղագիտական ու բարոյական որակների զարգացման հետ: 20–21–րդ դարերի սահմանագծում արմատականորեն փոխվում է մարմնի հանդեպ վերաբերմունքը: Սակայն մինչ օրս էլ գիտությունը չի կարողացել խորը թափանցել մարմնի կառուցվածքի գաղտնքների մեջ:

Ֆիզիկական դաստիարակությունը և առավել ևս սպորտային պատրաստությունը դասվում են այն բնագավառների շարքին, որտեղ առավել ևս պետք է դրսևորվի մարմնական իր կուլտուրաբանական տեսանկյունով: Այդ առումով ուշադրության են արժանի Ի.Ս.Բիխովսկայայի (8), Վ.Ի.Ստոլյարովի (20), Ֆ.Ի.Սոբյանինի և Դ.Վ.Շերբինայի (27) աշխատությունները:

Վերջին տարիներին աշխարհի շատ երկրներում քննարկվում է ֆիզիկական դաստիարակության գործող համակարգը և մանկավարժական ժամանակակից գործունեությունը: Քննարկվում են նոր ինովացիոն ծրագրեր, նոր տեխնոլոգիաներ ու ֆիզիկական դաստիարակության նոր մեթոդիկաներ: Մասնավորապես առաջարկվում է ֆիզիկական դաստիարակության համալիր հայեցակարգ, որն իր մեջ է ներառում երեք հիմնական տարր՝ մարմնային դաստիարակություն, ֆիզկուլտուրային շարժողական դաստիարակություն և սպորտային դաստիարակություն (29):

Միանշանակ կիսելով հեղինակի կարծիքը՝ հարկ ենք համարում նշել, որ հասարակության զարգացման հետ մեկտեղ առավել մեծ նշանակություն է ստանում գիտակցված ու նպատակաուղղված գործունեությունը՝ կապված մարդու մարմնի ձևավորման ու շտկման հետ, նրա ֆիզիկական վիճակի տարբեր չափանիշների առողջության, մարմնակազմության, շարժողական ընդունակությունների մշակման ցանկալի ուղղությամբ: Այս տեսակետից անհրաժեշտ է կիրառել ֆիզիկական դաստիարակության միջոցների կոնկրետ ցանկ (1, 2, 3, 6, 11, 15, 26, 32): «Մարմնային դաստիարակություն» տերմինը ընդգծում է հենց այդ մանկավարժական գործունեությունը, քանի որ այն գործ ունի մարդու մարմնականության հետ (7, 8, 10):

Լեհ գիտնական Զ.Կրավչիկը (14) գտնում է, որ ֆիզիկական դաստիարակության առարկան պետք է լինի առողջ մարդու մարմինը կամ դրան ձգտումը: Այդ իսկ պատճառով առաջարկում է ֆիզիկական դաստիարակությունը անվանել «Մարմնային և սոմատիկ կուլտուրա», այլ կերպ՝ մարդու մարմնակազմություն: Հետևաբար, ֆիզիկական կուլտուրան և մարմնական կուլտուրան (սոմատիկ) հանդես են գալիս որպես հոմանիշներ: Նույն կարծիքն են հայտնում Ա.Կլոսկովսկան (34), Ֆ.Ի.Սոբյանինը և Դ.Վ.Շերբինան (27), Վ.Ի.Ստոլյարովը (28, 29): Նշենք, որ մի շարք այլ երկրներում օգտագործվում են համանման կատեգորիաներ, օրինակ՝ Գերմանիայում «Körperkultur» (մարմնի կուլտուրա), Անգլիայում՝ «Culture of the body» (մարմնի կուլտուրա), Չեխիայում «Telesna kultura» (մարմնի կուլտուրա), Լեհաստանում՝ «Telesna wicnova» (մարմնի կուլտուրա) և այլն:

Այսօր առանձնացնում են մարդու երեք պատկերացումներ սեփական մարմնի վերաբերյալ՝ մարմնի սխեմա, մարմնի կերպար և մարմնի կոնցեպցիա: Մարմ-

նի սխեման մկաններից ու հոդերից եկող զգացողությունների վրա հիմնված մոդել է: Այն օգնում է մարդուն կողմնորոշվել տարածության մեջ: Մարմնի կերպարը մարմնային և շարժողական որակների հոգեբանական արտացոլման արդյունքն է, ուր բացահայտվում է «մարմնային Ես-ի» ինքնագնահատականը: Մարմնի հայեցակարգը այն է, երբ մարդն ընկալում է իր մարմնի արժեքները, պարամետրերը, առանձին շարժողական ընդունակությունները: Նման ինքնագնահատականը վարքագծի կարգավորիչն է՝ ուղղված հասնելու որոշակի նվաճումների, հատկապես սպորտային գործունեության ընթացքում: Երբ մարզիկները զգում են, որ իրենք կատարելագործվում են ֆիզիկապես ու հոգեպես, նրանք ավելի հեշտ են կրում մարզական գործընթացի դժվարությունները: Հենց այստեղ է մեծանում մենտալ մարզումների դերն ու նշանակությունը:

Սպորտային պատրաստության տեսակետից հարկ է տարբերել մարզական գործընթացի տիպավորման առանձին կողմերը: Առաջին մարզական գործընթացում գերակայում է տեխնիկական պատրաստվածությունը: Այս դեպքում մարզիչները լավ ուսուցանում են: Երկրորդ մարզական գործընթացում գերակայում է ֆիզիկական պատրաստվածությունը: Տվյալ դեպքում մարզիչները լավ մարզում են: Հենց այս երկու դեպքում հարց է ծագում մարմնականության առարկայական դաստիարակության մասին: Եվ վերջապես երրորդ երբ մարզական գործընթացում գերակայում է մարմնակողմնորոշիչ բաղադրամասը: Այստեղ մարզիչները պետք է դաստիարակեն այնպիսի մարմնական որակներ, որոնք առաջին հերթին կարևորվում են տվյալ մարզաձևում, օրինակ՝ ճկունությունը՝ մարմնամարզությունում, արագաշարժությունը՝ արագավազքում, մկանային ուժը՝ ծանրամարտում և այլն:

Բացի այդ, առողջարարական ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի կազմակերպման ոլորտում այսօր կազմավորվել են հոգեկարգավորման ու հոգեթերապիայի առանձին ուղղություններ, ուր կիրառվում են մարդու շարժումները՝ մարմնակողմնորոշիչ հոգետեխնոլոգիաներ, պարաշարժողական թերապիա, մարմնի կենսաէներգետիկ խթանում, սինթետիկ մերսում և կինեզիոթերապիայի տարրեր:

Մարմնական կուլտուրայի դաստիարակումը պետք է նախատեսի պահանջների մեծացում այն մասնագետների հանդեպ, որոնք աշխատում են մարդու մարմնական ֆունկցիաների բարելավման ուղղությամբ՝ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ, մարզիչներ, բժիշկներ, խորեոգրաֆներ, բուժական ֆիզկուլտուրայի մեթոդիստներ, կինեզիստներ:

Այսպիսով, մարդու ակտիվ դիրքորոշումը իր մարմնի, առողջության, ֆիզիկական կատարելության հանդեպ կոնկրետանում է վարքագծի տարբեր տեսակներում: Մարդը կարող է գիտակցորեն ու նպատակամետ խնամել իր մարմինը, հոգալ մարմնակազմության ու ներդաշնակության մասին պարապել ֆիթնեսով, պարերով, յոգայով, կատարել առօրյա մարմնամարզություն և հակառակը՝ կարող է նախապատվությունը տալ գեր ու պարարտ մարմնին: Հետևաբար մարդու մարմինը կարող է ձևավորվել՝ հիմնվելով տարբեր արժեքային կողմնորոշիչների վրա:

Վերջապես, մարմնական դաստիարակությունը առավել մարդասիրական երևույթ է: Այն համապատասխանում է ժամանակակից սոցիալ-տնտեսական խնդիրներին, ինչպես նաև ուսուցման, դաստիարակության, կրթության համակարգի պահանջներին ու գեղեցկության և ներդաշնակության չափանիշներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթոյան Կ.Պ. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում.– Երևան. – Լոյս.– 1985 – 374 էջ:
2. Դազարյան Ֆ.Գ. Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա.– Երևան.– ՖԿՀՊԻ.– 2003 – 37 էջ:
3. Մովսիսյան Ա.Խ. Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության.– Երևան.– Հայպետուսմանկ հրատ.– 1958.– էջ 470–492:
4. Авиценна /Абу Али Ибн Сина/ Канон врачебной науки.–Ташкент: 1967.– кн.1 и 2.
5. Архангельский С.К. Материалы о методике телесных упражнений.– М.: 1911.–113с..
6. Бокин П. Краткий исторический обзор физического воспитания.– СПб.: 1910.
7. Быховская И.М. Человеческая телесность в социокультурном измерении: традиции и современность.– М.: РИО ГЦОЛИФК.– 1993.– 168с..
8. Быховская И.М. Человек телесный в социокультурном пространстве и времени.– М.: ФОН.– 1997.– 809 с..
9. Гофман А.Б. Социологические концепции Марселя Мосса: концепции зарубежной этнологии.– М.: Наука.– 1976.
10. Демени Ж. Программа высшего курса телесного воспитания /пер.. с фран./– СПб.: 1899.
11. Дюперрон Г.А. Краткий курс по истории физических упражнений. Л.: 1924.– 120с..
12. Из истории эстетической мысли древности и средневековья.– М.: АН СССР.– 1961. с. – 27, 37.
13. Коган М.С. Человеческая деятельность.– М.: Политиздат.– 1974.– 328 с..
14. Кравчик З. О формировании теории физической культуры в системе наук.– В. сб.: Очерки по теории физической культуры.– М.: ФиС. – 1984. с.– 82–89.
15. Кун Л. Всеобщая история физической культуры и спорта.– М.: Радуга.– 1982. – 399 с..
16. Лесгафт П.Ф. Собрание соч.– М.: ФиС.– 1951. с.– 343.
17. Майнберг Э. Основные проблемы педагогики спорта.– М.– Аспект Пресс.– 1995.– 318 с..
18. Матвеев Л.П. Теория и методика физической культуры. М.: ФиС.– 1991.– 543с..
19. Мид М. Культура и мир детства.– Избр. произвед. /пер. с. англ./– М.: Наука.– 1988.– 429 с..
20. Мосс М. Техника тела // Человек.– 1993. N 2 с.– 64–79.
21. Никитюк Б.А. Гладышева А.А. Анатомия и спортивная морфология.– М.: ФиС.– 1989.– 176 с..
22. Николаев Ю. От осинки не жди апельсинки.– Комс. правда.– 2000, N81, май,с. 10.
23. Обухов Я.Л. Духовные “Тималаи” Европы.// Человек.–1993. N 2– N 89 с..
24. Оленкин Ю.В. Диалектика духовного и телесного в физической культуре.– Чебоксары: .– 2008.– 311 с..
25. Песталоцци И.Г. О телосложении как подготовке к опыту проведения элементарной гимнастики в последовательном ряде физических упражнений.– Собр. соч.– Издание И.Р. Сейфарта.– Бранденбург: 1873.– 44 с..
26. Пономарев Н.И. Возникновение и первоначальное развитие физического воспитания.– М.: ФиС. – 1970.– 248 с..

27. Собянин Ф.И., Шербин Д.В. О некоторых проблемах философии спорта // Теория и практика ФК. – 2012. N7.– с. –32.
28. Столяров В.И. Философия спорта и телесности человека.– М.: Университетская книга.– 2011.– 766 с..
29. Столяров В.И. Фундаментальные теоретические основы современной системы комплексного физического воспитания // Физкультура: В.О.Т.–2013.– N 2– с. 2–6.
30. Чернышевский Н.Г. Эстетика.– М.: Гослитиздат.– 1958. с.– 108.
31. Шмидт Ф.А. Физиология телесных упражнений / пер. с нем./.– М.: Гудок.– 1925. 119с.
32. Энциклопедия мысли: Сборник мыслей, изречений, афоризмов.– Составитель Н. Хоромин.– М.: Гитис.– 1993. с.–95, 96.
33. Kice E. A Brief History of physical Education.– New-York.– 1932.– 131p..
34. Kloskowska A. Kultura masowa. Krytyka i obrona.–Warsawa: PWN.– 131s..
35. Octavio P. El ogro filantropico: historia y politica.–Barcelona: 1979.
36. Vives J. L. Consas de la decadencia de las artes. Enece, editores.– S.A. Buenos Aires.– 1988. p.– 339.

О СУЩНОСТИ ТЕЛЕСНОГО ВОСПИТАНИЯ

ФРУНЗ КАЗАРЯН

Доктор педагогических наук, профессор, проректор Армянского государственного института физической культуры

ВАРДУИ АЛЕКСАНИЯН

Кандидат педагогических наук, ассистент Армянского государственного института физической культуры

В данной работе на основе обобщения литературных источников и опыта профессиональной деятельности анализируются представления о культуре движений и телесном воспитании человека. Показано, что физическое воспитание, а тем более спортивная тренировка, относятся к тем областям, в которых как никогда должна проявляться человеческая телесность в ее культурологическом аспекте.

ABOUT THE ESSENCE OF BODILY EDUCATION

FRUNZ GHAZARYAN

RA Physical Culture and Sports Honorary Figure, Doctor of Pedagogical Sciences, PhD, Prorector of the Armenian State Institute of Physical Training

VARDUHI ALEKSANYAN

PhD in Pedagogical Sciences, Assistant of the Armenian State Institute of Physical Training, Sports Dancing Master of Armenia

The notion about the culture of movements and bodily education of a person has been analyzed in the given work on the basis of the summary of literary sources and experience, as well as on the professional activities. It has been shown that the physical education and training, are related to the sphere, in which the human bodily essence in its culturological aspect should be shown more than ever.

Հոդվածի ներկայացման փաթեթի վրա 11.03.14 թ.

ԼԻԼԻԹ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

*Խաչատրուր Արուսյանի անվան հայկական պեդագոգիկ
մանկավարժական համալսարանի հայրուկ
մանկավարժության և հոգեբանության ամբիոնի
դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու*

ԼԻԳԱ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

*«Պատմոս- Արարատ» բարեգործական
հիմնադրամի լոգոպեդ*

ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՎԱՂ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Հոդվածում ներկայացված է լսողության խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքում կազմակերպվող վաղ օգնության նշանակությունը, դրան առնչվող հիմնահարցերը, խնդիրները, ուղիները և վաղ օգնության վերականգնողական աշխատանքների հիմնական ուղղությունները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. լսողության խանգարում, լսողության վաղ պրոթեզավորում, խխունջային ներպատվաստում, լսողական ընկալում, առարկայական գործունեության զարգացում, սուրդոմանկավարժական վաղ օգնություն:

Հայտնի է, որ լսողության խանգարումները դժվարեցնում են մարդու սոցիալականացումը և խոչընդոտում ինքնուրույն կյանքի և գործունեության կայացմանը: Դրանք բազմաթիվ սոցիալ-հոգեբանական և մանկավարժական հիմնահարցեր են առաջացնում ոչ միայն երեխաների, այլև նրանց ծնողների համար: Լսողության խանգարումները բացասաբար են անդրադառնում երեխայի խոսքի և հաղորդակցման պահանջմունքների ձևավորման ու զարգացման գործընթացների, ճանաչողության և գործունեության բոլոր ձևերի (մանիպուլացիոն, առարկայական, խաղային, ուսումնական, աշխատանքային) վրա: Այդ պատճառով էլ լսողության խանգարման և դրա հետևանքով առաջացած հոգեկան զարգացման երկ-

րորդային շեղումների վաղ բացահայտումը և վաղ օգնության կազմակերպումը կենսական կարևոր նշանակություն ունեն [1,3]: Սույն հացերի կարևորությունն առավել ընդգծվում է, երբ դրանք վեարբրում են մինչ երեք տարեկան լսողության խանգարումներ ունեցող երեխաների հետ ընտանիքում կազմակերպվող սուրդոմանկավարժական աշխատանքներին: Սուրդոմանկավարժական վաղ օգնության ներդրումն ընտանիքում հնարավորություն է ընձեռում շտկող-զարգացնող աշխատանքերը կազմակերպել մինչ 3 տարեկան հասակը, հենվել խոսքի զարգացման բոլոր փուլերի և սենզիտիվ շրջանների վրա, աշխատել երեխայի համար բնական միջավայրում և ծնողների անմիջական մասնակցությամբ: Ելնելով այն հանգամանքից, որ նման մոտեցումը սուրդոմանկավարժության մեջ նորույթ է՝ կարծում ենք, որ այն կարևոր գիտահետազոտական հիմնախնդիր է և բազմակողմանի ուսումնասիրության կարիք ունի [4, 6]:

Այսպիսով, ելնելով վերոհիշյալից՝ մեր **նպատակն է** հետազոտել, կազմակերպել և իրականացնել լսողության խանգարումներ ունեցող երեխաների վաղ օգնությունն ընտանիքում: Դրա համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հետազոտվող խնդրի լուսաբանվածության աստիճանը՝ մասնագիտական գրականության մեջ,

- հետազոտել վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը,
- հաղորդել նրանց մասնագիտական որոշակի գիտելիքներ և ձևավորել համապատասխան պատկերացումներ՝ հետազոտվող խնդրի վերաբերյալ,
- ցույց տալ վաղ տարիքում լսողության խանգարում ունեցող երեխաների և նրանց ծնողների հետ տարվող սուրդոմանկավարժական և հոգեբանական աշխատանքների կարևորությունը [2,5]:

Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տվել, որ սուրդոմանկավարժական վաղ օգնության աշխատանքները բոլոր ժամանակներում կարևորվում են, սակայն դրանք հիմնականում վերաբերում են 3 տարեկանից հետո սկսվող մասնագիտական միջամտությանը: Ինչ վերաբերում է ընտանիք ներդրվող վաղ օգնության ձևերն, ապա դրանց վերաբերյալ տեսագործական հետազոտությունները բացակայում են [1,3,5]:

Այսօր մեր երկրում լսողության խանգարումները ակտիվորոշվում են երեխայի ծնվելուց քառասունութ ժամ հետո: Այս հանգամանքն առավել դյուրին է դարձնում լսողության խանգարումներ ունեցող երեխաների վաղ օգնության կազմակերպումը, որն անհնար է պատկերացնել առանց սուրդոմանկավարժական միջամտության: Ելնելով նրանից, որ վաղ օգնության կազմակերպման համար ամենաբարենպաստ պայմանները հնարավոր է ստեղծել ընտանեկան միջավայրում՝ մենք ուսումնասիրել ենք վաղ օգնության վերաբերյալ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ծնողների տեղեկացվածության մակարդակը:

Հետազոտությունները ցույց է տվել, որ նրանց 65%-ը վաղ օգնության մասին հստակ տեղեկատվություն ունի, սակայն լավ չի պատկերացնում, թե ինչպես է այն կիրառվում գործնականում, 25%-ը մասամբ է

տեղեկացված և խիստ թերահավատորեն է վերաբերվում ընտանիքի մասնակցությանը սուրդոմանկավարժական աշխատանքներին, իսկ 10%-ը՝ պատկերացում չունի, թե ինչ է վաղ օգնությունը:

Հարցումները վկայում են, որ ընտանիքի ճիշտ կազմակերպված մասնակցությունը անմիջականորեն ազդում է վաղ սկսված սուրդոմանկավարժական աշխատանքների արդյունավետության վրա. այսպես՝ այն ընտանիքները, որոնք հետևողականորեն պահանջում են, որ երեխան լսողական սարքը կրի, ապահովում են ընտանեկան ջերմ մթնոլորտ, սուրդոմանկավարժական աշխատանքներում դրական արդյունքներ են գրանցվում: Սույն խնդրին ուղղված հետազոտություններից պարզ է դարձել, որ այն ընտանիքներում են գրանցվում լսողությա խանգարումներ ունեցող երեխայի զարգացման լավագույն արդյունքներ, որտեղ՝

- ընտանեկան դաստիարակության ընթացքում երեխաների միջև տարբերություն չի դրվում,
- ընտանիքում լսողության զարգացման համար օգտագործվում է երեխայի կյանքի յուրաքանչյուր պահը,
- վաղ օգնության աշխատանքներում ընդգրկվում են ընտանիքի բոլոր անդամները,
- երեխայի հետ, անկախ նրանից՝ ընկալում է նա լսած խոսքն ամբողջությամբ, թե՛ ոչ, միշտ խոսում են նորմալ տեմպով և ճայնով:
- երեխաներին օրվա մեջ շատ ժամանակ են տրամադրում:

Այսպիսով, վաղ օգնության կազմակերպումն ընտանիքում իրականացվում է հետևյալ ուղղություններով՝


- գրույց ընտանիքի հետ,
- մասնագիտական տեղեկատվության ապահովում,
- ակտիվորոշման հնարավոր ելքերի խորհրդատվություն,
- երեխայի Ֆիզիկական ոլորտի զարգացում,
- լսողական ընկալման զարգացում,

- առարկայական գործունեության զարգացում,
- հուզական ոլորտի զարգացում,
- խոսքային միջավայրի ապահովում:

Այսպիսով, լսողության խանգարումներ ունեցող երեխայի վաղ օգնության աշխատանքներն իրականացվում են ստորև ներկայացված սխեմայով (նկ.1):

Հաշվի առնելով սույն խնդիրները՝ ներկայացրել ենք այն հիմնական ռազմավարությունը, որով պետք է ծնողներն առաջնորդվեն՝ լսողության խանգարումն ախտորոշելուց անմիջապես հետո: Տեսագործական վերլուծությունները վկայում են, որ լսողության խանգարումների ախտորոշմանը պետք է հաջորդեն վերականգնողական աշխատանքները, որոնք տարվում են հետևյալ ուղղություններով՝

- լսողության վաղ պրոթեզավորում՝ համապատասխան սարքերով,
- անհատական պարապմունքների կազմակերպում սուրդոմանկավարժի հետ,
- լուսավորչական աշխատանքներ, որոնց նպատակը լսողության խանգարումներ ունեցող երեխաների վերականգնողական աշխատանքների, լսողության և խոսքի զարգացման աշխատանքների բովանդակության մեկնաբանումն է՝ ընտանիքում,
- երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացման և ընդհանուր վիճակի գնահատում, որն իրականացնում են աուդիոլոգը և սուրդոմանկավարժը՝ լսողական սարքը 3–6 ամիս կրելուց հետո:



Նկար 1. Լսողության խանգարումներով երեխաների ընտանիքում իրականացվող վաղ օգնության համագործակցային աշխատանքի սխեմա

Այսպես՝

- եթե լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը համապատասխանում է նորմայի ստանդարտներին, ապա երեխան շարունակում է կրել լսողական սարքերը և հաճախել սուրդոմանկավարժական պարապմունքներին,
- եթե լսողական սարքերով երեխայի լսողախոսակցական գործառույթի զարգացումը չի համապատասխանում նորմայի ստանդարտներին, և ցուցված է խխունջային ներպատվաստում, ապա խորհուրդ է տրվում երեխային վիրահատել. դա բացատրվում է նրանով, որ միակ միջոցը, որի շնորհիվ երեխան կարող է տիրապետել բանավոր խոսքին, խխունջային ներպատվաստումն է:

Այսպիսով, տեսագիտական և գործնական վերլուծությունները ցույց են տվել, որ լսողության խանգարումներ ունեցող երեխաների ընտանիքում վաղ օգնության հիմնահարցերը գիտահետազոտական լուրջ մարտահրավերներ են նետում սուրդոնանկավարժությանը, քանի որ սուրդոնանկավարժական աշխատանքների բովանդակությունն ու տեխնոլոգիաները այս տեսանկյունից բավարարուսումնասիրված չեն: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ կարծում ենք, որ

մեր կողմից ներկայացված լսողության խանգարումներ ունեցող երեխաների վաղ օգնության ուղղությունները և ձևերը կնպաստեն սուրդոնանկավարժական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Դրանք կնպաստեն նաև մասնագետների և ծնողների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը, կխթանեն վաղ օգնությունն ընտանիքներդնելու և ծնող-մասնագետ համագործակցային փոխհարբերությունների ձևավորմանը [1,3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Андреев Л. Б. Сурдопедагогика. Москва, 2005.
2. Басова А.Г., Егоров С.Ф. История сурдопедагогики: Учеб. пособие. М., 1984.
3. Богданова Т. Г. Сурдопсихология, Москва, 2002.
4. Леонгард Э. И. Развитие речи детей с нарушениями слуха в семье: Методические рекомендации для родителей. Москва, 1985.
5. Пельмская Т.В. Выявление нарушений слуховой функции у детей 1-го и 2-го годов жизни (педагогический аспект) // Дефектология. Москва, 1987.
6. Янн П.А. Воспитание и обучение глухого ребенка: Сурдопедагогика как наука / Пер. с нем. Москва, 2003.

РАННЯЯ ПОМОЩЬ ДЕТЯМ С НАРУШЕНИЯМИ СЛУХА В СЕМЬЕ

ЛИЛИТ САРАТИКЯՆ

Доцент кафедры специальной педагогики и психологии АГПУ им. Х. Абовяна, кандидат педагогических наук

ЛИДА БАЛАБЕКЯՆ

логопед благотворительного фонда “Патмос–Арарат”

В статье представлены значение, проблемы, пути ранней помощи детям с нарушениями слуха в семье и основные направления ранних реабилитационных работ.

EARLY ASSISTANCE OF CHILDREN HAVING HEARING PROBLEMS IN THE FAMILIES

LILIT SARATIKYAN

Associate Professor of the Chair of Special Education and Psychology, Kh. Abovyan ASPU, PhD in Pedagogy

LIDA BALABEKYAN

«Patmos–Ararat» Charity Foundation Speech Therapist

The article touches upon the importance of early assistance of children having hearing problems in the families, the main problems related to it, as well as the ways and directions of rehabilitation activities of early assistance.

Հոդվածի ներկայացման փարեթիվը՝ 16.02.14 թ.

ՉԱՐԳԱՅՍԱԼ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱԼ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЮРИЙ СИНЯГИН

*заместитель директора Высшей школы
государственного управления Российской академии
народного хозяйства и государственной службы при
Президенте РФ, доктор психологических наук, профессор*

ОЦЕНКА ЛИЧНОСТИ: РЕСУРСНЫЙ И КОМПЕТЕНОСТНЫЙ ПОДХОДЫ¹

В статье рассматриваются вопросы лично–профессиональной диагностики с позиций ресурсного и компетентностного подходов. Характеризуются названные подходы, анализируется их развитие в психологической науке и описываются возможности применения в оценке личности профессионала и управленца.¹

Ключевые слова и словосочетания: *оценка, ресурсный подход, компетентностный подход, лично–профессиональная диагностика.*

Все более и более популярным как в естественно–научных и технических, так и в гуманитарных дисциплинах становится сегодня ресурсный подход, приобретаемая, как справедливо отмечает Т.П.Зинченко [5], статус междисциплинарного объяснительного принципа взаимодействия объединенных в системные комплексы объектов. По ее мнению, это связано с тем, что ресурсный подход обеспечивает возможность при исследовании характера взаимодействия объектов, различных

по своей природе, в терминах одного языка описать как требования, налагаемые внешней средой на систему, так и внутренние возможности системы удовлетворять данным требованиям, что позволяет ввести ограничения на многообразии потенциально осуществимых вариантов взаимодействия систем.

Вместе с тем, по нашему мнению, на сам характер этого описания, прежде всего в сфере изучения человеческих ресурсов, сегодня значительный отпечаток накладывает то, что изначально понятийный аппарат и вся логика становления ресурсного подхода сформировались в сфере моделирования процессов производства и потребления в экономических науках. Традиционно экономическая теория находилась на стыке гуманитарного и естественно–научного знания. Ее всегда характеризовали попытки объединить наработки в области наук о человеке с формально–математическим подходом к описанию экономических макро и микро систем. Следствием этого выступало создание специфических моделей субъекта профессиональной деятельности,

¹ Статья подготовлена при поддержке Российского гуманитарного научного фонда

которые затем наполнялись конкретным содержанием в рамках гуманитарных дисциплин и, в частности, психологии, которая довольно быстро откликнулась на этот запрос. Последующее развитие этих содержательных идей вело к противоречию между упрощенной моделью и реальностью, что, в свою очередь, порождало формирование моделей следующего уровня.

В полной мере это относится и к ресурсному подходу. Более того, его превращение в междисциплинарный объяснительный принцип, позволяя по-новому взглянуть на субъекта профессиональной деятельности, выявляет ряд противоречий в исходной модели, которая и была его порождением. Современный этап развития исследований человековедческих наук и, в первую очередь, психологии и акмеологии позволяет полагать, что их активное включение в реализацию и развитие идей ресурсного подхода может, внести в него, как представляется много нового и конструктивного, обеспечивая как собственное продвижение, так и дальнейшее развитие его идей.

Одной из таких сфер, где идеи ресурсного подхода являются весьма перспективным выступает оценка потенциала личности.

Ресурсная концепция как концепция стратегического управления стала доминировать в экономике в 90-х годах 20 века.

Вместе с тем, идеи ресурсного подхода в управлении персоналом имеют более давнюю историю. Так, еще в 1979 году Нобелевским лауреатом Теодором Шульцем было введено понятие «человеческий капитал», под которым понималась совокупность врожденных и приобретенных человеком ценных качеств, которые могут быть усилены соответствующими вложе-

ниями». В значительной мере интерес к этому было связан с появлением на рынке компаний, рыночная стоимость которых намного превосходила стоимость их материальных активов. Так, например, в стоимости компании Майкрософт только 5% составляют материальные активы, 40–45% составляет стоимость бренда, а 50% приходится на долю человеческого капитала [2].

Сегодня человеческий капитал организации рассматривается как неоднородное образование включающее несколько составляющих, в основу которых положено разделение системы ресурсов человека. Так по мнению С.М.Климова, это жизненные ресурсы личности, ее физический и психологический потенциал, рассматриваемые в контексте способности к созданию стоимости, социальные ресурсы личности – заложенный в человеке потенциал социального взаимодействия, его включенность в определенную социальную среду. Кроме того, это интеллектуальные ресурсы личности, под которыми автором понимаются сформированные в процессе формального и неформального обучения, знания, информация и креативные способности человека [6].

Повышение реального экономического интереса к человеку как организационному ресурсу, породило изменения и в логике кадровой работы. Как отмечает Т.Ю.Базаров, «в эволюции теории и практики зарубежного кадрового менеджмента можно выделить фазы, связанные с адаптацией как новых технологий менеджмента, так и специфических подходов в кадровой работе. Подлинная революция в кадровой работе была вызвана применением после Второй мировой войны идей системного подхода в

менеджменте. Становление системного менеджмента обусловило возникновение принципиально новой технологии кадрового менеджмента — управление человеческими ресурсами. Эта технология была инкорпорирована в систему стратегического менеджмента, и функция управления персоналом стала компетенцией высших должностных лиц корпораций.

Одной из особенностей реализации в управлении персоналом модели управления человеческими ресурсами явилось внедрение компетентностной модели оценки работников. Компетенция при этом рассматривается в качестве одного из значимых и измеряемых ресурсов человека и не сводится к его индивидуально-психологическим и личностным качествам, приобретенным им знаниям, умениям и навыкам. Как отмечают авторы одной из наиболее фундаментальных работ в этой области Лайл Спенсер и Сайн Спенсер «Компетенция — базовое качество индивидуума, имеющее причинное отношение к эффективному и/или наилучшему на основе критериев исполнению в работе или в других ситуациях.

Компетенции есть базовые качества людей и обозначают варианты поведения или мышления, распространяемые на различные ситуации и длящиеся довольно значительный период времени» [7]. При этом, авторами выделяется пять типов базовых качеств:

Мотивы. То, о чем человек думает или чего хочет постоянно и что вызывает действие.

Психофизиологические особенности (или свойства). Физические характеристики и соответствующие реакции на ситуации или информацию.

Я-концепция. Установки, ценности или образ-Я человека.

Знание. Информация, которой обладает человек в определенных содержательных областях.

Навык. Способность выполнять определенную физическую или умственную задачу.

В соответствии с этим выделяются поверхностные компетенции (знания и навыки) – их относительно просто развить, а также глубинные компетенции (мотивы и свойства), лежащие в основе айсберга личности, их оценить и развить труднее; однако рентабельнее отбирать людей именно по наличию этих характеристик. Компетенции на основе Я-концепции лежат где-то посередине. Установки и ценности, такие как уверенность в себе (видение себя «руководителем», а не «техником/ профессионалом»), можно изменить при помощи тренинга, психотерапии и/или упражнения для позитивного развития, хотя это потребует больше времени и усилий [7].

В рамках компетентностного подхода сегодня активно разрабатываются модели компетенций для различных профессий и групп должностей, проводится диагностика уровня их актуального развития с точки зрения соответствия заданной модели. На основе диагностики строятся индивидуальные планы развития персонала. При этом развитие в рамках этой парадигмы выступает, прежде всего, как процесс наращивания компетенций.

Еще одним немаловажным фактом выступает то, что чрезмерное развитие той или иной компетенции рассматривается не меньшим недостатком, чем невысокий уровень ее сформированности: «Алгоритм «взвешенной абсолютной разницы» соответствия человека работе использует абсолютную ценность компе-

тенций человека и требований к компетенциям со стороны работы.

Интуитивно, вполне разумно, что чрезмерное количество одной компетенции (к примеру, очень высокая ориентация на достижение) должно компенсироваться более низким, чем требует работа, уровнем другой. От высоко мотивированного человека ждут развития компетенции, которой у него недостает. «Наказание» за чрезмерную квалификацию появилось из реальных примеров: более компетентные, чем требует работа, люди обращают слишком много внимания «не на те» аспекты работы» [7].

Очевидно, что в таком виде ресурсный подход, выступая достаточно удобным, в силу высокой формализации, средством повышения эффективности управления персоналом организации, по сути ресурсным выступает все же по отношению к организационной структуре, а не к самому субъекту профессиональной деятельности. Собственно именно субъектом в данном случае выступает сама организационная структура в логике существования и развития которой, ее стратегических задач, целей и ценностей оцениваются и развиваются ресурсы (компетенции) потенциальных и реальных сотрудников.

Именно этот момент вызывает критику у противников ресурсного подхода и поэтому многие считают, что подход к кадровой работе с позиций управления человеческими ресурсами не стоит рассматривать по образному замечанию Т.Ю.Базарова, как «панацею от всех бед» [11]. Вместе с тем, собственно ресурсный подход в данном случае не стоит рассматривать как причину подобной критики. Речь скорее идет о различных возможных позициях в оценке ресурсов человека.

В рамках отечественной психологической, (Зимняя И.А.), а особенно психолого–акмеологической науки (Держак А.А., Зазыкин В.Г., Кузьмина Н.В., Маркова А.К.) сформировалась и развивается иная трактовка компетентностного подхода, которая также может рассматриваться в логике ресурсной модели.

С позиций психолого–акмеологического подхода особое место в изучении человека профессионала занимает его «профессиональная компетентность». Как отмечают Е.В.Селезнева и А.С.Мельничук в своем подробном анализе динамики развития этого понятия в современной психолого–акмеологической науке «Профессиональную компетентность акмеологи определяют в настоящее время через понятия «способность», «готовность», «личностное качество». Тем самым в содержание профессиональной компетентности включаются не только знания, но и умения, навыки, личностно–профессионально значимые качества. При этом, как показывают последние акмеологические исследования, знания, умения, навыки и личностные качества, включающиеся в содержание профессиональной компетентности, преобразуются в так называемые компетенции». [1]

Важными с точки зрения диагностики и оценки личности выступает то, что понятие «компетентность» это сложное многоуровневое образование, При этом, оно шире понятия «компетенция». В соответствии с логикой психолого–акмеологического подхода компетенции могут входить в ее структуру в качестве мотивированных способностей и актуальной готовности к реализации определенных моделей поведения.. Еще более важным выступает еще один момент – мотивационно смысловой. В рамках психолого–ак-

меологического подхода компетентность рассматривается как глубоко личностное образование присущее человеку как субъекту профессиональной деятельности. Будучи носителем компетентности, субъект профессиональной деятельности сам выбирает сферу приложения своих сил, вписывая ее в общую индивидуальную стратегию собственной жизни и профессиональной деятельности. И здесь принципиально важным выступает возможность соотношения целей и ценностей организации с целями и ценностями самого субъекта. Именно степень этого совпадения определяет возможности самореализации человека в деятельности. Особую роль это опять-таки играет при оценке управленческого персонала организации.

В этой связи весьма интересным выступает понятие «ключевые компетенции». В современной теории развития бизнеса это, как мы уже отмечали, характеристика организации, обеспечивающая ей конкурентное преимущество на рынке. Именно развитие этой компетенции является ее стратегической задачей, обеспечивающей эффективное существование и развитие. По отношению же к человеку это те его сильные стороны и возможности, которые при определенном развитии в сочетании с другими имеющимися ресурсами могут обеспечить ему успех в современном быстро меняющемся мире.

Весьма важным здесь выступает замечание А.А.Деркача о том, что «человек должен сам определять и выработать и степень своей социальной зрелости, и степень своей компетентности, которая дала бы ему возможность найти свои собственные место и роль в современном социуме [4].

Идеи ресурсного подхода в значительной степени легли в основу актив-

но разрабатываемого сегодня и понятия «потенциал». **Под потенциалом мы понимаем кластер ресурсов, определенный уровень развития которых обеспечивает возможность успешного выполнения определенного круга или класса задач.** Применительно к анализу человеческих ресурсов здесь снова наблюдаются две проекции. Так, в психолого-акмеологических исследованиях в последние годы стал активно исследоваться «лично-профессиональный потенциал». Как отмечает в своем диссертационном исследовании В.Н.Марков «Лично-профессиональный потенциал определяется как часть личностного потенциала, направленная на профессиональную реализацию» [4]. Автором подробно анализируются основные направления реализации потенциала личности: внешнее, направленное на биосферу, социум, техносферу и инфосферу; внутреннее, связанное с направленностью личности и имеющее иерархическую структуру, которая объединяет различные уровни потенциала (биологический, психо-физиологический и личностный) и опирается на переход от энергетической саморегуляции индивида к ценностно-смысловому самоуправлению личности. Лично-профессиональный потенциал, обеспечивающий прогрессивное развитие личности в процессе профессиональной деятельности, рассматривается в качестве основы становления профессионализма личности, дополняя набор акмеологических инвариантов профессионализма.

Примечательными здесь выступают два момента. Во-первых, описывая понятие лично-профессиональный потенциал, В.Н.Марков отмечает, что далеко не все внутренние ресурсы получают

развитие в ходе жизни человека, поэтому в его потенциал включаются только те из них, которые оказались востребованы в соответствующем социокультурном окружении и поэтому развились наиболее полно [8]. Во-вторых, то, что личностно-профессиональный потенциал рассматривается как часть более широкого потенциала личности.

Таким образом, проведенный анализ выводит нас на несколько другое возможное измерение ресурсов, что задает иную логику построения диагностики человеческих ресурсов и личностно-профессионального потенциала.

Прежде всего, это компетентностная диагностика, направленная на выявление ресурсов человека с позиций наиболее эффективного использования имеющегося потенциала в рамках конкретной организации с учетом ее актуального состояния и перспектив стратегического развития.

Далее это более глубокая личностно-профессиональная диагностика, направленная на диагностику личностных ресурсов, интересов, склонностей и способностей, профессиональной и личностной компетентности с учетом индивидуальной жизненной стратегии, личностно-профессионального и управленческого потенциалов с целью определения ключевых компетенций и компетентностей обеспечивающих наиболее полную и эффективную самореализацию субъекта различных сферах профессиональной деятельности, а также наметить наиболее актуальные направления его личностного и профессионального роста и развития.

Наконец, это наиболее комплексная и всесторонняя психолого-акмеологическая диагностика, включающая исследо-

вание целого комплекса биологических, психо-физиологических, психологических, личностных ресурсов человека, его профессионализм и компетентность с целью оказания содействия в его эффективной самореализации в социуме в качестве субъекта собственной жизни и деятельности, отслеживающая в мониторинговом режиме динамику этих изменений и обеспечивающая своевременную помощь и содействие в максимальном раскрытии его личностного и профессионального потенциала.

Содержательные различия между этими моделями задают отличия не только и не столько в используемом инструментарии, хотя в рамках каждой из них есть наиболее адекватные ее задачам инструменты, сколько в методологии оценки результатов диагностики.

Так, в компетентностной диагностике, несмотря на ее ресурсную ориентированность, реализуется в большей мере нормативно-дефицитарная модель оценки, где основным выступает оценка уровня развития компетенций в рамках заданной нормативной шкалы и определение направлений их развития до уровня заданного норматива.

Личностно-профессиональная диагностика, включая эту составляющую, в большей степени ориентирована на нормативно-ресурсную модель. При таком подходе центральным выступает выявление на основе данных нормативной модели наиболее сильных сторон человека, оценка его потенциала и возможностей переструктурирования ресурсов с целью максимально эффективного их использования при выполнении различных видов профессиональной деятельности, а также определение на основе анализа структурных особенностей личностно-профессио-

нального и управленческого потенциалов наиболее эффективной позиции в организационно–управленческой иерархии и управленческой команде с целью построения индивидуально ориентированной модели профессиональной и управленческой карьеры.

Thus, in the 1926–35s Hrachia Adjarian’s “Armenian Etymological Dictionary” was published in Yerevan (in seven volumes). All the Armenian roots are included in this dictionary: each word is discussed through five separate sections. 1. Lexicology, 2. Etymology, 3. History of Etymology, 4. Dialectal words, 5. Loanwords from Armenian.

Two out of the five sections of the dictionary are based on the data from NHD: Lexicology for the most part and Etymology partially.

The lexicological section provides the root of a word, the declensional and conjugational forms of that root, the meanings and its definition, examples of usages of that word, other words derived from it and finally, its spelling. Etymology and etymological history sections touch upon the origin of roots, and various observations on that issue. The favourable impact of NHD is considerable in this part of the dictionary: in many cases the author confirms NHD’s etymologies and continuously illustrates the Mkhitarists’ ideas about roots in his section of History of Etymology.

In the 1944–45s Stepanos Malkhasiants’ four–volume “Armenian Explanatory Dictionary” was published in Yerevan. This work presents the Armenian vocabulary beginning from the 5th century Literature up to the literary language and dialects of modern times, borrowings made at different periods, the origin of the roots, appropriate examples of meanings, grammatical indices, etc.

We can undoubtedly mention that a voluminous work like this could not have been written but for the famous NHD’s guiding data: firstly, this refers to the choice of the vocabulary of Classical Armenian, the in-

terpretation of their meanings and, most importantly, the discovery of the original or old meanings of words. S. Malkhasiants, assuming NHD's reliable evidence as a basis, presents the old meanings of Classical Armenian with an asterisk.

The 1969–80s saw the publication of the four-volume “Explanatory Dictionary of Modern Armenian” in Yerevan, which was a result of a whole consortium of authors. It was during this period in 1976 that E. Aghayan published his detailed “Modern Armenian Explanatory Dictionary” in two volumes.

Albeit being a bit old-fashioned, these works are perfect explanatory dictionaries of the Armenian language which give a clear picture of the Armenian vocabulary, its sense, direct and figurative meanings, word-formation, spelling, idioms and set-expressions.

Although these kinds of dictionaries include the vocabulary of the Armenian language and its meanings, their lexicographical approaches are based on certain set and accepted principles which have come down to us thanks to the abbot MkhitarSebastatsi and his venerable students.

The influence that the lexicographical heritage of the Mkhitarists had in subsequent years, especially in the field of compiling Classical Armenian dictionaries, is overwhelming.

Around 160 years after the well-known NHD, in 1998 the first modest dictionary of Classical Armenian was published in Armenia which was written by the author of the present speech.

The dictionary is devoted to the layer of Classical Armenian vocabulary that had morphological polysemy in the period of Old Armenian. Certain lexical units of the language display more than one morphological value on the synchronic level.

Though we had the published concordance of Classical Armenian authors at hand while compiling the dictionary, the linguistic propositions, lexicographical principles and the semantic descriptions of Classical Armenian words proposed by NHD's authors served as guidelines for us throughout our work. We have devoted the dictionary to the bright memory of our outstanding lexicographers G. Avedikian, Kh. Surmelian and M. Avgerian and to their richly-endowed merit, that is, the 160th anniversary of the publication of their lexicographical monument “New Dictionary of the Haykazian Language”.

Continuing our studies in this field we published the revised variant of this dictionary in 2003, namely, “Explanatory Dictionary of Classical Armenian: morphologically polysemantic words”. Using the literary monuments of Classical Armenian we bring examples for each of the dichotomic value of morphologically polysemantic words from original texts. We undoubtedly had NHD's guiding data as a basis for our research.

R. Ghazaryan's two-volume “Dictionary of Classical Armenian” was published in Yerevan in the year 2000. This is a complete dictionary based on the principles of not only NHD, but also “Handbook Dictionary”: it has enriched Classical Armenian vocabulary to a certain extent due to the data from new sources of Literature. We can directly state that this dictionary is a transformation of “Handbook Dictionary” into New Armenian or Ashkharhabar. This is a unique dictionary in its kind and thanks to it specialists will not find the tedious work of translating Classical Armenian original texts difficult any more. In view of the Mkhitarists well-known dictionaries, R. Ghazaryan also compiled “Classical Armenian Dictionary of Synonyms” (Yerevan, 2008) and “Classical Armenian Dictionary

of Idioms” (Yerevan, 2012). Unfortunately, the latter was published posthumously. In 1987–92 he published the two-volume “Middle Armenian Dictionary” together with H. Avetisyan. The Classical Armenian words and their meanings used in Middle Armenian were interpreted via NHD’s trusted data in this dictionary.

2010 saw the publication of L. Hovhannisyan’s “Dictionary of Classical Armenian: words not mentioned in “NewHaykazian Dictionary”. It included words, styles and idioms the author had taken from Old Armenian Literature. After the publication of Haykazian Dictionary a lot of researchers (N.Byuzandatsi, H. Acharyan, Aris,Vardanyan and others) on various occasions reverberated these “newly-found” and “novel” words not touched upon in the dictionary. And L. Hovhannisyan, having Mkhitarist Vardapets’ masterpiece at his disposal, compiled and explained numerous new words in accordance with textual evidence. The authors of NHD were most probably not acquainted with these original texts. The present dictionary is a unique completion of the renowned NHD’s wordlist and explanations of word entries.

As we have noticed, nowadays Classical Armenian Lexicography has seen an explosion of interest: we want to emphasize once again that the fundamental works created by the Mkhitarists have greatly contributed to this.

In 2013 we authored and published “Classical Armenian Educational Dictionary”, which presented Old Armenian vocabulary from Armenian Literature of the 5–12 centuries, selected by certain principles. We included the material of those literary monuments which have to do with the problem of translatability of Classical Armenian original texts and are in the curriculum of universities intended for students studying Classical Armenian.

We want to round up our speech with a quotation from the foreword of our own dictionary, “It is impossible to undertake a Classical Dictionary of any kind and not to draw parallels with the fundamental and ground-breaking “New Dictionary of the Haykazian Language”. The lexicographical monument compiled by the venerable Mkhitarists is a wealth of a word stock of Classical Armenian together with the explanations of word-meanings and their nuances, examples from original texts, grammatical descriptions, phraseological units, sources of borrowings and comparative translations from a number of languages. “Handbook Dictionary”, which is not less well-known, has also served as an essential source of the precision of Classical Armenian vocabulary and word-meanings for us. The latter has been enriched by around five thousand words and word combinations in comparison with NHD” (pages 3–4).

It is certainly undeniable that the MkhitaristVardapets’ lexicographical heritage played a great role in other spheres of Armenological developments as well: what we mean here are the Classical Armenian textbooks, the research papers devoted to the Armenian language, the synchronous studies on the various existential conditions of the language, thesis papers of various types, etc.

As specialists of Classical Armenian and authors of textbooks and dictionaries, we fully confirm that G. Avedikian’s, Kh. Surmelian’s and M. Avgerian’s richly-endowed merit is a literary monument of not only Armenian Lexicography, but also Armenian book printing in general. Finally, the following description suitable for Homer’s work, can also be extended to it: it is a literary monument which has the definition of both being unreachable and unexcelled.

REFERENCES

1. E. Aghayan, Modern Armenian Explanatory Dictionary, Yerevan, 1976.
2. H. Adjarian, Armenian Etymological Dictionary, v.v. A–D, Yerevan, 1971–79.
3. Handbook Dictionary, Venice, 1865.
4. Explanatory Dictionary of Modern Armenian, v.v. A–D, Yerevan, 1969–80.
5. L. Hovhannisyan, Dictionary of Classical Armenian: words not mentioned in New Haykazian Dictionary, Yerevan, 2010.
6. L. Khachatryan, Explanatory Dictionary of Classical Armenian Polysemantic words, Yerevan, 1998, Explanatory Dictionary of Classical Armenian: morphologically polysemantic words, Yerevan, 2003, Classical Armenian Educational Dictionary, Yerevan, 2013.
7. R. Ghazaryan, Dictionary of Classical Armenian, v.v. A–B, Yerevan, 2000. Classical Armenian Dictionary of Synonyms, Yerevan, 2006. Classical Armenian Dictionary of Idioms, Yerevan, 2012.
8. S. Malkhasiants, Armenian Explanatory Dictionary, v.v. A–D, Yerevan, 1944–45.
9. New Dictionary of the Haykazian Language, v.v. A–B, Venice, 1836–37.
10. New Dictionary of the Haykazian Language, edited and enriched by NorayrByuzandatsi, published by M. Minasyan, Geneva, 1990.

«ՀԱՅԿԱԶՅԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԸ» ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր

Հայերենի տպագիր բառարանագիտությունը ծագել է 17-րդ դարի սկզբին, ինչպես նաև, 18-րդ դարի կեսերին երեք Մխիթարյան քահանաներ Գ. Ավետիքյանը, Մ Ավերգյանը և Խ. Մյուրմելյանը անվանեցին իրենց աշխատանքը «Հայկազյան լեզվի Նոր Բառարան», որը լույս տեսավ Վենետիկում: Առաջին հայերեն տպագիր բառարանը թարգմանվել է հայագետ Ֆրանցիսկո Ռիվոլայի կողմից, Միլանում, 1621 թ–ին, իսկ ավելի ուշ՝ լեհ–հայ եպիսկոպոս Աստվածատուր Ներսեսովիչի կողմից, որը տպագրվել է Հռոմում, 1695 թ–ին: Դրանց հաջորդեցին նաև հայերեն բացատրական բառարանները, որի առաջին հեղինակը միջնադարյան գրող Յերեմիա Մեղրեցին է՝ իր «Բարիք Հայոց» գրքով: 18-րդ դարի սկզբին Մխիթարյան միաբանությունը դառնում է հայ տպագրության օրրանը, որը հատկանշական է բազում քերականական, բառարանագիտական, պատմական, բնագիտական և բանասիրական հատորյակներով: Բայց գլուխգործոց է համարվում երկու հատորով տպագրված «Հայկազյան լեզվի նոր բառարանը», որը լույս տեսավ սուրբ Ղազար տպագրատանը, Վենետիկում, 1836–37թթ.:

„НОВЫЙ СЛОВАРЬ ГАЙКАНСКОГО ЯЗЫКА” В КОНТЕКСТЕ ФОРМИРОВАНИЯ
АРМЯНСКОЙ ЛЕКСИКОГРАФИИ

ЛАЛИК ХАЧАТРЯН

Армянская печатная лексикография сформировалась в начале XVII века, а в середине XVIII века в Венеции был издан труд трех духовных отцов – Г.Аветикяна, Х.Сюрмеляна и

М.Авгеряна – “Новый словарь гайканского языка” (тт. 1–2, 1836–1837).

Все словари древнеармянского языка, изданные в армянской действительности, безусловно, исходят из общеизвестного НСГ. Таковыми являются словари, составленные Ст.Малхасянцем, Н.Бузандийским, Л.Хачатряном, Р.Казаряном, Л.Оганесяном.

Принципы, разработанные в НСГ, относятся к выбору словарного состава языка, структуре словарных статей, смысловым объяснениям, проявлениям полисемии, фразеологическим единицам, переводу на другие языки, этимологии, диалектным вариантам, метаязыку и т.д.

В области арменистики НСГ безусловно считается непревзойденным памятником лексикографии.

Հորիւծի ներկայացման փուլերիցը՝ 03.03.14 թ.

ՆՎԱՐԳ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի հայ
բանասիրության ֆակուլտետի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու,*

ՆԱՐԻՆԵ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի կրթության
որակի ապահովման բաժնի պետ*

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մեր օրերում բանահյուսական հեքիաթը թեև այլևս այն չափով չի պատմվում, ինչ առաջ, սակայն այն շարունակում է իր զարգացումը գրականության մեջ: Հեղինակային մոտեցումները ժողովրդական նյութին այսօր բավական տարբեր են՝ սկսած գրական մշակումներից, վերջացրած լեզվական փոխադրություններով:

Գրական մշակման ճանապարհով ստեղծվող ժողովրդական հեքիաթների ժողովածուներ վերջին տասնամյակներում թեև սակավ, այնուամենայնիվ ստեղծվել են: Դրանց մեջ կան և՛ նյութին հարազատ բարձրարժեք մշակումներ՝ յուրատիպ հեղինակային մոտեցումներով (Ս. Քոչարյան, Լ. Խեչոյան), և՛ բոլորովին նոր ու արտասովոր սկզբունքներով ստեղծված մշակումներ (Գ. Բաբայան): Որոշ գրողներ էլ վերափնաստավորում կամ ժամանակակից մեկնաբանություններով են ներկայացնում ժողովրդական հայտնի հեքիաթների սյուժեները (Ա. Ոսկանյան, Ա. Օհանյան, Ն. Աղալյան):

Գեղարվեստական մշակումներից բացի այսօր գրական շուկայում մեծ տեղ են գրավում նաև բանագետների կողմից կազմված ժողովածուները, որոնցում ժողովրդական նյութը լեզվական փոխադրության է ենթարկված, բարբառային անհասկանալի և խրթին ձևերը մեղմացված են (Ա. Նազիկյան, Ն. Հակոբյան, Ա. Ղա-

զիյան, Ս. Վարդանյան): Այսպիսի հանրամատչելի ժողովածուները խիստ նպաստավոր են ժովրդական նյութը վերստին շրջանառության մեջ դնելու առումով:^{***}

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ բանահյուսական հեքիաթ, գրական հեքիաթ, ժողովրդական հեքիաթներ, հեքիաթի լեզաոճական առանձնահատկություններ

Այրելով և կենցաղավարելով բանավոր ժողովրդական հեքիաթը գրառումից հետո ևս չի դադարում իր յուրակերպ գոյությունն ու զարգացումը: Գրառվելով՝ բանահյուսական հեքիաթը մի երկրորդ կյանք է ստանում՝ այս գոյավիճակով ևս շարունակելով ձեռք բերել նորանոր տարբերակներ՝ հեքիաթի հեղինակային մշակումների ճանապարհով: Այսօր մշակված հեքիաթներ ասելով հասկանում ենք որակապես բավական տարբեր պատումներ. և՛ բարձրարժեք գրական-գեղարվեստական մշակումները դասական գրողների կողմից, և՛ պարզապես որոշակի լեզվական մշակման, փոխադրության ենթարկված, գրական լեզվով վերաշարադրված ժողովրդական հեքիաթները: Ներկա հոդվածի շրջանակներում կփորձենք ընդհանուր կերպով ուրվագծել զարգացման այն հիմնական միտումները, որոնք ուղղորդում են բանահյուսական հեքիաթի գրական նման փոխակեր-

պումները վերջին տասնամյակներին:

Բանահյուսության զարգացման ներկա փուլում, հեքիաթասացության կենդանի գործընթացի աստիճանական մարման պայմաններում, շատ ավելի կենսունակ է դառնում արդեն գրառված ժողովրդական հեքիաթը: «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի ակադեմիական բազմահատորյակում լույս տեսած հեքիաթները ներկայումս առավելապես ծառայում են գիտական ուսումնասիրման նյութ, քանի որ որոշ բարբառների անհասկանալիության պատճառով դժվար են յուրացվում հատկապես մանուկ ընթերցողի կողմից: Առաջ է գալիս արդեն գրառված հսկայածավալ հեքիաթային նյութը ընթերցող լայն հասարակությանը մատչելի դարձնելու պահանջը, որն էլ իրականացվում է կան գրական մշակման, կան լեզվական փոխադրության ճանապարհով:

Հեքիաթի մշակման ասպարեզում փայլուն ձեռքբերումներ ունեցած հայ գրողների ավանդներն այսօր, կարելի է ասել, զարգացում չեն ապրում: Ընդհանրապես, արդի գրականության մեջ գերակշռում է հեղինակային հեքիաթը, իսկ ժողովրդական հեքիաթներ մշակող սակավաթիվ հայ գրողներն էլ ժողովրդական նյութի մշակման նոր մոտեցումներ են նախընտրում:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այսօր տպագրվող գեղարվեստական գրականության մեջ բավական մեծ տեղ են գրավում հենց հեքիաթների բազմազան ժողովածուները: Զարմանալիորեն ներկա իրականության մեջ, երբ ընթերցանությունը, մեղմ ասած, իր բարձունքում չի, գրախանութներում ամենասպառվողը մանկական գրականությունն է, մասնավորապես՝ հեքիաթների գրքերը: Այս հանգամանքը ոգևորում է տարբեր հրատարակչությունների՝ զարկ տալ հեքիաթների ժողովածուների լույսընծայմանը: Նման պայմաններում գրքի շուկայում հայտնվում են հեքիաթների ամենատարբեր որակի լույսընծայումներ՝

սկսած դասական սիրված հեքիաթներից մինչև ժամանակակից մուլտֆիլմերի մոտիվներով ստեղծված պատկերազարդ գրքույկներն ու գունազարդման տետրերը, որոնց էջերում մուլտֆիլմերից քաղված պատկերների առատության մեջ ժլատ տեղ են զբաղեցնում երբեմն ոչ այնքան ճաշակով և գրագետ շարադրված բնագրերը: Այսպիսի գրքույկներում երբեմն բավական կոպտորեն և ոչ արհեստավարժ ձևով կրճատվում են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան դասականների հայտնի հեքիաթները, որը երբեմն անհասկանալիության աստիճանի խեղում է հեքիաթի դիպաշարն ու բովանդակությունը:

Մակայն թողնենք նմանատիպ հրատարակչությունները, որոնց քննությունն այժմ մեր նպատակից դուրս է, և սևեռենք մեր ուշադրությունը գրողների կամ մասնագետ-բանագետների կողմից վերջին երեք տասնամյակում կազմված ժողովրդական հեքիաթների մի շարք ժողովածուների ու առանձին մշակումների, որոնց դիտարկումը թույլ կտա որոշակի հետևություններ կատարել ժողովրդական հեքիաթների ընկալման հեղինակային մոտեցումների վերաբերյալ:

Նորագույն շրջանում ստեղծված ժողովրդական հեքիաթների գրական մշակումների ժողովածուներից այսօր, հատկապես համացանցային օգտատերերի շրջանում, ամենից սիրված և ընթերցվող ժողովածուն ասմունքող-արտիստ Սուրեն Քոչարյանի կազմած և մշակած «Արև հեքիաթ» (1979) գիրքն է: Այսօր հայկական համացանցային քննարկումներում (ֆորում) բավական հաճախ կարելի է հանդիպես հենց այս ժողովածուից քաղված ժողովրդական հեքիաթների բնագրերի:

Եթե գրականության մեջ հեքիաթներ մշակողներին պատկերավոր կերպով կարող ենք հեքիաթասացներ անվանել, իսկ նրանց մշակած պատումները՝ հեքիաթների նոր «տարբերակներ», ապա Ս.Քո-

չարյանի դեպքում թերևս այս տերմիններն ավելի մոտ են իրենց նախնական իմաստավորմանը, քանի որ հեքիաթները մշակվել են անմիջապես բեմից բանավոր պատմվելու նպատակով: Ինչպես Քոչարյանի մշակած «Մասունցի Դավիթ» կոմպոզիցիան Լ.Հախվերդյանը համարում է «Մասնա ծերի» մի նոր տարբերակ՝ մեր օրերի ասացողի հեղինակությամբ¹, այնպես էլ այս ժողովածուի հեքիաթները շատ նման են բանավոր պատումի նոր տարբերակների: Ժողովրդավստակցական լեզվով ստեղծված կենդանի պատումները ավելի անմիջական են դառնում հեղինակ-ասացողի ուղղակի մասնակցությամբ: Ընդ որում, հեղինակ-մշակողն այս ժողովածուում ինքնատիպ սկզբունք է կիրառում. նա հեքիաթները կոմպոզիցիոն մի հյուսվածքի մեջ է դնում՝ ներկայացնելով որպես իր պապի կողմից պատմվող պատումներ, որոնք ունկնդրում են թոռները: Հեքիաթների վերջում հաճախ հայտնվում է նաև տատի կերպարը, որը պապի հետ քննարկում է հեքիաթի գաղափարը:

Պապս հեքիաթը որ թամամացրեց, ասեց.

— Տեսա՞ք, ոսկերիչը ոնց խելոքացրեց էն թագավորին:

Տատս, ասած կլինեմ ձեզ, շատ խելոք կնիկ էր:

— Ալևոր, — ասեց, — թագավորի խելոքանալը ո՞րն ա: Չես իմանում, որ թագավորի միրուքը պալատականների ու հարուստների ձեռքին ա: Որ կուռն ուզեն, էն կուռը շուռ կտան:

— Ուրեմն հեքիաթն էլ չասե՞մ, — նեղացավ պապս:

— Չէ, — ասեց տատս, — ինչի չէ, հեքիաթը դաս ա լսողներին, ամա թագավորի խելոքանալը լինելու բան չի:

— Դու էլ ես արդար, այ կնիկ, — ասեց պապս:

¹ Լ.Հախվերդյան, Կոմպոզիցիան Սուրեն Քոչարյանի արվեստում, «Հայկական ՄՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», Եր., 1962, էջ 60:

Իհարկե՛ արդար ա:

Պապի ու տատի այս երկխոսությունները ունկնդրին կամ ընթերցողին օգնում են ճիշտ ընկալելու հեքիաթի իմաստը, ընդգծում են դաստիարակչական դերը, ինչպես նաև անուղղակիորեն նախապատրաստում են հաջորդ հեքիաթի կյուրին:

Ժողովրդական հեքիաթների մշակումները մի ամբողջական կոմպոզիցիոն շրջանի մեջ հյուսելու և դրանց «նախաբան հեքիաթ» կցելու մոտեցումը նոր չէ. այսպիսի դրսևորում տեսնում ենք դեռ արաբական «Հազար ու մի գիշերներում»²:

Բեմից ներկայացվելու սկզբունքի առաջնահերթությամբ են մշակված նաև թատերագետ-դրամատուրգ Խաչատուր Ավագյանի՝ ժողովրդական հեքիաթների սյուժեների հիմքով ստեղծված պիեսները³: Վերջինիս մշակումները յուրատիպ են նրանով, որ հեղինակը մշակման է ենթարկել ոչ թե առանձին հեքիաթների սյուժեներ, այլ մի պիեսի շրջանակում հաջորդաբար միահյուսել է մի քանի հեքիաթ, որոնք գաղափարական ամբողջության են վերածվել: Այսպես, նա «Ճանապարհ» պիեսում միահյուսել է երկու տարածված ու սիրված հրաշապատում հեքիաթներ՝ Օխայ վարպետի և նրա աշակերտի սյուժեին պիեսում հաջորդում է Հազարան բլբուլի սյուժե: Հերոսները գաղափարատիպերի են վերածվում, բարու, գեղեցիկի ու քաջության գովքը երբեմն հեղինակին ուղղակի խոհերի ու դատողությունների է մղում:

Առավել բազմազան, բայց դարձյալ գաղափարաբանորեն իրար միահյուսված սյուժեներով է զարգանում

² Abd-El-Hameed Hawas, A prologue Tale as Manifesto Tale: Establishing a Narrative Literary Form and the Formation of Arabian Nights, 'Marvels & Tales, vol. 21, No. 1, Fairy Tales, Printed Texts and Oral Tellings, 2007, pp. 65-77.

³ Ավագյան Խաչատուր, Ճանապարհ: Պիեսներ, Եր., 1988: Ավագյան Խաչատուր, Մեր խելոքները: Վավերական և անվավեր ժպիտներ: Պիեսներ, Եր., 2002:

«Մարդուս ետին խելքը» պիեսը: Ստեղծագործության առանցքը դառնում է իրապատում հեքիաթի հայտնի հերոսը՝ խելացի, ճարպիկ, հնարագետ, որի շուրջ հյուսված տարբեր պյուժեները հեղինակը հմտորեն կապակցում է՝ հաջորդաբար իրար կցելով այժմ ծախող գյուղացու, դժվար խնդիրների լուծման, սուտասանի, թագավորի կամակոր աղջկա, կաղի, քյուսայի ու կուզի հեքիաթային պյուժեները: Թեև հեղինակը հիմնականում հավատարիմ է մնում ժողովրդական նյութին, սակայն երբեմն առկա են հեղինակային միջամտություններ, ինչպես նաև, այստեղ ևս երբեմն առկա է մերկապարանոց քարոզը և բարոյախոսությունը:

Ի.Ավագյանի այս պիեսները, թեև կարծես թե այսօր ընթերցող լայն հասարակության մեջ այնքան էլ տարածված չեն և, ցավոք, ըստ արժանվույն գնահատված չեն, սակայն դրանք իսկապես բավական ուշագրավ դրսևորումներ են հայ հեքիաթագրության պատմության մեջ: Հեքիաթների ընտրությունը և դրանց հմուտ համակցումները խոսում են հեղինակի՝ ժողովրդական հեքիաթների քաջատեղյակության մասին, իսկ տարբեր հեքիաթների միահյուսումը ծավալուն պիեսի հյուսվածքում ամբողջացնում է տվյալ հերոսի տիպը և լիովին ներկայացնում է ժողովրդական հեքիաթի հարուստ աշխարհը:

Ժողովրդական հեքիաթների մշակումների սակավաթիվ ժողովածուներից ուշարժան է արդի գրականության լավագույն հեղինակներից մեկի՝ Լևոն Խեչոյանի՝ «Տան պահապան հրեշտակը» (2002) գիրքը: Ավանդականին հակադրվելու ձգտումը այս ժողովածուում դրսևորվում է հեքիաթների ընտրության ինքնատիպ սկզբունքով: Հեղինակը հեքիաթների իր՝ բանաստեղծական դասակարգումն է առաջարկում՝ «իրաշապատում, իրապատում և էգոտերիկ» իր մշակած հեքիաթները համարելով երրորդ խմբի

պատումներ: «Բարձր Հայքի լեռներից իջած, մաքուր ու «աստվածաշնչյան ճշմարիտ վկայություններ» պարունակող հեքիաթների մի փունջ է սա, ուր չեն հիշատակվում դևեր, քարացած քաղաքներ, պառավ վիուկներ», — կարդում ենք ժողովածուի առաջաբանում:¹ Խեչոյանի մշակած այս հեքիաթները գաղափարական մի ամբողջություն են կազմում. ակնհայտ է, որ հեղինակը իր առջև չի դրել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ժողովրդական նյութին հավատարիմ մնալը, բարբառային լեզուն, ժողովրդական խոսքի պարզությունը պահպանելը: Խեչոյանը լույս աշխարհ է հանում ժողովրդական պարզ պյուժեների մեջ թաքնված խոր փիլիսոփայությունները և քսանմեկերորդ դարի գրողի խոսքերով հնչեցնում է դրանք՝ կյանքի իմաստի, ճիշտ ապրել կարողանալու հմտության, բարու ու չարի հարաբերակցության, բարու՝ որպես բացարձակ արժեքի գերակայության մասին: Հեքիաթները մեկնաբանվում են քրիստոնեական գաղափարաբանության տեսանկյունից, հեղինակը հաճախ մանրամասն վերլուծում է հերոսների մտորումները, նրանցից յուրաքանչյուրի ապրելու փիլիսոփայությունը, բաներ, որ չենք կարող գտնել ժողովրդական հեքիաթների բնագրերում: Պատահական չէ նաև ժողովածուի վերնագիրը. «Տան պահապան հրեշտակը» «Դովլաթը» հեքիաթի փոխադրված տարբերակն է, որը բնութագրական է գրքի ընդհանուր բարոյախոսության տեսանկյունից. արդի նյութական դարում տան պահապան հրեշտակը երես է թեքել մարդկանցից, այդ է պատճառը, որ հերոսների գործերը «թարս են գնում»: Հեղինակի հորդորն է՝ վերագտնել ճշմարիտ հոգևոր արժեքները և այդպիսով կրկին շահել պահապան հրեշտակի ներկայությունը մեր տներում:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդական

¹ Լևոն Խեչոյան, Տան պահապան հրեշտակը, Եր., «Ասահիտ» հրատ., 2002թ.:

դարավոր սյուժեները այսօր և միշտ արդիական են հնչում յուրաքանչյուր նոր մեկնաբանողի շուրթերից: Ակնհայտ է նաև, որ ինչպես բանահյուսության, այնպես էլ գրականության մեջ աստիճանաբար ընդծվում է իրապատումի, բարոյախրատական սյուժեների գերակայությունը՝ որպես մերօրյա մարդուն ավելի հարագատ տեսակ:

Մշակման բոլորովին նոր ու անսովոր սկզբունք ենք տեսնում Գրիգոր Բաբայանի «Հայկական հակաժողովրդական հեքիաթներ» (1903) գրքում: Բուն իմաստով սրանք մշակումներ էլ չեն, այլ հեքիաթի մեկնաբանություններ, մտորումներ ու վերլուծություններ՝ գեղարվեստի շրջանակներում: Բաբայանի հեքիաթները կարծես ինքնատիպ կոլաժներ լինեն: Հեքիաթներում ժողովրդական տեքստից քաղված ուղղակի բարբառային հատվածների կողքին տեղ են գտնում երբեմն բավական խորին և ոլորուն՝ հեքիաթին ոչ բնորոշ ոճով ու գրական լեզվով շարադրված հեղինակային մտորումները, որին կարող է հաջորդել, ասենք, հեքիաթային բնապատկերի նկարագրությունը՝ «Պուշկինի՝ թունալայանական թարգմանության բառացի տողերով¹, և այս ամենի կողքին՝ Շերենցի մասին Հենրիկ Մալյանի մտորումն ու Աստվածաշնչյան տողերի հիշատակումը: Նույնպիսի կոլաժ է ստեղծվում նաև լեզվական առումով. բարբառի կողքին՝ գրական բարձր ոճ, հետո գրաբար և այդպես շարունակ: Եվ եթե գրքի անվանումը կարող է ընթերցողին թյուրիմացության մեջ գցել՝ հուշելով ժողովրդականությանը դեմ պատումների առկայություն, ապա իրենք՝ պատումները, բավական հեռացած լինելով ժողովրդականից, հանգում են նույն իրենց ակունքներին, ժողովրդի մտածողության բացահայտմանը, հեքիաթների իմաստի որոնումներին: Ընդ որում, հեղինակը

բավական ծանոթ է հեքիաթների գիտական մեկնություններին, և հաճախ այս կամ այն մոտիվի վերաբերյալ իբրև թե իմիջիայրոց ավելացնում է, թե ինչպես գիտնականները կվերլուծեին տվյալ սյուժեն կամ մոտիվը՝ ելնելով, ասենք, ծիսական կամ հոգեվերլուծական տեսություններից:

Բանահյուսական հեքիաթի՝ այս կամ այն սկզբունքով իրագործվող հեղինակային մշակումներից բացի, այսօր գրականության մեջ մեծ տեղ է զբաղեցնում հեքիաթային սյուժեների և կերպարների օգտագործումը՝ հեղինակային հյուսվածքում: Ընդ որում, ավանդական սյուժեներն այսօր տարբեր հեղինակների երկերում վերահիմաստավորվում են, վերափոխվում, ժամանակակից մեկնություններ ստանում: Այս տեսակետից բնորոշ օրինակ է ժամանակակից գրող Արփի Ոսկանյանի «Կարմիր գլխարկով գորշ գայլը»² ստեղծագործությունը, որը հայտնի հեքիաթի ժամանակակից մեկնաբանությունն է: Ավանդական չարի կրող գայլը, որը դարեր ի վեր իր վրա է վերցրել չարի մարմնավորման բարդ ու անշնորհակալ գործը, ահա, հոգնել է իր չարությունից, և հերթական անգամ հրաժարվում է ուտել Կարմիր Գլխարկին, իսկ ուշացող գայլին սպասելիս փայտահատների հետ հարբած Կարմիր գլխարկը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե ինչու գայլը չի շտապում իմանալ իր տատիկի տան տեղը, որպեսզի հետո «խժռի» և՛ տատիկին, և՛ իրեն³: Չարի և

² Արփի Ոսկանյան, «Կարմիր գլխարկով գորշ գայլը», <http://arpi-voskanyan.blogspot.com>, 07.05.2013:

³ Ի դեպ, չարիքի մեղքն իր վրա վերցրած և հեքիաթներում անվերջ բացասականի կրող գայլի հանդեպ նույնպիսի խղճահարական վերաբերմունք մոտիվներով էր կառուցված վերջերս Խամահիկների թատրոնում ցուցադրված մի ներկայացում, ուր իրար էին կցված Կարմիր գլխարկի ու երեք խոզուկների հեքիաթները: Այստեղ գայլը հանդես էր գալիս որպես մի խեղճ, միշտ քաղցած ու հալածված կենդանի, որի մեղքն ընդամենը այն է, որ ինչպես բոլոր կենդանի արարածները, ինքն էլ ուզում է ուտել, սակայն յուրաքանչյուր դեպքում

¹ Բաբայան Գրիգոր, Հայկական հակաժողովրդական հեքիաթներ, Եր., 1903, էջ 8:

բարու դասական ընկալումը կասկածի ենթարկելու, մարդկային մտածողության ավանդական հեքիաթային կաղապարները վերաբժնորելու այսպիսի մոտեցումն ընդհանրապես հատուկ է արդի գրականությանը:

«Կիկոսը» հեքիաթի թումանյանական մշակման մի յուրահատուկ մեկնաբանություն ենք տեսնում Արմեն Օհանյանի «Կիկոսի վերադարձը»¹ ստեղծագործության մեջ: Հեղինակի համար սկզբնաղբյուր են հանդիսանում ոչ թե հեքիաթի ժողովրդական տարբերակները, այլ Հովհաննես Թումանյանի մշակումը: Հեղինակը այն համոզման է, որ «իր ժողովրդի հետագա հաջողությունը Թումանյանի հեքիաթները վերապրելուց է կախված», քանի որ «հայկական ժամանակը քարացել է երեք հզոր հեքիաթի մեջ. «Ձախորդ Փանոսը հայի անցյալն է, հայի բախտը, որ չի բերել, «Քաջ Նազարը»՝ ներկան, հայոց երազն ու երազանքը, իսկ «Կիկոսի մահը»՝ վախն ապագայի նկատմամբ»²: Իրականում լույս աշխարհ եկած Կիկոսը ողջ կյանքի ընթացքում վերապրում է իր մահը նորից ու նորից և ջրհորի ու ծառի սարսափը նրան մղձավանջ է դառնում՝ թույլ չտալով ապրել: Ավելի խորհրդանշական է պատմվածքի ավարտը. Կիկոսը, որ ի վերջո իր սարսափներից ազատվելու համար փախչում է և բարձրանում արգելված հաստաբուն ծառը, հանկարծ տեսնում է, որ ինքն այնտեղ մենակ չէ. «Մեկ ել տեսնեմ ի՞նչ: Գալիս են, չորս կողմից գալիս են ու գալիս՝ մեծ ու փոքր, ահել-ջահել ու բոլորն աչքիս Կիկոս են երևում. թե՞ բոլորն իրոք Կիկոս են, չեմ հասկանում: Լիքն են: Բոլորը՝ գդակավոր, բոլորը՝ պոպոզավոր, մրջյունների նման վրա են տվել Հաստաբնին ու բարձրանում են: Շատ-շատ են, Կիկոսների մի

ամբողջ անկանոն բանակ»³: Հիմար հերոսներին ծաղրող ժողովրդական պարզ պատումը ներքին խոր ենթաշերտեր է ստանում: Ապագայի նկատմամբ սարսափը, որն առաջանում է կանխատեսվող աղետի սպասումից, խաթարում է այս դեպքում արդեն ոչ թե հիմար քույրերի ու նրանց միջի խելոք հոր կյանքը, այլ՝ ծնվելիք որդու:

Ժողովրդական հեքիաթի առանձին պուժեներ ու կերպարներ այսօր հայտնվում են նաև հեղինակային հեքիաթի կամ այլ ժանրի համատեքստում՝ հաճախ կրելով սիմվոլիկ իմաստ, նոր բովանդակության մեջ ավանդական ընկալումների ակնարկ պարունակելով: Ճիշտ այսպես, Նորայր Աղալյանի՝ 2010թ. լույս տեսած «Ծաղրածուն մեծ քաղաքում»⁴ վեպում կենտրոնական դերում են Քաջ Նազարի և Ուստիանի կերպարները: Բախտի բերմամբ թագավոր դարձած անարժան հերոսի թեման ժամանակակից իրականության մեջ շարունակում է պահպանել իր արդիականությունը՝ այս պարագայում վերածվելով մի սևապարծ, ինքնագոհ, փառատենչ, դաժան ու արյունարբու միապետի մասին պատմող վիպական ծավալուն հյուսվածքի: Ուշագրավ է, որ ողջ վեպը պատմվում է որպես մի ծերունի հեքիաթասացի կողմից պատմվող հեքիաթ, իսկ հեղինակը իրեն ներկայցնում է «բանահավաք-գրառողի» դերում:

Իհարկե և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքում, ակնհայտ է, որ գործ ունենք ոչ թե բանահյուսական նյութի մշակման հետ, թեկուզ և բնագրից շատ հեռացած, այլ բանահյուսության գրականացված տարբերակների հետագա զարգացումների: Ե՛վ Կարմիր գլխարկը, և՛ Կիկոսը, և՛ Քաջ Նազարը, ի սկզբանե ծնունդ առնելով բանահյուսության մեջ, հետագայում գրականացվել են և տիպականացվել: Այս

նրան դա չի հաջողվում: Այդպիսով նա և՛ քաղցած է մնում, և՛ հալածվում է իր չարության համար:

¹ Արմեն Օհանյան, Կիկոսի վերադարձը, Պատմվածքներ, Եր., «Աստարես», 2013, 42-53:

² Նույն տեղում, էջ 42-43:

³ Նույն տեղում, էջ 51-52:

⁴ Նորայր Աղալյան, Ծաղրածուն մեծ քաղաքում, Եր., ՀԳՄ հրատարակություն, 2010:

առումով, բազմաթիվ գրողների կողմից այս պերսոնաժների օգտագործումն արդեն հեռու է բանահյուսական հեքիաթի մշակում կոչվելուց, մասնավորապես, էթե հաշվի առնենք, որ Քաջ Նազար կոչվող տիպի թումանյանական մշակումը՝ հերոսի անունից սկսած, արդեն բավական ինքնուրույն կերպար է՝ բանահյուսական տարբերակից հեռացած:

Ժողովրդական հեքիաթների գրական մշակումներին զուգահեռ վերջին տասնամյակներին ավանդույթ է դարձել նաև բանագետ-բանահավաքների կողմից կազմված և մշակված ժողովածուների ի հայտ գալը: Եթե արդի հայ գրողները նյութին ինքնուրույն՝ հեղինակային մոտեցում են ցուցաբերում՝ վերաիմաստավորելով կամ սեփական մեկնաբանություններով ներկայացնելով այն, ապա հեքիաթների բնագրերին հարազատ, սակայն լեզվական առումով մատչելի ժողովածուներ ստեղծելու գործն այսօր ստանձնել են բանագետները, որն էլ իրականացվում է բարբառի մեղմացման՝ փոխադրության ճանապարհով:

Կազմված լինելով նյութին քաջատեղյակ բանագետների կողմից՝ այս ժողովածուները պարունակում են հայ ժողովրդական հեքիաթացանկից հմտորեն ընտրված, կառուցիկ ու գաղափարապես հագեցած հեքիաթներ, որոնց մեծ մասը մինչ այդ գրական մշակման չէին ենթարկվել, և ընթերցողը դրանց կարող էր ծանոթ լինել միայն բարբառային հրատարակությունների միջոցով: Լեզվական մշակվածության, բարբառի փոխադրման եղանակները բավական տարբեր են: Եթե մի ժողովածուում բարբառը հնարավորինս պահպանված է, և հանված են միայն խիստ անհասկանալի ձևերը, ապա մյուսում լեզուն գրեթե փոխադրված է գրականի՝ որոշ ժողովրդական բառեր ու արտահայտություններ միայն պահպանելով:

Գործի առաջամարտիկը հայ իրականության մեջ Արտաշես Նազինյանն էր, որը, լինելով «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական, գիտական հրատարակության առաջին հատորների կազմողն ու առաջաբանների հեղինակը, գրեթե միաժամանակ նախաձեռնում է նաև ժողովրդական հեքիաթների գեղարվեստական հանրամատչելի ժողովածուների կազմման և մշակման գործը: 1956թ. լույս է տեսնում նրա մշակած հեքիաթների առաջին ժողովածուն՝ Հ.Կոջոյանի նկարազարդումներով, որը վերահրատարակվում է նաև 1990թ.: Հետագա տարիներին Ա.Նազինյանի մշակմամբ լույս են տեսնում ժողովրդական հեքիաթների մշակումների նաև այլ ժողովածուներ՝ 1960թ., 1967թ., 1986թ. և 1995թ.: Ընդ որում, Նազինյանի կազմած և մշակած հեքիաթների այս ժողովածուները լույս են տեսել նաև թարգմանաբար և ներկայացվել արտասահմանյան ընթերցողին՝ ռուսերեն (Մոսկվա, 1969), լիտվերեն (Վիլնյուս 1979), լատիշերեն (Ռիգա 1981) և գերմաներեն (Բեռլին 1978): Վերջինները հիմնականում միջնորդավորված թարգմանություններ էին՝ ռուսերենից:

Այսպիսով, որն էր Նազինյանի մշակման կամ ավելի ճիշտ է ասել, փոխադրության սկզբունքը, որն էլ հետագայում շարունակեցին մյուս բանագետները: Նազինյանը նախ կարևորում էր հեքիաթների ընտրությունը՝ նախապատվությունը տալով «դիպուկ ու նպատակալաց, ժողովրդական իդձերն ու երազանքները առավել ցայտուն արտահայտող» դիպաշարերին, երկրորդ՝ հաշվի առնելով, որ ժողովածուն նախատեսվում էր մանկապատանեկան հասակի ընթերցողի համար՝ բանագետը խուսափում է «նեղ բարբառային և օտար բառերից ու արտա-

¹ Այս մասին մանրամասն տես Արտաշես Մկրտիչի Նազինյան, Կենսամատենագիտություն, Ներածությունը և մատենագիտությունը՝ Եվա Ջաքարյանի, Երևան, «Մուղի» հրատ., 2004:

հայտություններից»¹ մինևույն ժամանակ լիովին չգրականացնելով այն և պահպանելով ժողովրդական բառ ու բանի համն ու հոտը: Նազիկյանը այս ժողովածուներին հիմնականում կցում էր առաջաբաններ, ուր մատչելի բացատրություն էր տրվում հեքիաթ ժանրի, տեսակների, հիմնական թեմաների ու արտահայտած գաղափարների մասին: Ի վերջո, որպես մանկական ընթերցանության ժողովածուներ, դրանք անպայման լույս էին տեսնում գեղեցիկ նկարազարդումներով, մի բան, որը բնականաբար բացակայում էր ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակություններում: Նազիկյանի այս ժողովածուները բավական մեծ հաջողություն են ունեցել, և դրա վկայությունն են դրանց վերահրատարակությունները անգամ նրա մահվանից հետո և մինչև մեր օրերը²:

Ժողովրդական հեքիաթների նմանատիպ մշակում-փոխադրություններ իրականացրել է նաև բանագետ Նելլի Հակոբյանը: 1977թ. լույս է տեսնում նրա և Ա. Սահակյանի կազմած և մշակած «Հիմա՛ ես ուզում, թե հետո» գրական-գեղարվեստական ժողովածուն, ուր դարձյալ գործում էր լեզվական մշակման նույն սկզբունքը՝ բարբառի մեղմացման և փոխադրության: Ժողովածուում տեղ գտած հեքիաթները հիմնականում նոր գրառումներ էին: Ի դեպ, այս ժողովածուից երկու տարի անց՝ 1980թ., լույս է տեսնում Ն. Հակոբյանի կազմած արդեն գիտական ժողովածուն՝ կուռ գիտական ապարատով և հեքիաթների՝ աարնե-թոնփսոնյան նշացանկի համապատասխան դասակարգումով, ուր տեղ են գտնում նախորդ՝ գեղարվեստական հրատարակության մշակված հեքիաթների բար-

բառային բնագրերը: Ավելի ուշ՝ 1993թ., տպագրվում է Նելլի Հակոբյանի կազմած և մշակած ևս մեկ գեղարվեստական ժողովածու՝ «Յոթ խրատական հեքիաթ» վերնագրով, որը վերջերս՝ 2010թ. վերահրատարակվել է «Արեգ» հրատարակչության կողմից: Ընդ որում, և՛ 1977թ., և՛ 1993թ. ժողովածուները խմբագրված էին Հրանտ Մաթևոսյանի կողմից: «Յոթ խրատական հեքիաթ» ժողովածուում տեղ էին գտել նախորդ՝ 1977թ. ժողովածուում լույս տեսած հեքիաթներից ընտրված 7 առակատիպ պատումներ, պարզապես բարոյախոսությունն ավելի ընդգծելու նպատակով փոխվել էին հեքիաթների վերնագրերը՝ փոխարինվելով հաջող կերպով ընտրված ասացվածքներով: Այսպես. «Ով ինչ անի, իրեն կանի» (էջ 153) հեքիաթը երկրորդում դրված է «Փոս փորողը փոսը կընկնի» վերնագրով, «Ուրիշը քեզ ախպեր չի դառնա» հեքիաթը վերնագրված է «Արյունը ջուր չի դառնա», «Մրջյունները և փիղը» հեքիաթը՝ «Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք», «Թաքուն չի մնա» հեքիաթը՝ «Մախաթը պարկում չես թաքցնի», «Ամենավատ բանը» հեքիաթը՝ «Աչքածակի աչքը միայն հողով կկշտանա» և այլն: Խոհախրատական հեքիաթների այս փոքրիկ փունջը և՛ բովանդակությամբ, և՛ քանակով հիշեցնում է աստվածաշնչյան պատվիրանները:

Բանագետների կողմից կազմված հեքիաթների հանրամատչելի ժողովածուների շարքում բարբառի պահպանման տեսակետից առանձնանում է Սերգեյ Վարդանյանի կազմած «Հրեղեն ձին» (1981) գիրքը, որն ամփոփում է հեքիաթներ, առակներ, երգեր, առած-ասացվածքներ և այլ ժանրեր՝ գրի առնված երկրորդից տասներորդ դասարանի աշակերտների կողմից: Այս ժողովածուն ինչ-որ առումով նույնիսկ չի էլ կարելի փոխադրություն համարել, քանի որ լեզվական մասնակի փոխադրության ենթարկելով հանդերձ՝ ժողովածուի

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, Արտաշես Նազիկյանի մշակմամբ, Եր., «Արևիկ» հրատ., 1990, էջ 5:

² 2004 և 2007թթ. վերահրատարակվել են նրա 1986թ. «Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ» մատենաշարով լույս տեսած ժողովածուի հայերեն և ռուսերեն տարբերակները:

կազմողը հիմնականում պահպանել է ժողովրդական նյութը հարազատ բարբառով: Քանի որ ժողովածուն նախատեսվում էր մանկապատանեկան ընթերցանության համար՝ Ս.Վարդանյանը յուրաքանչյուր հեքիաթի վերջում տալիս է այդ պատումում հանդիպած բարբառային անհասկանալի բառերի փոքրիկ ցանկեր: Լիովին գրական լեզվի են փոխադրված միայն Համշենի բարբառով պատումները: Նույն սկզբունքներով է կազմված Ս. Վարդանյանի հրատարակած հաջորդ ժողովածուն՝ «Թագավորի երազները» (2003թ.):

Բարբառի հանդեպ նման հոգածու վերաբերմուքը ժամանակին քաջալերանքի է արժանացել Ռաֆայել Իշխանյանի կողմից, որն այն անվանել է ճիշտ ուղղությամբ արված մի քայլ: Հանդես գալով բարբառների պաշտպանության դիրքերից՝ լեզվաբանը խրախուսում է բանահյուսական երկերի փոխադրության այդ կերպը՝ բարբառի մեղմացման, հասկանալիության աստիճանի հասցնելու և ոչ թե լիովին գրականացման ճանապարհով¹: Լեզվի տեղային դրսևորումները՝ բարբառները, միայն տվյալ լեզվի հարստության մասին են խոսում, որոնք առաջարկում են ձևային հարուստ բազմազանություն: Անշուշտ լեզվական որոշակի մշակումը երբեմն պարզապես անհրաժեշտ է՝ տվյալ ազգի շրջանակներում համընդհանուրին մատչելի բնագրեր հրատարակելու համար, սակայն, կարծում ենք, որ ցանկալի չէ այդպիսի փոխադրության ճանապարհին լիովին գրականացնել բանահյուսական բնագրերը, չէ՞ որ բանահյուսությունը գոյություն ունի հենց այդ բարբառների միջոցով: Կան շատ գեղեցիկ բարբառային ձևեր ու արտահայտություններ, առանց որոնց ժողովրդական պատումը կարող է կորցնել իր ողջ հմայքը, դրանք մի

կողմից ստեղծում են տեղային բներանգ և պարզ ու անմիջական պատում, մյուս կողմից դրանց օգտագործումը նպաստում է բարբառային այդպիսի դրսևորումների պահպանմանն ու այդ միջոցով նաև՝ լեզվական արտահայտչամիջոցների հարստացմանը, լեզվի տարբեր շերտերի այլընտրանքային տարբերակների մեծ պահուստի ձևավորմանը:

Բանահյուսական հեքիաթների գեղարվեստական մատչելի ժողովածուներ ստեղծելու գործը մեր օրերում շարունակում է նաև բանագետ Ալվարդ Ղազիյանը: 2007թ. լույս է տեսնում Ա. Ղազիյանի կազմած և մշակած՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն: Ժողովածուն ինքնատիպ է հատկապես այն բացող և փակող չափածոներով՝ նախերգով (Հեքիաթ, հեքիաթ, պապա...), և վերջերգով (Վազքով եկան մուկն ու կատուն...): Բոլորովին վերջերս՝ 2011թ., լույս է տեսել Ա.Ղազիյանի կազմած և մշակած ևս մեկ ժողովածու՝ «Երգիծական գրույցներ և զվարճախոսություններ» վերնագրով: Չափսերով բավական փոքր՝ գրեթե գրպանի օգտագործման չափսի մի ժողովածու է սա՝ շատ ճաշակով կազմված և մշակված, ուր տեղ են գտել նաև հայտնի երգիծական հեքիաթների համառոտ տարբերակներ: Այսպիսի ժողովածուները ցանկալի են ժողովրդական նյութը վերստին լայն շրջանառության մեջ դնելու առումով:

Այսպիսով, ակնհայտ է, որ թեև ժողովրդական հեքիաթը աստիճանաբար կորցնում է իր ավանդական կենցաղավարման կերպը, այնուամենայնիվ, այն շարունակում է մնալ կենսունակ իր գրառված տարբերակով: Ու թեև այս վերջիններն արդեն գրական արժեք են ձեռք բերում, անկախ մշակման կամ փոխադրության սկզբունքներից, սակայն շարունակում են պահպանել և փոխանցել ավանդական նյութը այդպիսով հավերժ կենդանի պահելով այն:

¹ Ռաֆայել Իշխանյան, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», 1983, թիվ 1:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արև հեքիաթ: Հայ ժողովրդական հեքիաթներ, Սուրեն Քոչարյանի մշակմամբ, Եր., 1979:
2. Հախավերդյան Լ., Կոմպոզիցիան Սուրեն Քոչարյանի արվեստում, «Հայկական ՄՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր», Եր., 1962, էջ 60:
3. Լևոն Խեչոյան, Տան պահապան հրեշտակը, Եր., «Անահիտ» հրատ., 2002թ.:
4. Բաբայան Գրիգոր, Հայկական հակաժողովրդական հեքիաթներ, Եր., 1903:
5. Ոսկանյան Արփի, Կարմիր գլխարկով գորշ գայլը, <http://arpi-voskanyan.blogspot.com> 07.05.2013:
6. Օհանյան Արմեն, Կիկոսի վերադարձը, Պատմվածքներ, Եր., «Անտարես», 2013:
7. Աղայան Նորայր, Ծաղրածուն մեծ քաղաքում, Եր., ՀԳՄ հրատարակություն, 2010:
8. Նազինյան Մկրտիչ, Կենսամատենագիտություն, Ներածությունը և մատենագիտությունը՝ Եվա Զաքարյանի, Երևան, «Մուղնի» հրատ., 2004:
9. Հայ ժողովրդական հեքիաթներ, Արտաշես Նազինյանի մշակմամբ, Եր., «Արևիկ» հրատ., 1990:
10. Հինմ՝ ես ուզում, թե հետո, կազմող և մշակող Հակոբյան Ն., Սահակյան Ա., Եր., 1977թ.:
11. ՀԺՀ 1980թ., Ն. Հակոբյանի կազմած գիտական ժողովածուն
12. Յոթ խրատական հեքիաթ 1993թ., կազմող և մշակող Նելլի Հակոբյան:
13. Հրեդեն ձին, Վարդանյան Սերգեյ, 1981:
14. Իշխանյան Ռաֆայել, Բանահյուսություն, բարբառ, արդիականություն, «Գարուն», 1983, թիվ 1:
15. Թագավորի երազները, Ս. Վարդանյանի (2003թ.)
16. Հայ ժողովրդական հեքիաթներ 2007թ. կազմող և մշակող Ա. Ղազարյան:
17. Երգիծական զրույցներ և զվարճախոսություններ, 2011թ., կազմող և մշակող Ա. Ղազարյան:

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ОБРАБОТКИ И ПЕРЕЛОЖЕНИЯ ФОЛЬКЛОРНОЙ СКАЗКИ

НВАРД ВАРДАՅԱՆ

*Преподаватель факультета армянской филологии Ереванского государственного
университета, кандидат фил. наук*

ՈՐԻՆԵ ՎԱՐԴԱՅԱՆ

*Заведующий отделом обеспечения качества образования Международного научно-
образовательного центра Национальной Академии наук РА*

Несмотря на то, что в наши дни фольклорная сказка не столь популярна, как раньше, в литературе она продолжает развиваться. Авторские подходы к народному материалу сегодня достаточно различны, начиная с литературных обработок, заканчивая языковыми переложениями.

За последние десятилетия сборники народных сказок, составленные на основе литературной обработки, хотя и мало, но издавались. В них содержатся близкие к оригиналу ценные обработки, как обогащенные своеобразным авторским подходом (А. Кочарян, Л. Хечоян), так и созданные по совершенно новым необычным принципам (Г. Бабаян). А некоторые писатели представляют известные сказочные сюжеты, переосмысливая их или наделяя современными комментариями (А. Восканян, А. Оганян, Н. Адалян).

Помимо художественных обработок в настоящее время на литературном рынке большое место занимают сборники, составленные фольклористами, в которых народный материал подвергнут языковому переложению, а непонятные и замысловатые диалектные формы представлены в смягченном виде (А. Назинян, Н. Акопян, А. Газиян, С. Варданын). Такие популярные сборники весьма способствуют распространению народного материала на новом уровне.

CONTEMPORARY TRENDS OF DEVELOPMENT AND EXPOSITION OF FOLKLORE TALE

NVARD VARDANYAN

Lecturer of the Department of Armenian Philology, Yerevan State University, PhD in Philological Sciences

NARINE VARDANYAN

Head of the Quality Assurance Department, International Scientific-Educational Center of National Academy of Sciences of Republic Armenia

Though nowadays the folklore tale is not told to that extent it used to, it continues its development in literature. Author approaches to folklore material is currently quite different starting from literary adaptation to language expositions.

Only a few collections of folklore tales created through literary adaptations have been recorded in recent decades. They contain both high-quality adaptations close to material with unique author approaches (S. Qocharyan, L. Khechoyan) and completely new adaptations created with extraordinary principles (G. Babayan).

Some authors give new meaning or contemporary interpretations to the plots of famous folklore tales (A. Voskanyan, A. Ohanyan, N. Adalyan).

Besides literary adaptations, the collections drawn up by folklorists take up a large place in the contemporary literary market, where folklore material is subjected to language expositions, while non-understandable and abstruse dialectal forms are mitigated (A. Nazinyan, N. Hako-byan, A. Ghaziyan, S. Vardanyan). Such popular collections are very favorable to put folklore material into circulation once again.

Հոդվածի ներկայացման փառերթիվը՝ 03.03.14 թ.

CONTEXT AND CULTURE-RESONANT APPROACHES

WORK AS CULTURE

Anthropologists describe culture as human phenomena that cannot be attributed to genetic or biological inheritance, but reflective of a cohesive and assimilated system of learned behaviour patterns which characterize the members of a social group (Hoebel, 1966). Other features of culture include the symbolic representation of experiences and the distinct ways in which groups of people classify and represent their collective experience (Geertz, 1973; Liu & Sibley, 2009). From Neolithic times, work was slowly transformed from a raw and primal engagement with the surroundings to an activity that was characterized by the codification of experiences through symbols, the organization and classification of work activities into occupations that were governed by hierarchies, and the transmission of these learnings to others through the process of cultural learning. Work began to be characterized by customs, laws, value attributions, social standards, religious beliefs, and traditions (Scarre, 2005). It has also been observed that populations that were able to organize work around a central principle (for example, principles emanating from religion) were more prosperous (e.g., Bellwood, 2004). Hence, work as a human activity became deeply embedded in human culture.

Culture refers to human phenomena that cannot be attributed to genetic or biological inheritance, but reflective of a cohesive and assimilated system of learned behaviour patterns which characterize the members of a social group. Culture includes the symbolic representation of experiences and the distinct ways in which groups of people classify and represent their collective experience.

Work and career are closely interwoven with human development across almost all cultures. Contemporary ideas of human development have moved away from the supposition that development comprises an invariant sequence of stages, through which the individual must move. In real life, development does not seem to occur in this predictable and rational manner between clearly defined age ranges. An important observation made is that earlier developmental models do not adequately address the vast range of individual and contextual differences and that the attitudes of significant others in the adolescent's life and social expectations could play a significant role in shaping career orientations (Arulmani & Nag-Arulmani, 2004). Blustein (1988) makes the point that the resolution of career developmental tasks is in effect influenced by the simultaneous operation of various historical

factors (e.g., economic slump or boom) and cultural factors (e.g., prestige attributes of an occupation). In other words, “non-normative” factors that are not related to the process of maturation could play a significant role in career development.

The Cultural Preparation Process Model of Career Development

Cultural Preparedness

դիկի, Սաթենիկ Հարությունյանի (Թղկատինցու դուստրը), Իսկուհի Մինասյանի և Մարիանե Տամատի (երկուսն էլ ֆրանսագիր) ստեղծագործություններին, տալիս նրանց գրական վաստակի գնահատականը:

Իբրև գրական հրատարակություն, «Մասիսը» նոր ուղիներ էր հարթում հայ գրականության ընթացքի մեջ և ամենից առաջ՝ իր գրական լայն ընդգրկումների շնորհիվ: Նրա ծրագիրը, որ ավելի կամ պակաս չափերով հաջողվեց իրագործել 1900–1908 թթ., այսօր էլ զարմացնում է իր պատկանելի չափերով, ոչ միայն ազգային գրողների ստեղծագործությունների, այլև համաշխարհային գեղարվեստական գրականության, նորագույն գրական ուղղություններին պատկանող երկերի թարգմանություններով՝ հայ գրական միտքն ու ճաշակը արդիականացնելու մտահոգությամբ: Ավելին, «Մասիսը» այդպիսի արդիականացումը չէր ենթադրում այլ կերպ, քան ազգային գրականության ավանդույթների պահպանության և քարոզչության միջոցով:

Ավագ սերնդի բանաստեղծների մեջ «Մասիսն» ակնածանք ունի հատկապես Ե. Տեմիրճիպաշյանի նկատմամբ, որի ստեղծագործությունը հայ բանաստեղծության զարգացման դարավերջի ընթացքը ներկայացնելուց բացի, կարծեք, կամուրջ էր ստեղծում, իր միստիկական բեկված պատկերների հուշարկումներով արևմտյան դեկադանսին առնչվելու համար: Միաժամանակ, կարծեք սահմանազատվելով Ե. Տեմիրճիպաշյանի միստիկական ծայրահեղություններից, բաց և հաշվի առնելով տաղանդավոր գրողի գրչի արժանիքները, «Մասիսը» տպագրեց Գր. Զոհրապի «Եղիա Տեմիրճիպաշեան» հոդվածը (1907, թիվ 38, 759–762), որտեղ ընդհանրացված ներկայացվում է հակասական գրողը, որի դարձվածներ-

ըն ու նորակերտ բառերի մեջ Զոհրապը նկատում է և այն, որ «իրենց յանդգնութեան մեջ յաճախ այլանդակութեան կը յանգին» (նույն տեղում, 759):

Հ. Ալփիարը «Մասիսում» ևս շարունակում է ստեղծագործել նույն թեմաների շրջագծում՝ կենցաղ, բարոյական հարաբերություններ սեռերի միջև՝ մնալով միշտ նույն զվարթ, սրամիտ, դիպուկ, երբեմն՝ գոեհկություններում շրջանառող իր երգիծանքով: Ալփիարը կրթված, մտավորական նոր շերտերի երգիծաբանն է, որը չհասկացվեց պահպանողական շրջանների կողմից, և որոնք չհապաղեցին նրան հռչակելու «անբարոյական, վրան–բաց» երգիծանքի ներկայացուցիչ:

«Մասիսում» Քրիզանթեն–Ալփիարը երբեմն իր քրոնիկները տպագրել է «Շոգմոգ մտածումներ» խորագրով: Դրանք կամ երգիծական նորավեպեր են, կամ իրապատում սյուժեներ՝ մշակությային երևույթների, մտավորականների, պատրիարքարանի և այլնի քննադատական խայթոցներ, բարքերի երգիծական գնահատումներ և այլն: 1907 թ.: Կինը և նրա բարոյական կերպարը, ընտանիքում և հասարակության մեջ նրա դիրքն ու պահվածքը այս շրջանում ևս մնում են երգիծաբանի ուշադրության կենտրոնում: Ընտանիքի և կնոջ բարքերի երգիծական ձևախեղումների սեփական համակարգը Ալփիարին հասցնում են դրանից բխող այն եզրակացությանը, որ ֆեմինիզմը հայ հասարակության մեջ իրականանալու ոչ մի հիմք և հեռանկար չունի: Կնոջ հավասարությունը տղամարդուն, առաջինի հասարակական գործունեությունը նա ընկալում է ֆիզիկական բնությունից տրված սեռերի տարբերության տեսակետից: Կնոջ հասարակական գործունեությունը Ալփիարը համարում է «խղ վագր մը դէպի անկարելին, անտեղի մարմաջ մը եւ սխալ գաղափար մը, զոր առաջին

անգամ տանը մնացած օրիորդ մը հղացած ըլլալու է» (1902, թիվ 46, 729):

Նույն կարծիքն ունի ֆեմինիզմի և կնոջ հանրային գործունեության վերաբերյալ Գր. Զոհրապը: Նույն այս «Մասիսում» հիշատակելով Տյուսաբի «Մայտա» վեպի առթիվ իր երբեմնի բանավեճը Ռ. Պերպերյանի հետ, Զոհրապը նշում էր. «Ես՝ իմ արեւելքցիի համառութեամբս այդ դատին (ֆեմինիզմի– Ա. Խ.) դէմ կը մաքառէի եւ դեռ կը մաքառիմ՝ համոզուած, որ ատով կհնը կը կորսնցնէ, քան թէ կը շահի իր շնորհին մէջ» (1901, թիվ 43, 676):

Անկյալ հասարակական բարքերի և դրա հետ միասին բարոյական արժեքների կորուստը աղետալի մի բան էր թվում ռեալիստ Զոհրապին, որը կնոջ մեջ, նրա միջոցով ընտանիքի և հասարակության պահպանության վերջին հանգրվանն էր տեսնում: Փչացած բարքերի ու բարոյականության անկման այնպիսի վիճի՞ր՝ հասարակական կյանքը, որի մեջ կարող էր նետվել կինը ֆեմինիստների ելթադրած տղամարդու և կնոջ իրավահավասարության պատրանքային պայմաններում, Զոհրապին պատկերանում էր որպես կնոջ բարոյական ու հոգևոր գեղեցկության, ուրեմն և անհատի ու հասարակության առավել խաթարմանն ուղղված սպառնալիք: Նրա հերոսուհիները, որքան էլ գործեն ստոր միջավայրում, մեծապես բարձր են կանգնած այդ միջավայրից և անկախ նրանց դրամատիկ կամ ողբերգական ճակատագրից, կարծեք, մնում են գեղեցկության և հուստ այն վերջին խարխալը, որն անվտանգ ծովածոցում մնալու վերջին հնարավորությունն է տալիս ազգի հողմակոծ նավին: Կարծում ենք, սրանում է թաքնված Զոհրապի առարկությունը ֆեմինիզմին և բանավեճը դրա հետ, որ մեծ գրողը, Ռ. Պերպերյանի հետ բանավիճային անմիջականությունից զատ, վարեց իր ամբողջ

ստեղծագործության մեջ: Այստեղ առկա է, իրոք, ռեալիստ Զոհրապը, բայց դրանից բխող նրա գնահատականը, կնոջ և տղամարդու փոխհարաբերության նրա գնահատականը, ասել կուզի՞ ընտանիքում և հասարակության մեջ կնոջ տեղի գոհրապյան պատկերացումը ի հայտ է բերում նաև նրա ռոմանտիզմը:

«Մասիսում» իր ստեղծագործական մնայուն հետքն է թողել Օ. Չիֆթե–Սարաֆը (Հովի. Աբիսողոմյան) իր նորավեպերով, ակնարկներով, գրաքննադատական նյութերով և խմբագրական հոդվածներով: Շաբաթաթերթում նա հանդես է եկել իր հանրածանոթ անվամբ, այլև Օ. Չ. Ս. և «Համշիրակ» ստորագրություններով: Չիֆթե–Սարաֆի նորավեպերը հագեցած են ճշմարտացի պատկերներով, կենցաղի ու բարքերի վերարտադրության մեջ նա հակում ունի դեպի մարդկային դրաման: Դրամատիկ լարվածությունն ու անկեղծ ապրումները, որոնք կարող են հասնել ողբերգական վախճանի, նա պահպանում է նաև իր ակնարկներում, («Ճերմակներով», 1901, թիվ 44, 693–696, «Բարիզեան տռամներ», 1903, թիվ 24, 373–377): «Շահարիկ» ստորագրությամբ նա «Մասիսում» տպագրել է «Գաւառացի կինը» հոդվածը և «Հարիւր ոսկիի համար» նորավեպը (1903, թիվ 26, 413–415, 1904, թիվ 32, 508–511): Նա անդրադառնում է գավառում հայ կնոջ իրավագուրկ վիճակին և առհասարակ հետամնաց բարքերին:

Գավառական գրականության զարգացումը ազգային ակունքներին վերադառնալու միջոցով էր պատկերացնում «Մասիսի» հեղինակավոր գրողներից մեկը Թլկատինցին (Հ. Հարությունյան): «Գեղի նամակներ» ակնարկում նա առանց գունագարդման, բայց և առողջ կենսագագոցությամբ արժանին է հատուցում գյուղացու բարոյական մաքրությանն ու աշխատանքին (1905, թիվ 21, 201–203):

Գավառական գրականության դրվագներ է վերաբարտադրում նաև նրա «Ուր փնտռել առաքինությունը» ակնարկը՝ «Մասիսի» 1906 թ. հուլիսի համարներում:

«Մասիսում» իր տաղանդին արժանի նորավեպերով, գրաքննադատական ու հրապարակախոսական հոդվածներով հանդես եկավ Զապել Եսայանը: Նրա նորավեպերը շնչում են զգացմունքների թափով, անգամ անսովոր չափերի ու ցնցող դրվագներով, կանացի նուրբ զգայնությամբ: Գրողը դիմում է նաև սուր հակադրությունների՝ միայնակ հոգիների դրաման մոտ տարածության վրա ցուցադրելու նպատակով, որ առավել հասկանալի է դառնում նրա մարդասիրական զգացումների դրսևորումներով, անհատի ու միջավայրի տարրնթաց շարժման ու ընկալումների շեշտադրումներով և այլն: Վերջին թեմաները Զ. Եսայանը շոշափում է նաև իր այլ նորավեպերում, ինչպես և «Էջ մը Պալգաքի կեանքէն» հոդվածում (1905, թիվ 12, 180-184):

«Մասիսը» թարգմանական ուրույն քաղաքականություն է վարել՝ իրականացնելով հայ ընթերցողին օտար գրականություններին հաղորդակցելու իր ծրագիրը: Ամենից շատ «Մասիսը» տպագրել է ֆրանսիացի հեղինակներին, հետևելով արևմտահայ գրողների ու գրաքննադատների ավանդական կողմնորոշմանը: Միայն ֆրանսիական գրականությունից «Մասիսը» տպագրել է կամ գրական գնահատականներ տվել շուրջ չորս տասնյակի չափ հեղինակների, որոնք ճնշող մեծամասնությամբ ժամանակակից գրողներ են: Օտար գրական երկերի թարգմանություններով ամենից շատ հանդես է եկել Զիֆթե-Սարաֆը, որին հետևում են Տ. Ելքենճյանը, Ենովք Արմենը, Ռ. Սամիկյանը, Հ. Նազարյանը, Ռ. Պերպերյանը, Մ. Մեծարենցը, Մ. Պարսամյանը, Ե. Գոլանճյանը և ուրիշներ:

Գրողի կենսագրության և ստեղծագործության՝ վերոհիշյալ ներքին կապերից ելնելով, «Մասիսը» գրեթե միշտ թարգմանական գործերը ներկայացնում էր հեղինակի կենսագրության հետ միասին: Ենովք Արմենը ևս ամերիկյան դասական Է. Պոյի «Ծովափին աղջիկը» բանաստեղծությանը (1901, թիվ 51, 803) կցել է նրա կենսագրությունը: Ավելին, շաբաթաթերթի կարծիքով, եթե կենսագրական հիմքն անհրաժեշտ է հեղինակին առավելագույնս ընկալելու համար, ապա այն կարող է դառնալ նաև ուսումնառության դպրոց: Ուշագրավ է, որ Տ. Ելքենճյանը ամերիկյան մեկ այլ դասականի՝ Լոնգֆելդի ստեղծագործությունը հայ գրողների համար գործոն էր համարում, հաղթահարելու ֆրանսիական պոեզիայի համատարած ազդեցության միակողմանիությունը՝ տեղի տալու, որ «ուրիշ ազդումներու եւ թարգմանիչներու աչքերն ուղղուէին քիչ մ'ալ ուրիշ կողմեր» (1905, թիվ 23, 358): Այլ հրապարակումներում «Մասիսը» ծանոթություններ է տվել գերմանական, իտալական, լեհական, ռուսական, նորվեգական և այլ ազգերի գրականությունների մասին:

Հայ մամուլի և նրա խմբագիրների, հրատարակիչների և առհասարակ լրագրության վերաբերյալ «Մասիսի» այլ լրջմիտ հրապարակումները նկատի առնելով, առանց վերապահության կարելի է պնդել, որ դրանք հող նախապատրաստեցին XX դարի հայագիտության այս բնագավառի հետագա ուսումնասիրությունների համար: Նույնը կարելի է ասել նաև ազգային մշակույթի այլ ճյուղերի՝ երաժշտության, թատրոնի, դպրոցի, թարգմանական արվեստի վերաբերյալ, որտեղ նույնպես պատկառելի երախտիք ունի XX դարի սկզբներին հրատարակված այս գրական շաբաթաթերթը:

“MASIS” LITERARY WEEKLY NEWSPAPER (1900–1908)

ALBERT KHARATYAN

Doctor of Historical Sciences, Professor Correspondent Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Chief editor of the journal “News of Social Sciences” of the National Academy of Sciences of the Republic of Armenia

In 1900–1908 “Masis” appeared as a literary weekly being one of the best Armenian publications in the field. Thanks to editors T. Arpiaryan and A. Enovqn, western Armenian representatives of literary and literary criticism genre (e.g., Gr. Zohrap, M. Metsarents, R. Sevak, Art. Harutyunyan, Z. Esayan, A. Antonyan, E. Temirchipashyan, H. Alpiar, T. Chyokuryan and others) united around “Masis” promoting the development of Armenian literature. “Masis” brought forward its vision and preferences introducing its readers not only to the national artistic values but also to other nations’ literary and aesthetic movements (e.g., realism, romanticism, symbolism, decadence, etc.) In its publications about the development of the national literature, the weekly paper aimed at difference in length of sight through the reflection of general outlook of the state-of-the-art literary and aesthetic perceptions.

ЛИТЕРАТУРНЫЙ ЕЖЕНЕДЕЛЬНИК “МАСИС” (1900–1908)

АЛБЕРТ ХАРАТЯН

Доктор исторических наук, профессор, член–корреспондент НАН РА, главный редактор научно–общественного журнала «Вестник общественных наук»

В 1900–1908 гг. «Масис» издавался в качестве литературного еженедельника и считался популярным и наилучшим армянским изданием того времени. Благодаря редакторам Т. Арпиаряну и Енокву. Армену вокруг «Масиса» сплотились лучшие умы западноармянской литературно–критической мысли (таких, как Гр. Зохрап, М. Мецаренц, П. Севак, А. Арутюнян, З. Есаян, А. Антонян, Е. Темирчипашян, Г. Алpiar, Т. Чёкюрян и другие), тем самым способствуя развитию армянской литературы. Основной целью выхода в свет еженедельника являлось не только ознакомление читателя с национальными традиционными литературными ценностями, а также формирование представлений о научном и литературном достижении других национальностей (реализм, романтизм, символизм, декаданс и др.). В своих изданиях еженедельник стремился к достижению плюрализма мнений относительно развития национальной литературы, тем самым отображая общую картину литературно–художественных и эстетических представлений времени.

Հոդվածի ներկայացման փուլերիցից՝ 13.04.14 թ.

Խ. Աթուլյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի քաղաքագիտության և իրավունքի պարունության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՏԱՐՏԱՆԵԼԻ ԱՌԱՍՊԵԼԸ* ԿԱՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
PR-Ի ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ «ՄԵՎ ԽՈՌՈՂԸ»**

*«Ռուսիա, նայած թե ի՞նչ է Թուրքիո դիրքը
Նեղուցների հարցում Ռուսիո հանդեպ,
կարող է լինել «կամ Թուրքիո առաջին
բարեկամը և կամ նրա առաջին թշնամին»:*

*[...] առավելաբար Նեղուցների հետքերով Ռուսիա
կամ բարեկամ և կամ թշնամի էր դառնում
ելիրուսական պետությանց. բարեկամանում էր
նրանց՝ որոնք Նեղուցների հարցում իրեն
հետ էին, և թշնամի դառնում նրանց՝ որոնք իրեն դեմ էին:*

*... երբ [ելիրուսական պետությունները] ուզում էին
Ռուսիան իրենց հետ ունենալ՝ դառնում էին զիջող
Նեղուցների հարցում. իսկ երբ այս բարեկամության
կարիքը սուր կերպով չէին զգում՝ համախաբվում և
խեղդում էին Ռուսաստանը Նեղուցների ջրերում (էջ 125):*

*Վ. Նավասարդյան
Նեղուցները (Վուսիոր և Դարդանել).
թրքական ջրողիները և հայ դարը: Գահիրե, 1947.*

Վավերագրում ներկայացված է Առաջին աշխարհամարտի թուրք ռազմաքաղաքական գործիչ Վեհիբ փաշայի հուշերն ու գնահատականները համաշխարհային քաղաքական խաղի հանգույցներից «թրքական ջրողիների» շուրջ անցած իրադարձությունների վերաբերյալ:

Հեղինակի դատողությունների խորքից դուրս է ցցվում բնության և հասարակության մեջ անվրեպ գործող օրինաչափությունը՝ հավասարակշռության հաստատման մշտնջենական ձգտումը՝

կողմերից մեկին բերելով մահ, սյուսին պարզևելով երջանկություն, թեկուզև ժամանակավորապես:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հավասարակշռություն (բալանս), նեղուցներ, Բոսֆոր, Դարդանել, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Թուրքիա:

Առաջին աշխարհամարտի հարյուրամյակի առնչությամբ, նրա ենթատեքստում՝ Թուրքիայի կողմից Արմենոցիդի չփոխհատուցված ոճիրի առնչությամբ,

կարևոր են, բնականաբար, պատմական անցյալում կատարված (տեղի ունեցած) շատ իրադարձություններ. երբեմն պատմական ճշմարտությունը վեր հանելու, երբեմն խեղաթյուրումների շղթան ամրացնելու նպատակով:

Այդ իրադարձությունների թվին են պատկանում «թրքական ջրուղիների» շուրջ ծավալված գործողությունները, նրանց տիրանալու խոշոր (շահագրգիռ) տերությունների խորքային դրդապատճռները, թուրքերի հաղթանակի, Անտանտի տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի աղետալի պարտության մոտիվացիայի և պատճառների ուսումնասիրությունը:

Այս առնչությամբ շատ է գրվել անցյալում, սակայն, ինչպես կարելի է ենթադրել, ավելի շատ գրվելու է առաջիկա ամիսներին, հատկապես մինչև 2015 թվականի ապրիլի 23-ը, մինչև Հայոց Մեծ Եղեռնի հարյուրամյակի օրը՝ 2015 թվականի ապրիլի 24-ը: «Հաղթանակի» փաստը, թրքական ավանդույթով, խեղաթյուրվելու և շահարկվելու է անսահմանորեն, թերևս ձեռքի հետ հիմնավորելով նաև Արմենոցիդի (Հայաստանություն) օբյեկտիվ անխուսափելիությունը: Եվ՛ այլն, և՛ այլն:

Ռուստի նկատի ունենալով հարցադրման հույժ կարևորությունը՝ խորհող ընթերցողի ուշադրությանն ենք հանձնում ժամանակաշրջանի թուրք ռազմաքաղաքական գործիչներից Վեհիբ փաշայի խոստովանություն-մենախոսությունը՝ շարադրված և փոխանցված պատմագիտությանը անգուգական Ռուբենի ձեռամբ՝ որպես վավերագրի իր տեսակի մեջ եզակի մի օրինակ, շատ ավելի հավաստի, քան սովորաճավալ որևէ հետազոտություն:

Եվ այսպես:

Լ. Շ.

Ռոտոսթոն՝ փոքրիկ, գեղեցիկ քաղաք մը, սրբատաշ քարերով շինված, համեստ և նեղ փողոցներով, որ կը հիշեցնէ անցյալը, բայց կորած է ներկայի հոգեբու մեջ:

Քաղաքին զարդը գեղեցիկ ծովն է, որ իբրև հայելի ինկած է Սև և Արշիպեղագոս ծովերու միջև: Այդ ծովը Մարմարան է: Անոր մեկ ծայրը Վոսփորն է, իր Պոլսով, իսկ մյուս ծայրը՝ Տարտանելը՝ իր անցքով: Ծովի կեդրոնին վրա բարձրացած են համանուն Մարմարա կղզիները, որոնք կնային ջուրերու մեջէն Վոսփորի և Տարտանելի նեղուցներուն և իրենց դեմ եվրոպական ափին բարձրացող Թեքիր Տաղ լեռներուն, որոնց ստորոտը կգտնվի Ռոտոսթոն քաղաքը:

Եթե Մարմարա կղզիները ծովի կեդրոնին վրա են, Ռոտոսթոն ալ ծովափի կեդրոնին վրա է: Այդ կետեն կսկսի Թեքիր Տաղ շղթան, որ կմտնէ Արշիպեղագոս ծովուն մեջ և կգոյացնէ Կելիպոլիի նեղ թերակղզին, որ արևելյան ափով Տարտանելի ջրանցքը կգոյացնէ, իսկ արևմտյան ափով Քսերոս ծոցը կկազմէ Արշիպեղագոսին մեջ: Այդպեսով, Ռոտոսթոն՝ համաշխարհային նշանակություն ունեցող Տարտանելի գլխուն կանգնած պահակ մըն է, իր Թեքիր Տաղ լեռներով: Մյուս կողմէ ան միջին օղակն է Վոսփոր-Տարտանել նեղուցներուն, որոնց ճամբու կեսին կգտնվի: Դյուրին ճամբաներով կերթա դեպի Չորլու և Չաթալճա՝ մտնելու համար Պոլիս և հսկելու համար Վոսփորի անցքերուն և փակելու համար Եվրոպայի և Ասիո դուռները կամ բանալու համար զանոնք իր ուզածին պես:

Հոս ավելորդ չէ հիշել Վեհիպ փաշայի յուրահատուկ տեսակետները՝ Տարտանելի 1914 թվի կռիվներու մասին:

Վեհիպ փաշայի մեծ եղբայրը՝ Էսատ փաշան առաջին մեծ պատերազմի ատեն Պոլսո և Տարտանեղի վերին զորամասի պետն էր, իսկ ինքը Կելիպոլի-Քսերոս տարածության հրամանատարը: Ուրեմն, անոնց ձեռքին տակ էր որ տեղի ունեցավ թրքական հերոսամարտը, ուր հերոսացավ Մուսթաֆա Քեմալ փաշան և ուր պարտության մատնվեցավ ողջ Եվրոպան:

Երբ 1927-ին Վեհիպ փաշան ինծի հյուր էր եկած երկու շաբաթով, հարցուցի.

— Ի՞նչն էր հիմնական պատճառը ձեր հաղթության Տարտանեղի մեջ և ի՞նչ էր պարտության պատճառը Եվրոպայի: Ձեր պատրաստությունը, զենքի առավելությունը, ձեր քաջությունը, ձեր թվական առավելությունը:

Ան պատասխանեց.

— Կամ հարցումիդ պետք չէ պատասխանել, կամ պետք է պատասխանել ճիշտը, քանի որ քեզի դժվար է կլլեցնելը: Ըսեմ ճշմարտությունը, որ դյուր պիտի չգա ոչ ոքի.

«Մեր պատրաստությունը և զենքի առավելությունը: Ոչ, իհարկե: Այդ առասպել է: Տարտանեղի ամրությունները հին են և հարմարցված մեկ դար առաջ եղած զրահանավերուն: Անոնք կփռոջիանային նոր զրահանավերու ռումբերեն: Ցուցանշան լինելով, ավելի վնաս կու տային քան օգուտ: Մենք նոր զրահավորներուն հարմարցված ամրություններ չունեինք և չունինք: Կելիպոլի կռիվը խրամային կռիվ դարձավ մեզի համար:

«Մենք զինաթափ էինք անոնց զրահավորներուն դեմ, քանի որ մեր թնդանոթները անոնց թնդանոթներուն կես ճամբան իսկ չէին հասնիր. մեր գնդակները կհասնեին անոնց երբ զրահավորները արհամարհելով մեզ, կամովին մոտենային մեզի, կամովին մոտենային մեր թնդանոթներուն: Բայց մեր գնդակները

կարողություն չունեին անոնց զրահները խորտակելու: Մենք ունեցանք հեռարձակ և սպաննիչ զենքեր գերմաններեն այն ատեն միայն, երբ Դաշնակից ուժերը որոշեցին թողնել Տարտանեղը և հեռանալ: Հավատա՛ ինծի, մեր զինական գերակայությունը չէր պատճառը մեր հաջողության:

«Թվական առավելությունը: Ոչ, ի հարկե: Այդ ալ առասպել է: Քեզի ըսի, որ Կելիպոլի կռիվը դարձավ խրամային կռիվ: Կելիպոլի տարածությունը այնքան փոքր է, որ կարելի էր խրամները լեցնել առ առավելն 40-50 հազար զորք. ավելի զորքին ոչ տեղ կա աշխատելու և ոչ ալ հնարավորություն պարենավորելու: Նույնքան և գուցե քիչ մըն ալ պակաս թշնամին կրնար օգտակար կերպով զորք տեղավորել: Երկու կողմերն ալ թվական առավելությամբ չէին կրնար մեկգմեկ ջախջախել: Միայն երկու կողմը կանգնած համարյա հավասար թիվով ուժերն էին, որ կրնային իրար բզկտել, բայց անկարող էին իրար բնաջնջել: Թիվը թեև անարժեք էր Կելիպոլի մեջ, բայց անհրաժեշտ էր շուրջ 40.000 զինվոր միշտ լրիվ ունենալ երկու կողմին համար և ամեն օր սպաննվածներու և վիրավորներու տեղը նոր ուժ բերել: Ատով պետք է բացատրել, որ յուրաքանչյուր կողմ կես միլիոն զոհեր ունեցավ Տարտանեղի կռիվներու ընթացքին, եթե չըսեմ մեկ ու կես միլիոն բոլորին համար:

«Այս սարսափելի սպանդի մեջ ամենասարսափելին անգլիացիներու և «անգակ»-ներու ֆութպոլ խաղալն էր ամեն մեկ կմվի ընդմիջումին, ինչ որ մեր վրա ճնշիչ տպավորություն կթողեր:

«Երրորդ հարցումիդ դժվար է ճիշտ պատասխանելը,— ծիծաղելով ըսավ Վեհիպ:— Եթե ճիշտը իմացվի, բոլորն ալ հերետիկոս, դավաճան ըսելով պիտի կախեն մեզ: Կհարցնես, թե Տարտանեղի

կռիվներուն մեջ խելքը, հերոսությունը, քաջությունը որո՞ն կողմն էր: Եթե քեզի ըսեմ, որ Տարտանելի մեջ մեր կողմը ո՛չ խելքի, ո՛չ հերոսության և ոչ ալ քաջության անհրաժեշտությունը կար, պիտի չհավատաս: Այդ բոլորը անհրաժեշտ էին, սակայն մեր հակառակորդ կողմին. անոնք ալ այդ չունեին»:

Չմեռ էր այս խոսակցության ատեն: Սալամանդը վառարանը հանգիստ կվառեր: Ես ներողություն ըսելով՝ ելա քիչ մը քարածուխ ավելցնելու համար: Վեհիպը հարցուց.

— Այդ Սալամանդը վառարանը լա՛վ վառարան է:

— Հիանալի վառարան է:

— Դուն անոր շինելը կամ անոր մեքանիզմի սկզբունքը գիտե՞ս:

— Շինելը, իհարկե, չեմ գիտեր և վառվելու սկզբունքով ալ չեմ հետաքրքրված, բայց փորձով գիտեմ, որ շատ լավ կվառի:

— Բայց դյուրի՞ն է գայն կառավարելը, — հարցուց:

— Կառավարելու բան ալ չկա: Պիտի նայիս, որ մեջի քարածուխը չվերջանա և նորը լեցնելու ես, երբ վերջանալու վտանգը կա:

— Մեկ հարցում ալ. ամեն տեսակի քարածուխ կվառի՞ այդ Սալամանդրի մեջ:

— Ամեն տեսակն ալ կվառի, — պատասխանեցի:

— Մեկ հարցում ալ, և այլևս ես հարց չունիմ: Այդ քարածուխները, որ կլեցնես, պատահե՞ր է, որ ապստամբին, ուզեն դուրս փախչիլ հնոցեն և դժկամակին իրենց վառվելեն:

Երբ զարմացած անոր երեսին կնայեի, ան կծիծաղեր վրաս:

— Դուն կարծեցիր թե այդ վառարանը ես առաջի՞ն անգամ տեսած եմ: Քեզմե ավելի լավ գիտեմ անոր կազմությունը: Ես գործածած եմ գայն: Իմ հարցումներով

ես կուզեի հասկնել քեզի Տարտանելի մասին քու հարցերուդ պատասխանը: Բայց դուն չհասկցար: Իբրև պատիժ՝ բաժակս լից, ես բացատրեմ:

Խմեց մեկ ումպով մեկ բաժակ կոնյակ և սկսավ բացատրել.

«Կելիպոլիի թերակղզին նկատե նեղ սրվակ մը: Ան կողողվի մեր ձեռքը մնացած Մարմարայի ջուրերով և Մուրատ Չայի լայնքով՝ Տարտանելի անցքով, որ լեցված էր ականներով: Իսկ մյուս կողմն՝ կողողվի Արշիպեղագոսի և Քսերոսի ծոցի ջուրերով, որոնք լեցված էին ֆրանսական, անգլիական և այլ զրահանավերով: Այդ սրվակի նեղ վիզը և բերանը, որ ցամաքի հետ կկապե գայն, Թեքիր Տաղի լեռներն են, որոնք հազիվ թե քանի մը քիլոմետր տրամագիծ ունին լայննալով Քսերոսի ծոցին շուրջ և միանալով ցամաքամասին. անոնք հարմար են ճակատամարտի համար և կռվելու ասպարեզ կբանան իրենց շրջապատին մեջ: Ճիշտ այդ կետին վրա ես նստած էի. մեկ կողմեն, ամեն վայրկյան կսպասեի, որ թշնամին ցամաքահանում պիտի ընե և պիտի ջանա խլել Կելիպոլիի բերանը, իսկ մյուս կողմեն՝ այդ բերանեն ես ներս կլեցնեի սրվակին մեջը (Կելիպոլիի) լինի ցամաքով, լինի Մարմարա ծովով, օրական 10–30.000 զորք, հոն վառվելու համար: Այդ սրվակին մեջ լեցվողը ես չէր կրնար դառնալ. ան պիտի վառվեր, և անոր միայն մոխիրը ետ կու գար, իբրև դիակ և վիրավոր: Կելիպոլիի հնոցին մեջ ինկողներեն միակ երջանիկները անոնք էին, որ շատ ծանր վերքեր կստանային և անպետք կդառնային նորեն այդ հնոցին մեջ ձգվելու համար»:

Քիչ մը ծանր շունչ առնելե և ծխախոտը վառելե ետք, ան վերսկսավ իր պատմությունը՝ խեղդելով իր հուզումները.

«Դուն շատ հիացած կերևա Կելիպոլիի կռվողներու և հերոսներու վրա

և մանավանդ Քեմալի վրա: Նախանձ չէ ըսածս, քանի որ անոնք իմ ձեռքի տակն էին և անոնց վերագրվածները վերջ ի վերջո ինձի կու գան: Բայց առանց զգացմունքի եթե դատենք, սրվակ մը որուն մեջ ինկողը, լինի լավ թե վատ, լի վախկոտ թե քաջ, լինի խելոք թե անխելք, դատապարտված է հավասար կրակով վառվելու անխտրականորեն, ոչ մի առաքինություն չի ցուցադրեր: Երբ կանխորեն որոշված է թե ուր պիտի նստիս, ուր պիտի կովիս, ինչ պիտի կովիս և, հակառակորդ սպաննելեն ետք, ինքդ ալ պիտի սպաննվիս, այդ կդառնա մեքենական աշխատանք, ուր ո՛չ հերոսություն, ո՛չ խելք, ո՛չ քաջություն անհրաժեշտ է: Այդ բոլորը անհրաժեշտ էին զրահավորներու մեջ նստածներուն համար. իսկ մեր կողմը, որ բռնած էր Կելիպոլիի բերանը և կսպասեր Քսերոսի ծոցի ցամաքահանման, պատեհություն չունեցավ ցույց տալու որևէ առաքինություն, միևնույն ժամանակը պակսեցավ թշնամիին: Ահա քեզի Կելիպոլիս»:

Երբ ես տարակուսանքով կնայեի անոր, «իհարկե, անհավատալի և սարսափելի կերևան քեզի ըսածներս», ըսավ ժպտելով, և քաշեց իր սիկարեթը:

— Համոզիչ չէին ըսածներդ, կներես, որովհետև կարծես թե այդքան զրահանավեր, որ խորտակեցիք, իրենք իրենց խորտակվեցան: Կարծես վեց միլիոն զորքեր անտեղի կերպով բերած եք և զոհաբերած՝ առանց նպատակի: Կարծես թե Անգլիա, Ֆրանսա չեն ուզած հաղթել և իբրև ոճրագործներ իրենց բանակի գլխուն արյունալի խաղ մըն են խաղացեր: Անոնց հաղթողը դուք չե՞ք եղեր, անարժեք եղեր են ձեր տված կես միլիոն զոհերը: Տարտանելի մեջ կատարվածը անհաշիվ ոճի՞ր մըն է եղեր երկու կողմերուն համար ալ:

Վեհիպը տաքացած ըսավ.

— Առաջին ըսածդ ճիշտ է, իսկ երկրորդդ՝ սխալ: Ես արդեն ըսի, որ Դաշնակիցները հիմար գտնվեցան կամ, եթե հիմար չէին, գիտակցական ոճրագործներ եղան իրենց հարագատ զորքին: Տարտանելը փակ դուռ մըն էր: Մտնելու համար նեղուցները՝ կամ պետք էր այդ դուռը կոտրել և մտնել, և կամ պետք էր այդ դռան բանալին գտնել և բանալու մտնել: Ուրիշ միջոց չկար: Առանց բանալիի՝ դուռները ջարդելով հնարավոր էր մտնել նեղուցները, որովհետև մենք հեռարձակ թնդանոթներ չունեինք: Թշնամին հեռուներեն կրնար մեզ լռության մատնել և մտնել նեղուցները՝ հոգևություն հանձն առնելով մաքրելու ականները: Թշնամին այդ գիտեր և այդպես ալ փորձեց ու, հաջողության ամեն գրավական ունենալի հետո, իր ձեռք բերած հաջողությունը իր ձեռքով ձախողեցուց: Նախ՝ կեդրոնացած նավային կրակով լռեցուց մեր ամբողջությունները, երկրորդ՝ մեր բախտեն նավային ուժերուն գլուխը դրավ ֆրանսական զրահանավերը, իսկ անոնց ետևեն՝ անգլիացիները: Երրորդ՝ ֆրանսական զրահանավերը առաջ քշելով՝ մտցուց Տարտանելի մեջ հաջողությամբ: Սակայն, պատահեցավ մեզի համար անսպասելին: Հաջողության մեջ անոնք թողին և իրենց զրահանավերով հեռացան նեղուցներեն: Գիտե՞ս ինչու: Ֆրանսական ղեկավարությունը իբրև ավելի սնամիտ, առաջինը կուզեր լինել Տարտանելին տիրողը և Պոլիս մտնողը, իսկ անգլիական ղեկավարությունը ատոր կվերաբերեր հետին հաշիվներով: Երբ ֆրանսական քանի մը զրահանավեր վնասվեցան և անհույս դարձան, – այդքան վնաս անխուսափելի էր, – անգլիացիք իսկույն եզրակացություն հանեցին, թե անհնար է նավատորմիդով տիրապետել Տարտանելին, թեպետ ան արդեն տիրապետված կրնար լինել փոքրիկ ճիգով մը:

«Հրաման տվին քաշվելու, հակառակ ֆրանսացիներու տրտունջին, թե մեզ առաջ ձգեցիք և մշակված ծրագիրը կլքեք: Անգլիացիք չուզեցին գրահանավերով մտնել Տարտանել և Պոլիս: Անոնց հաշիվն էր, թե որո՞ւ համար տիրենք Տարտանելին, քանի որ Պոլիսը և Նեղուցները խոստացված են Ռուսիո: Որով իրենց զոհաբերությունը պիտի ծառայեր Ռուսիո տիրապետության:

«Ավելին ըսեմ: Գերմանացիք ևս կուզեին, որ անգլիացիք տիրեն Տարտանելին և գան Պոլիս, թեպետ մեր զինակիցներն էին: Ինչքան հեռաքնակ թնդանոթ կուզեինք Տարտանելի համար, անոնք կձգձգեին, թեքնիք և այլ պատճառներով: Բայց երբ պարզ եղավ, թե անգլիացիք այլևս պիտի չգան, թնդանոթները առատորեն եկան: Գիտե՞ս ինչու: Գերմանները կհուսային անգլիացիներու մուտքով Պոլիս, ճեղք մը բանալ ռուսերու և անգլիացիներու միջև:

«Այս բոլորն մեկ բան պարզ էր. Տարտանելը բռնությամբ մտնելու անհնարությունը տարածվեցավ, ինչ որ առասպել և սուտ էր առաջին շրջանին, իսկ իրական եղավ, երբ անոր վրա ծովով հարձակող չկար: Պարզ էր մեզի համար, որ, գոնե ծովով, անգլիացիք չեն ցանկար մտնել Տարտանել:

«Իսկ ցամաքով Տարտանելին տիրելու ճանապարհը Կելիպոլիի թերակղզին չէր, այլ այդ թերակղզիի գլուխը, ուր ես նստած էի, հսկելով Քսերոսի ծովախորշին Թեքիր Տաղի փեշերեն: Այդ տեղեն է

որ կարելի էր ցամաքով երթալ և տիրապետել Կելիպոլիի թերակղզիին, ուր մեր ուժերն էին կեդրոնացած, քանի որ իշխելու բանալին հոն թաքնված էր: Բայց ի գուր կսպասեի մեզի համար ճակատագրական այդ կետի վրա: Մեզ հանգիստ կթողնեին: Եթե հիմար չլինեին, կամ ավելի ճիշտը՝ եթե լրջորեն ցանկային Տարտանելին տիրել, փոխանակ յուրաքանչյուր օր զոհաբերելու 20–30 հազար մարդ Կելիպոլիի թերակղզիին մեջ, այդ գորքերը կհատկացնեին Սերոսի ծոցեն զարնելու թերակղզիի վիզին և գագաթին: Այդ պարագային մեր ուժերը հոն ուղարկելը, մեր պարենավորումը անհնար պիտի ըլլար, և Կելիպոլին ինքն իրեն պիտի իյնար և Նեղուցները պիտի բացվեին: Բայց ըսի, որ անգլիացիներու բուն նպատակը Նեղուցները տիրապետելը չէր, այլ Նեղուցներու մեջ մեզ զբաղեցնելը և մեզ մաշեցնելը: Այդ նկատեցինք: Ես համոզված էի ասոր մեջ: Ատոր համար է որ մեր ուժերը թեթևացուցինք Տարտանելի շրջանեն, և ես ուզեցի հեռանալ նոր ճակատ մը, ուր պարտվիլ և հաղթել հնարավոր էր: Եվ ես եկա Կովկասյան ճակատ՝ ձեզի և ռուսերուն հաղթելու համար»:

Վեհիպ փաշայի այս դատողությունները ջանացի հնար եղածին չափ հարազատորեն հոս բերել՝ ցույց տալու համար Ռոտոսթոյի կարևոր նշանակությունը Պոլսո և Նեղուցներու համար:

Ռուբէն (Տեր-Մինասյան), Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. Զ, Կարսէն՝ Պոլիս (1909), Թեհրան, 1982, էջ 253–260:

* Դարդանելի գործողության վերաբերյալ լրացուցիչ խորհուրդ է տրվում կարդալ՝

1. Корбетт Ю. Операции английского флота в мировую войну. Пер. с англ. Изд. 3–е, т. 2, М., 1997, 470с.
2. Нарочницкая Н. “Восточный вопрос” и мировая политика.
<http://nash-sovremennik.ru/p.php?y=2004&n=10&id=3 /07/07/2014/>.
4. Շամլեան Ա. Տարտանելի պատերազմը. Կ. Պոլիս, 1930, 400 էջ:

ЛЕГЕНДА ДАРДАНЕЛЛ ИЛИ «ЧЕРНАЯ ДЫРА»
ТУРЕЦКОГО СТРАТЕГИЧЕСКОГО ПИАРА

ЛЕВОН ШИРИНЯН

*Заведующий кафедрой политологии и истории права АГПУ
имени Х. Абовяна, доктор политических наук, профессор*

В документе представлены воспоминания и оценки Вегиб паши –турецкого военно–политического деятеля времен Первой мировой войны – о событиях вокруг «турецких морских путей» в контексте всемирной политической игры.

В рассуждениях автора явно просматривается безошибочно действующая в природе и обществе закономерность – постоянное стремление к равновесию, приносящее одним смерть, другим – счастье, хотя и временное.

THE LEGEND OF DARDANEL OR TURKISH “BLACK HOLLOW” OF STRATEGIC PR

LEVON SHIRINYAN

*Doctor of Political Sciences, Professor, Head of the Chair of
Politics and Law History, ASPU after Kh. Abovyan*

In the context of the hundredth anniversary of the First World War, the recognition of “Armenocide” by Turkey is significant sometimes for revealing the historical truth, and in some ways for refirming the chain of lies and disguising crucial historical facts. Among those events it is worth mentioning the desire of France and England to conquer “Turkish water routs’, the motivation of some influential countries and the victory of Turkey.

Հոդվածի ներկայացման փառերթիվը 13.04.14 թ.

**ԱՆՀԱՏԻ ԻՆՔՆՕՏԱՐՄԱՆ ՖՐՈՄՅԱՆ
ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածը նվիրված է օտարման ֆրոմյան հայեցակարգի փիլիսոփայական և սոցիալ-հոգեբանական վերլուծությանը: Բացահայտված է ինքնօտարման ֆրոմյան մեկնաբանության բնույթը, ուսումնասիրված են ինքնօտարման մեխանիզմները, ընդ որում վեր է հանված «շուկայական կողմնորոշման» որոշիչ դերը սովյալ երևույթի ձևավորման գործում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ սոցիալական բնավորություն, բնավորության ավտորիտար տիպ, շուկայական ախտորոշում:

Ֆրոմը սոցիալական բնավորությունը բնորոշում է նաև որպես մարդկային էներգիայի դրսևորման ձև, որն առաջանում է որոշակի ապրելակերպին մարդու պահանջունքները հարմարեցնելու ընթացքում:¹ Ֆրոմը նշում է, որ սոցիալական բնավորությունը «... այս կամ այն հասարակարգում սովյալ պահին գոյություն ունեցող պայմաններին մարդկային էակի դինամիկ հարմարման որոշակի արդյունքն է»:² Խոսքը ոչ թե պասիվ, այլ հենց ակտիվ, դինամիկ հարմարման մասին է: Դինամիկ հարմարումը հանգեցնում է նրան, որ մարդու էներգիան ձեռք է բերում այնպիսի ձևեր, որոնք նրան ստիպում են գործել տնտեսության առանձնահատուկ պահանջներին հա-

մապատասխան:³ Հասարակությունը վերարտադրում է իրեն ներհատուկ սոցիալական բնավորության գործառույթային, տիպական կողմնորոշումները:

Օրինակ, Ֆրոմը համոզված է, որ բնավորության ավտորիտար տիպի առավել բնորոշ գիծը պետք է փնտրել իշխանության, առհասարակ ուժի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի մեջ: «Ավտորիտար բնավորությունը,— նշել է նշանավոր հոգեբանը և փիլիսոփան,— բոլոր մարդկանց բաժանում է ուժեղների և թույլերի: Ուժը նրա մեջ առաջացնում է սեր և հարգանք, նա պատրաստ է հետևելու նրա հրամաններին, լիովին ենթարկվելու նրան, և կարևոր չէ, թե այն (իմա՛ ուժը) որտեղից է բխում: Ուժը գրավում է նրան միայն այն պատճառով, որ ուժ է, իսկ նրա հետևանքները ... նրա համար ոչ մի նշանակություն չունեն»:⁴

Ուժը մեծարելու, նրա առջև խոնարհվելու զանգվածային դիրքորոշումը վկայում է ոչ միայն ավտորիտար բնավորության, այլև, ամբողջությամբ, ավտորիտար և օտարված հասարակության մասին: Թուլությունն ու սոցիալական անօգնականությունն ավտորիտար անհատի մոտ առաջացնում են դրանց կրողների նկատմամբ քամահրանքի, չարախնդության, առօրեական սադիզմի զգացումներ: Թույլ, անզոր մարդու սուկ

¹ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. – Минск, 2000 – с.341
² Նույն տեղում, էջ 366

³ Նույն տեղում, էջ 348
⁴ Նույն տեղում, էջ 210:

արտաքին տեսքն ավտորիտար անհատի մեջ կարող է առաջացնել նախահարձակ լինելու, դիմացինին ստորացնելու, ոչնչացնելու ճգտում: «... Ավտորիտար բնավորությունը,— նշում է Ֆրոմը,— թելադրում է իր պայմանները, և որքան թույլ է գոհը, այնքան մեծ է ցասումի զգացումը»:¹ Ավտորիտար անհատը ճգտում է անշեղորեն կատարել իշխանության պահանջները՝ ենթարկվելով դրանց, ամեն կերպ ջանում է օգտվել հնարավոր անձնական կապերից, դրանք ծառայեցնել իր նեղ օգտապաշտական շահերին: Սոցիալական կյանքը դիտվում է որպես խաղի, ամուսնի կամ գործարքի մի տեսակ, որտեղ «հաղթողը» հանդես է գալիս իբրև կենսահաջողակության խորհրդանիշ: Նա ներքին մեծ պատրաստականությամբ և հաճույքով ենթարկվում է ճակատագրին և լողում հոսանքի ուղղությամբ՝ համակերպվելով տիրող սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակին: Իհարկե, ամեն մեկը խիստ յուրովի է հասկանում «ճակատագիր» հասկացությունը՝ ելնելով իր որոշակի սոցիալական կարգավիճակից: Օրինակ՝ զինվորի համար «ճակատագիրը» ներկայանում է նրա հրամանատարի կամքի կամ քնահաճույքի տեսքով, որին «ուրախ է ծառայել»: Մանր ձեռնարկատերի համար «ճակատագիրը» մարմնավորված է շուկայի տնտեսական օրենքների մեջ: Նրա համար ճգնաժամը կամ հաջողությունը ոչ թե սովորական հասարակական երևույթներ են, որոնք, ջանքերի համախմբման դեպքում կարելի է կանոնավորել, շտկել, այլ բարձրագույն ուժի դրսևորումներ: Նա հարկադրված է ենթարկվել «ուժային» հանգամանքներին, եթե չի ցանկանում հայտնվել «խաղից դուրս» վիճակում կամ սոցիումի հետնաբակերում: Ասվածին Ֆրոմը հավելում է,

¹ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. – Минск, 2000 – с.210.

որ ուրիշների ճակատագրերը տնօրինողներն իրենք ևս ունեն իրենց ճակատագիրը: «Եվ տարբերությունը,— եզրափակում է ականավոր հոգեվերլուծաբանը և սոցիոլոգը,— ամենևին ենթակայության զգացմունքի մեջ չէ, այլ իշխանության և ուժի թափի մեջ, որոնց պետք է ենթարկվի անհատը»:²

Ֆրոմը քննում է նաև սոցիալական բնավորության այն տիպը, որի բնութագրական հատկանիշը շուկայական կողմնորոշումն է: «Բնավորության այն կողմնորոշումը, որը հիմնված է իրեն՝ որպես ապրանք, այն է՝ փոխանակային արժեք ընկալելու վրա, ես անվանում եմ շուկայական կողմնորոշում»:³ Ֆրոմը գտնում է, որ անհատի շուկայական կողմնորոշումը ձևավորվում է այն դեպքում, երբ մարդու և ապրանքի գնահատման չափանիշները նույնանում են: Այսինքն՝ մարդը դառնում է նույնպիսի ապրանք, ինչպես բոլոր մյուս ապրանքները: Ե՛վ ապրանքային շուկայում, և՛ անձնավորությունների շուկայում գործում է գնի որոշման նույն սկզբունքը, միայն այն տարբերությամբ, որ առաջին դեպքում վաճառվում են ապրանքներ (իրեր), իսկ երկրորդ դեպքում՝ մարդիկ:⁴ Սա է Ֆրոմի հիմնական գաղափարը և, պետք է խոստովանել, որ այն խիստ «հոգեհարազատ» է մեթոդյա հետխորհրդային նորաբուրժուական հասարակությանը:

Մարդկային անհատն իր ներաշխարհով, մտածողությամբ և գործողություններով հարմարվում է շուկայական տնտեսության կառուցվածքային այդ սկզբունքին: Շուկայական գնահատման սկզբունքը դառնում է իրականություն, հասարակության, խմբերի, ինքն իր և այլ իրողու-

² Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. – Минск, 2000 – с.190:

³ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. – Минск, 2000 – с.455.

⁴ Նույն տեղում, էջ 456:

թյունների արժևորման եղանակ: Եվ պատահական չէ, որ հասարակական մարդու գնահատման հիմնական չափանիշներից մեկը դառնում է իրեն հաջող կերպով առաջարկելու և վաճառելու ունակությունը: Այլ կերպ ասած՝ հաջողակությունն արդեն կախված է ոչ այնքան մարդու ստեղծագործական ունակություններից, որքան իրեն հաջող վաճառելու հնարամտությունից: Ուրեմն՝ կարևորն արդեն դառնում է ինքն իրեն լավ վաճառել կարողանալը, ներկայացնելը, հասարակության մեջ ընդունվելը, հետևաբար՝ պահանջարկ վայելելը: Դրա համար անհրաժեշտ է հարմարվել կյանքի պահանջներին, հետևել, թե ինչ են «անում», «խոսում», «զգում» ուրիշները («հաջողակները»), ինչպես են նրանք հագնվում կամ ինչ կինոնկարներ են դիտում:

Յուրաքանչյուր անձ, նախևառաջ, ներկայացնում է իրեն: Եվ իսկապես, այնքան էլ կարևոր չէ, որ տվյալ անձը զարգացնում է իր սեփական և ստեղծագործական ունակություններն, իր ինքնությունը, սեփական քննադատական միտքը, իր անձնական նույնականությունը: Ընդհակառակը, կարևորն այն է, որ նա միշտ գտնվի «պատշաճ վիճակում» ընդունված և սիրված լինի «էտալոնային» խմբում: Համապատասխանաբար, նա այնպիսին է, ինչպիսին որ նրան ցանկանում են տեսնել ուրիշները: Դա նշանակում է, որ նա միշտ պետք է արագ հարմարվի «շուկայի» նոր պահանջներին: Այդպիսի հասարակության մեջ պահանջարկ ունի պատեհապաշտը, նա, ով գիտե, թե քամին որ կողմից է փչում և թե ինչպես կարելի է իրեն «լավագույն» ձևով ներկայացնել իշխանակիրների ներփակ խավին և մերձակա շրջապատին: «Հաջողությունը,— նշում է Ֆրոմը,— մեծապես կախված է նրանից, թե որքանով մարդը կարող է իրեն լավ ներկայացնել, թե որքանով գրավիչ կլի-

նի նրա «փաթեթավորումը», թե որքանով նա կարող է ճշմարիտս իրեն ներկայացնել իբրև «առույգ», «ամուր», «եռանդուն», «հուսալի», «հավակնոտ» (այդ բառի լավ իմաստով):¹

Այս ամենը նկատի ունենալով՝ Ֆրոմը նշում է. «Եվ ստացվում է այնպես, որ մարդը կենտրոնանում և հոգ է տանում ոչ թե իր կյանքի, երջանկության մասին, այլ այն մասին, թե ինչպես դառնա առավել դյուրավաճառ ապրանք, որը մեծ պահանջարկ է վայելում: Մարդու այդպիսի զգացումները հավասարազոր և հավասարաթեք են ապրանքի, օրինակ՝ վաճառատեղանին դրված պայուսակների զգացումներին, եթե նրանք կարողանալին զգալ և մտածել»: ² Ասվածն էլ ավելի ցցուն դարձնելու համար նշենք, որ պատկերավոր ասած, «մարդ-պայուսակը» ևս պետք է նորաձև լինի, եթե իրեն ներկայացնում է իբրև ապրանք: Դրա համար պետք է, որ նա քաջատեղյակ լինի, թե հասարակության մեջ տվյալ պահին անձնավորության որ տեսակն է առավել մեծ պահանջարկ վայելում: Սա պնդելով հանդերձ՝ հարկավոր է, ո՛ր մարդն օժտված լինի այնպիսի ընդհանուր որակներով, ինչպիսիք են՝ հարմարվողականությունը, փառասիրությունը, ուրիշ մարդկանց փոփոխվող սպասելիքներին և պահանջներին արագ արձագանքելու հատուկ զգայունակությունը և այլն:

Ֆրոմը փորձում է նորովի հասկանալ անհատի ինքնագնահատականի դերը բնավորության շուկայական տիպի ձևավորման գործում: Եթե մարդն իրեն ընկալում է և՛ որպես վաճառող, և՛ որպես վաճառքի ենթակա ապրանք, ապա այն, թե ինչպես է նա իրեն գնահատում, այսինքն՝ նրա ինքնագնահատականը, կախված է

¹ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. – Минск, 2000 – с.457.

² Նույն տեղում, էջ 457–458:

պայմաններից, որոնք ամեննին նրանից կախված չեն, չեն ենթարկվում նրան: Եթե մարդը համարվում է «հաջողակ», ապա ունի հասարակական արժեք, իսկ եթե ոչ չունի արժեք: Եթե տվյալ մարդը հարկադրված է ապրել հաջողության հասնելու մշտական ճգնումներով, ցանկացած անհաջողություն դառնում է նրա դրական ինքնագնահատականի սպառնալիք:¹ Սակայն խնդիրը ոչ այնքան ինքնահարգանքի և ինքնագնահատականին սպառնացող վտանգների մեջ է: Բանն այն է, որ ինքնահարգանքը կորցրած մարդը դադարում է իրեն ընկալել իբրև անկախ ու ինքնավար, ամբողջական և միասնական էակ: «Դրա հետևանքով, — նկատում է Ֆրոմը, — նրա ուժերը և այն ամենն, ինչ դրանց միջոցով ստեղծված է, օտարվում է նրանից, դառնում է նրանից տարբերվող ինչ-որ բան, որը կգնահատեն և կօգտագործեն ուրիշները»:² Ստացվում է, որ մարդկային անհատականության, ինքնության կորուստը կարծես թե փոխհատուցվում է սոցիալական բարձր վարկով, նյութական բարեկեցությամբ, քաղաքական հաջողությամբ: Հետևաբար, անձը հայտնվում է ուրիշների կարծիքից, ընկալումից լիակատար կախվածության մեջ: Շուկայական կողմնորոշման պայմաններում մարդն իր անհատականության զգացումը փնտրում է ոչ թե իր մեջ, իր ստեղծարար ունակությունների մեջ, այլ իր մասին ուրիշների կարծիքների, գնահատականների մեջ: «Իմ ես-ը, — նշում է Ֆրոմը, — կարելի է որոշել այն գնով, որ ինձ համար տվել են»:³

Շուկայական կողմնորոշման պայմաններում ուրիշների ընկալման և ինքնարևակալման միջև տարբերությունները վերանում են: «Եղանակը, — նշում է Ֆրոմը, — որով մարդն ընկալում է ու-

րիշներին, լրջորեն չի տարբերվում ինքնարևակալումից: Ինչպես իրեն, այնպես էլ ուրիշներին մարդն ընկալում է իբրև ապրանք»:⁴ Դրանից հետևում է, որ անհատականությունը, այն, ինչը մարդու մեջ անկրկնելի ու եզակի է, արժեզրկվում է: Մարդկային ինքնատիպությունը դառնում է «տարօրինակություն» բառի հոմանիշը: Իսկ «հավասարություն» բառը դառնում է փոխադարձ փոխարինելիության համարժեքը, որն է՝ անհատականության ուղղակի ժխտումը:⁵

Ժամանակակից մարդու ինքնօտարվածության բնորոշ գծերից մեկը դառնում է ինքն իր և ուրիշների նկատմամբ սառն անտարբերությունը, որն ուղեկցվում է անկեղծության, մարդկային ջերմության զգացումների բթացմամբ, արժեզրկմամբ: Դա հնարավոր է միայն որոշակի սոցիալական իրադրության պայմաններում: «Իրադրության մեջ, — նկատում է Ֆրոմը, — երբ անհատական «ես»-ը հաշվի չի առնվում, երբ այն պարզապես անտեսվում է, մարդկանց միջև հարաբերությունները չեն կարող լինել անկեղծ ու ջերմ, անհրաժեշտաբար դրանք դառնում են մակերեսային, որովհետև հարաբերությունների մեջ են մտնում ոչ թե մարդիկ, այլ փոխադարձաբար փոխարինելի ապրանքները»:⁶

Շուկայի և կապիտալի անտեսանելի ձեռքը հեռավորությունից կառավարում է մարդկանց վարքը: Թե՛ Արևմուտքի, թե՛ հետխորհրդային երկրներում օտարված «շուկայական» վարքի մոդելը նույնն է՝ լավագույնս հարմարվել շուկայի պայմաններին և գործել նրա ոգով: Ընդ որում, թույլ արտահայտված կամ անկատար շուկայական տնտեսություն ունեցող հետխորհրդային երկրներում գերակշռում է

¹ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. — Минск, 2000 — с 459-460.

² Նույն տեղում, էջ 461:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 461-462:

⁵ Նույն տեղում:

⁶ Фромм Э. Бегство от свободы. Человек для себя. — Минск, 2000 — с. 461-463.

պասիվ հարմարվողականությունը: Արևմուտքի ազատական–կապիտալիստական հասարակություններում մշտապես պահանջվում է զբաղվել մարկետինգով: Երևույթները ճիշտ են նկատված, գնահատականներն ու եզրակացությունները համարժեք են կապիտալիստական հասարակության ռեալ իրողություններին: Հոգեբանական առումով մարդկային անհատի շուկայական կողմնորոշումը սերտորեն միահյուսված է ոչ միայն նրա զգացմունքների, ապրումների, այլև մտածողության հետ, ուստի և իրական անհատի մտածողությունը ներկայանում է որպես մտածողության և շուկայական կողմնորոշման միասնություն: Այդ սերտաճվածությունը դրսևորվում է նրանով, որ սոցիալական մտածողությունը ստանձնում է իրադրությունը արագ որսալու գործառույթ, որպեսզի կարողանա այն օգտագործել իր նեղ օգտապաշտական նպատակների համար: Հոգեբանական թեստերը կոչված են ստուգելու ոչ այնքան մարդու՝ հասկանալու, իմաստավորելու ունակությունները, որքան առաջադրված խնդրին արագ հարմարվելու ունակությունները: Ֆրոմն այդ թեստերն անվանում է «մենտալ հարմարման թեստեր»: Այդօրինակ վիճակում խնդրահարույց պրոբլեմի անվանակնքումը ևս վերածվում է յուրահատուկ ապրանքի: «Այդ իրադրության մեջ,— նկատում է Ֆրոմը,— մարդը ձերբազատված է իր ուժերից. մտածողությունը և գիտելիքն ընկալվում են իբրև պահանջվող արդյունքների հասնելու գործիք»¹:

Մարկետինգային կողմնորոշման ֆրոմյան քննադատությունը բնականաբար ուղղված չէ օգտակար ապրանքների ու ծառայությունների, գեղեցիկ իրերի և դրանց փաթեթավորման, ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների

դեմ: Նրան մտահոգում են դրանց հիմքում ընկած շարժառիթներն ու նպատակները: Մեծ ռիզիկոներն անհանգստացնում են մարդկանց, մշակույթի և քաղաքականության այդ համընդգրկելի «մարկետինգի» հոգեկան և սոցիալական հետևանքները: Ֆրոմը բարոյախարատական քարոզների սիրահար չէ: Նա պատրաստ է ընդունել մոդեռնի դրական հնարավորություններն ու նվաճումները: Սակայն նա մերժում է մարդկանց գործիքայնացումը հանուն կասկածելի նպատակների, մարդկանց, որոնք կողմնորոշվում են նախևառաջ «ունենալով», այն, ինչը բերում է նյութական, հաջողություն, իշխանություն և հանրային հեղինակություն:

Հետխորհրդային հասարակություններում սոցիալ–տնտեսական փոխակերպումների ժամանակ արագ հարստացած ազդեցիկ խավի մոտ անբարո եսասիրության, ինքնասիրահարվածության ուժգին հակում է նկատվում: Այն *amoral familism* կամ մերօրյա ժարգոնով՝ կլանային–կորպորատիվ եսակենտրոնություն անվանումն է ստացել: Նորահարուստները գիտակցաբար ցուցադրում են իրենց հարստությունն ու դրանից աներևակայելի հաճույք են ստանում, չնայած որ իրենց հարստությունը դիզել են անբարո և անօրինական եղանակներով: Դրանց որոշ ներկայացուցիչների վարքը ակնհայտ վայրենաբարո «նարգիզականության» փայլուն օրինակ է: Նորահարուստներն, իշխանությանը մոտ կանգնած արտոնյալ խմբերը և նրանց շուրջ պտտվող արբանյակները մտածում են, նախևառաջ, իրենց օգուտի, անհատական կամ խմբային առաջխաղացման մասին: Ակնհայտ է, որ նրանք ուրիշ մարդկանց, ժողովրդին, պետական ինստիտուտները, բանկերը և այլն օգտագործում են իրենց իշխանությունը, հաջողությունն ու հեղինակությունն ուժեղացնելու նպատակով: Նրանք

¹ Նոյն տեղում, էջ 465

դարձել են ընդօրինակման, հարգանքի ու ինքնահարգանքի կենդանի տիպարներ: Ցուցադրական բարեգործություններով իրենց «իսկական ազգասիրությունը» ցույց տալով՝ հանրությունից քողարկում են իրենց իրական քաղաքական նպատակները: Հանրային դաշտում բազմահար ձեռնածուական գործադրումների շնորհիվ կատարելագործվում է սոցիալական երեսպաշտության, կեղծավորության տեխնիկան:

Ավելի «փոքր տրամաչափի» անհատները, որոնք, սովորաբար, պտտվում են իշխող վերնախավի, օլիգարխների և նրանց մերձակա շրջապատի շուրջը, նրանցից «կյանքի դասեր են քաղում»: Երջանկահիշատակ հայրիկիս խոսքերով՝ «շատերը կատարելագործվում են իրենց «ծախելու» տեխնիկայի մեջ»: Դրան «նպաստում» են հոռի սոցիալական բարքերը: Նման անհատները լավատեղյակ են, որ վաճառվում են ոչ միայն ապրանքներն ու ծառայություններն, այլև տիպարները, հուսալի գործընկերոջ կամ քաղաքական սպայակի «համբավը» և այլն: Նրանք ստիպված են հսկել իրենց հուզավիճակները, թաքցնել կամ ճնշել ինքնաբուխ մղումները, որոնք կարող են ոչ բարենպաստ տպավորություն թողնել իրենց «տերերի»-ի վրա: Դրա փոխարեն խթանում կամ արհեստականորեն իրենց մեջ արթնացնում են զգացումներ, որոնք պահանջվում են տվյալ պահին: Բնութագրելով անհատի այդ տեսակը, Ֆրոմը ցույց է տալիս, թե ինչպես այդպիսի անհատի կյանքում կարևորվում են իրեն «վաճառելու» տեխնիկան, ուրիշների բարեհաճությունը ձեռք բերելու ունակությունը:

Այստեղ հարկ է խուսափել որոշ թերըմբռնումից: Ֆրոմը չի քննադատում հասարակական ճանաչման, անձնական անվտանգության և տնտեսական հաջողության մարդկային ձգտումը: Նրա

համար կարևորվում է ոչ միայն մարդու արտաքին վարքը, այլև մարդու գործունեության շարժիչ ուժը և այն, թե իրականում ինչի է նա ձգտում, թե որն է նրա հավատո հանգանակը: Այս առումով հասկանալի է դառնում, թե ինչու է Ֆրոմը դիմում արդյունաբերական քաղաքակրթության տնտեսական համակարգի քննադատական վերլուծությանը՝ նշելով, որ այդ տնտեսական համակարգի զարգացումը պայմանավորված է ոչ թե մարդու կարողությունների ինքնիրացման, այլ բուն համակարգի զարգացմանը ներհատուկ պահանջներով: Տրամաբանական այդ եզրահանգումը ամրապնդվում է այն պնդումով, թե համակարգի կողմից մարդուն ներկայացվող պահանջները՝ էսպաշտությունը, ինքնասիրությունը և ընչաքաղցությունը սոցիալական ծագում ունեն: «Մարդիկ, — նշում է Ֆրոմը, — անկարող են հասկանալ, որ այդ գծերը ոչ թե բնական հակումների (որոնց շնորհիվ հնարավոր է դարձել արդյունաբերական հասարակության գոյությունը), այլ սոցիալական պայմանների արդյունքն են»:¹ Ֆրոմի ուրվագծված «համընդհանուր օտարման» պատկերն այսօր ամենևին էլ չի թվում վերացական, ուտոպիական կամ չափազանցված: Ըստ նրա, մարդը ենթարկված է ոչ միայն իրերի աշխարհին, այլև հասարակական և քաղաքական հանգամանքներին, որոնք ինքն է ստեղծել: Օտարված մարդը, որ հավատում է, թե իշխում է բնության վրա, դառնում է իրերի ու հանգամանքների ստրուկը, քաղաքական մեզամեքենայի անօգնական կցորդը:

Ֆրոմի վերջին գրքի՝ «Ունենալ կամ լինել»² (1976) անվանումը ձայնակցում է

¹ Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., ООО “Фирма “Издательство АСТ”, . 2000, — с. 197.

² Фромм Э. Иметь или Быть? – М.: ООО “Фирма “Издательство АСТ”, 2000

Գաբրիել Մարսելի «Լինել և ունենալ» գրքի անվանմանը: Այդ կապակցությամբ Ֆրոմը նշում է ոչ միայն անվանումների մոտիկությունը, այլև դրանց գաղափարական հոգեհարազատությունը: Է.Ֆրոմը սահմանագիծ է անցկացնում «լինելու» սկզբունքի և «տիրապետելու» սկզբունքի միջև: Լինել՝ նշանակում է ճանապարհ հարթել սեփական ունակությունների, տաղանդի, մարդկային շնորհների ողջ հարստության դրսևորման համար, որոնցով, թեև տարբեր մակարդակով օժտված է մարդը: Լինել՝ դա նշանակում է բարեփոխվել, աճել, հորդալ, հաղթահարել սեփական մեկուսացված «ես»-ի պատնեշները, կրքոտորեն ձգտել ինչ-որ վեհ բանի, ունենալ նրա նկատմամբ խոր հետաքրքրություն: Տիրապետելու դիրքորոշումն ընկալվում է իբրև կյանքի բնականոն գործառույթ. սպրելու համար պետք է տիրանալ սեփական կյանքին գոհացում պատճառող իրերին: Ինչպե՞ս կարող է ժամանակակից հասարակությունում ծագել «ունենալու, թե՛ լինելու» հարցը, երբ դրա բարձրագույն նպատակը հենց ունենալն է, այն էլ շատ ունենալը, երբ մարդկանց մեծամասնությունն իր կեցությունը չափորոշում է հանրահայտ հեգնական հարցադրմամբ. «Եթե դուք այդքան խելոք եք, ինչո՞ւ եք այդքան աղքատ» («Եթե դուք այդքան խելացի եք, հապա ինչո՞ւ եք այդպես մեռած»): Կամ էլ՝ մեկը մյուսի մասին կարող է ասել. «Նա արժի միլիոն դոլար»: Հետևաբար օգտապաշտական տեսանկյունից մարդկային կեցության էությունը հենց տիրապետման մեջ է, և որ մարդը ոչինչ է, եթե ոչինչ չունի:¹

Տիրապետման կողմնորոշումը դրսևորվում է նույնիսկ լեզվի մեջ. առաջներում ասում էին «ես ցանկանում եմ», այժմ՝ «ես ցանկություն ունեմ», «ես գիտեմ» արտա-

հայտության փոխարեն ասում են՝ «ես տիրապետում եմ ինֆորմացիայի», «ես չեմ ցանկանում դա անել» արտահայտության փոխարեն ասում են՝ «դա անելու ոչ մի ցանկություն չունեմ», «մարդկանց հետ ընկերություն անելու» փոխարեն ասում են՝ «ունենալ ընկերներ»: Առկա է բայի վերածում գոյականի նույնիսկ այնտեղ, որտեղ առանց դրա էլ կարելի է: Չէ որ բայը՝ ապրում, պրոցես է, իսկ գոյականը՝ ինչ-որ բան է, որը կարելի է, պատկերավոր ասած, յուրացնել, դնել գրպանը, ունենալ: Այսպիսով, ամենօրյա կյանքում հարկավոր է հետևել սեփական խոսքերին՝ դա ևս ընչաքաղցությանը դիմադրելու մեթոդ է: Ակներև է, որ «ունենալու», «տիրապետելու» դիրքորոշումը խիստ խոցելի է: Կեցության արժեքը դրսևորվում է նվիրումի, ինքնազոհողության և այլ դրական մղումների մեջ, որոնք գորանում են մարդու՝ դրականորեն իսկական գոյության պայմաններում: Անտարակույս, այս խորհրդածությունները մեր օրերում ձեռք են բերել հատուկ նշանակություն և հրատապություն: Ֆրոմը նկատում է, որ հաճախ «ունենալ» և «տիրապետել» բառերն ավելի ու ավելի շատ կապվում են սոցիալական հեղինակության խորհրդանշների և սպառման իրադրության հետ: Անդադար վազքը անձնական ունեցվածքի ու հարմարավետության ետևից մարդկանց դարձնում է իմաստավորված, հոգեհարուստ կյանքի, ակտիվ քաղաքական գործունեության անընդունակ, օրավոր աճող սպառողական հավակնություններին գերի՝ նյութապաշտ և օտարված քաղքենիներ: «Լինելու», սեփական ինքնությանը համահունչ արժեքներով սպրելու պակասը փոխհատուցվում է նյութական բարիքներով, հատկապես հեղինակային սպառման առարկաներով:²

Ականավոր սոցիոլոգը և փիլիսոփան չի սահմանափակվում տիրապետման

¹ Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., ООО «Фирма «Издательство АСТ», 2000. – с. 204

² Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., 2000. – с. 293–309:

կողմնորոշման դրսևորումների պարզ արձանագրումով: Նա փորձում է բնութագրել «լինելությունը» իբրև գոյության եղանակ: Սկսենք նրանից, որ «լինելությունը» տիրապետման կողմնորոշման հակադրությունն է: «Լինելությունը» նաև իրայնացված, թվացյալ, անիսկական և օտարված գոյությանը հակադիր ճշմարիտ մարդկային կեցությունն է, իսկական գոյությունը՝ հայդեգերյան իմաստով: «Տիրապետումը, — նկատում է Ֆրոմը, — վերաբերում է իրերին, իսկ իրերը կայուն են ու ենթակա նկարագրության: Իսկ լինելությունը վերաբերում է փորձին, մարդկային փորձը սկզբունքորեն անհնար է նկարագրել: Նկարագրման լիովին ենթակա է միայն մեր person-ը, դիմակը, որ մեզանից յուրաքանչյուրը կրում է, «ես»-ը, որ մենք ներկայացնում ենք, քանի որ այդ person-ը իր է: Ընդհակառակը, կենդանի մարդկային էակն ինչ-որ մեռած, քարացած կերպար չէ և այդ իսկ պատճառով չի կարող նկարագրվել որպես իր»:¹ Այսինքն՝ Է.Ֆրոմի «ունենալ, թե լինել» հայտնի երկրնորանքը լուծվում է հոգուտ «ունենալուն», և անձը կեցության սուբյեկտից վերաճում է կեցության օբյեկտի: Ֆրոմը «լինելության» խնդիրը փոխկապակցում է անհատականության պահպանման պրոբլեմի հետ: Մարդկային անհատականությունն, անկրկնելիությունը, որ այնքան եզակի է, ինչպես մարդու մատնահետքերը, երբեք մտահասանելի չի դառնա, քանի որ գոյություն չունի կատարելապես երկու նույնական մարդ: Ոչ մեկը ի գորու չէ նկարագրելու Մոնա Լիզայի ժպիտը, միշտ էլ այն կմնա անորսալի, իհարկե ոչ այն պատճառով, որ այդքան «խորհրդավոր» է: Առհասարակ, յուրաքանչյուր մարդու ժպիտը խորհրդավոր է, եթե, իհարկե, գովազդատախտակին պատկերված արհեստական ժպիտ չէ: Այսուհանդերձ, Ֆրոմն ամեն-

ին չի իդեալականացնում մարդկային անհատականությունը, նա գլխավորապես նպատակ ունի ընդգծելու մարդու գոյության, նրա լինելության էկզիստենցիալիստական բնույթը:

Ֆրոմի սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական տրամաբանության մեջ ուշագրավ և առանձնահատուկ է այն, որ ունենալու և լինելու կողմնորոշումների ուսումնասիրությունը սկսվում է մարդկային ակտիվության, մասնավորապես «օտարված ակտիվություն» և «չօտարված ակտիվություն» տերմինների վերլուծությամբ: «Օտարված ակտիվության դեպքում, — նշում է Ֆրոմը, — ես ինձ չեմ զգում որպես իմ ակտիվության գործուն սուբյեկտը, ավելի շուտ իմ ակտիվության արդյունքն ես ընկալում եմ որպես ինչ-որ բան, որ գտնվում է «ինձնից դուրս», ինձնից բարձր, առանձնացված է ինձնից և ինձ հակադրված: Օտարված ակտիվության դեպքում ես, ըստ էության, չեմ գործում, արտաքին և ներքին ուժերի կողմից ինձ վրա գործողություն է կատարվում: Ես առանձնացել եմ իմ գործունեության արդյունքից»:² Այս տեսակետից, հետխորհրդային հայ հասարակության մեջ քաղաքական ակտիվության էժանագին նմանակումները, որոնք, իսկն ասած, քաղաքական ձեռնածությունների արդյունք են, կարելի է համարել օտարված յուրօրինակ ակտիվության դրսևորումներ: Հետխորհրդային հայ հասարակության մեջ հաճախ քաղաքացիներն ամերևույթ «ակտիվորեն» մասնակցում են ընտրությունների և այլ քաղաքական միջոցառումների, սակայն դրանք ամենին էլ սեփական կամքի կամ ընտրության արտահայտությունները չեն: Ավելին, մասնակցում են ընտրություններին, սակայն ներքուստ համոզված չեն թե դրանով կարելի է լու-

¹ Նույն տեղում, էջ 293:

² Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., 2000. – с. 297

ծել հասարակական հնչեղության որևէ կենսահույզ խնդիր: Կամ էլ, այնպիսի քաղաքական առաջնորդների հետևից են գնում, որոնք իրատեսական նպատակները չեն տարբերում պատրանքներից: Առհասարակ, հետխորհրդային հայ հասարակության մեջ մեծ է սին քաղաքական խոստումների, անիրատեսական նպատակների սոցիալական ուժն ու ազդեցությունը:

Առանձնացնելով կեղծ, օտարված ակտիվությունը՝ որպես անիսկական ակտիվության տեսակ՝ Ֆրոմը ցանկանում է վեր հանել դրա կապը մարդու ինքնօտարման, քաղաքական դիմագրկության երևույթի հետ: Իսկ չօտարված ակտիվության ֆրոմյան մեկնաբանության մեջ ուշագրավ է երեք հանգամանք: Նախ՝ չօտարված ակտիվության դեպքում անհատն իրեն զգում է իբրև իր գործունեության սուբյեկտ: Երկրորդ՝ չօտարված ակտիվությունն ինչ-որ արժեքի արարման, ստեղծման գործընթաց է: Դա գործընթաց է, որի մեջ անհատը պահպանում է իր կապը նրա հետ, ինչն ինքն է ստեղծել: Վերջապես, չօտարված ակտիվությունը անհատի ստեղծարար ներուժի դրսևորումն է, որտեղ անհատը և նրա գործունեությունը մի ամբողջական միասնություն են: Այդօրինակ ակտիվությունը Ֆրոմն անվանում է արգասաբեր ակտիվություն:¹

«Արգասաբեր ակտիվությունը, — նշում է Ֆրոմը, — նշանակում է ներքին ակտիվության վիճակ. պարտադիր չէ, որ այն կապված լինի արվեստի ստեղծագործության կամ գիտական աշխատանքի, կամ էլ պարզապես ինչ-որ «օգտակար» բանի ստեղծման հետ: Արգասաբերությունը բնավորության կողմնորոշում է, որը ներհատուկ է բոլոր մարդկային էակներին, եթե միայն նրանք հուզականորեն թերարժեք չեն: Արգասաբեր անձնավորու-

թյունները կենդանություն են հաղորդում ամեն ինչին, ինչին որ դիպչում են: Նրանք իրացնում են իրենց սեփական ունակությունները և ուրիշ մարդկանց ու իրերի մեջ կյանք են ներշնչում»:² Կյանքն ինքնին ստեղծագործություն է, ինքնակերտումը: Հետևաբար արգասաբերությունը ստեղծագործական փնտրտուքով հագեցված ամենօրյա մարդկային առաքելություն է: Հենց այդ աշխարհն է միակ իրական աշխարհը, իսկական արժեքների արարման աշխարհը, եթե արժեք անվանենք այն ամենը, ինչին մենք ձգտում ենք, ինչը թանկ ենք գնահատում, ինչը կուզենայինք պահպանել և ամրապնդել մեր կյանքում:

Ֆրոմին խիստ հոգեհարազատ է բուդդիզմի կենսափիլիսոփայությունը: Բուդդայի համայնքում գոյություն ունեւր կանոն յուրաքանչյուրը, որ մտնում էր համայնք պետք է հրաժարվեր սեփականությունից: Մի աշակերտ հարցրել է Բուդդային՝ «Ուսուցիչ, ես իմ ողջ սեփականությունը բաժանել եմ աղքատներին, ես այլևս ոչ մի ունեցվածք չունեմ, սակայն դուք միևնույն է դժգոհ եք ինձնից: Իսկ ահա նա / ուրիշ աշակերտը – Մ.Ը./ չի բաժանել իր ողջ սեփականությունը, իսկ դու ասում ես, որ նա ազատվել է ընչաքաղցությունից: Բացատրի ինձ, ես չեմ հասկանում»: Դա ճիշտ մեջբերում չէ, այլ մոտավոր շարադրանքը: Չակերտները, որ սովորաբար նշանակում են ուղիղ խոսքը, դրված են հարմարության համար: Բուդդան պատասխանում է՝ «Կարելի է ունենալ իրեր և միաժամանակ չլինել սեփականատեր»: Արգասաբեր, կենսահարուստ անձնավորության համար այն իրերը և փողերը, որ նա ունի, լրացուցիչ հնարավորություն ունեն՝ ուրիշներին օգնելու, սեփական մտահորիզոնն ընդլայնելու, հետազոտություններ կատարելու և այլնի համար: Մյուս

¹ Նույն տեղում, էջ 298:

² Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда, с. 298-299.

կողմից, կարելի է ամեն ինչ ուրիշներին տալ, լինել աղքատ և միաժամանակ հոգեբանորեն մնալ սեփականատեր, ընչաքաղց: Հետևաբար, աղքատ՝ պարտադիր չէ ազատ լինել ընչաքաղցությունից, «ունենալու» ձգտումից: Իր առաջին քարոզում Բուդդան ասել է, որ կա երկու ուղի, որոնցից «խուսափում է գիտունը», առաջին ուղին՝ հաճույքներին հետևելու ուղին է՝ սակայն դա գոեհիկ, անօգտակար և անպատիվ է, երկրորդը՝ հաճույքներից հրաժարվելու ուղին է՝ դա ևս գոեհիկ և անօգտակար է: Երրորդ ուղին (Բուդդան այն անվանում է «ազնվաբարո միջին ուղի»՝ բայց ոչ «ոսկե միջին» իմաստով)՝ դա ոչ վայելքապաշտությունն է /հեղուհիզմը/ և ոչ էլ ճգնավորությունն է, այլ ելքն է դեպի մեկ այլ չափում, հարթությունից վեր բարձրանալը, վեհանալը: Կենսահաստատ անձնավորությունը կախված չէ ոչ զգայական հաճույքներից, ոչ էլ դրանց բացակայությունից, չէ որ ճգնավորությունը հաճախ «վայելքապաշտությունն է՝ թարս, շրջված»՝ զգայական հաճույքներին խորապես քողարկված կապվածությամբ, ինչպես նաև սեփական «ճգնավորական» անձին կապվածությամբ:

Արգասաբերությունը և լինելությունը միմյանց հետ շատ աղերսներ ունեն: Լինելը վերաբերում է կյանքի իրական, այլ ոչ թե աղավաղված, պատրանքահաճո պատկերին: Լինելության իմաստը պարզվում է երևութականության, թվացողության հետ հակադրության մեջ:

Շատերի համար պատրանքների, թվացյալ և օտարված արժեքների աշխարհն է միակ «իրական» աշխարհը, որին ձգտում են, որը բարձր են գնահատում, որը ցանկանում են պահպանել և ամրապնդել իրենց կյանքում: Երևութականությանը օրինակ բերելով, Ֆրոմը նշում է, որ մարդը բարի մարդու թվացողություն է ստեղ-

ծում ուրիշների մեջ, չնայած նրա բարությունը միայն դիմակ է, որը քողարկում է ուրիշներին շահագործելու միտումը: Մեկ ուրիշը ձգտում է երևալ քաջարի, խիզախ, թեև ներքուստ լեցուն է սնափառությամբ: Մեկն էլ հայրենասերի համարում ունի, իսկ իրականում հետապնդում է նեղ եսափրական նպատակներ: Նույնը կարելի է ասել թվացյալ, կեղծ սիրո մասին: «Կեղծ սերը», այսինքն՝ եսամոլական ձգտումների փոխադարձ բավարարումը մարդկանց էլ ավելի եսամոլ է դարձնում»:¹ «Ես գտնում եմ,— նշում է Ֆրոմը,— որ մարդը պետք է ձերբազատվի պատրանքներից, որոնք նրան ստրկացնում և անդամալույծ են դարձնում: Նա պետք է ճանաչի իրականությունն՝ իր մեջ ու իրենից դուրս, որպեսզի ստեղծի աշխարհ, որը ոչ մի պատրանքի կարիք չունի: Ազատությունն ու անկախությունը կարող են ձեռք բերվել միայն այն ժամանակ, երբ ոչնչացվեն պատրանքների շղթաները»:² Այս և հարանման այլ դեպքերում երևութականությունը, այսինքն՝ մարդու երևացող կամ թվացող վարքը խորապես հակասում է այն իրական ուժերին, որոնք մոտիվացնում են նրա գործողությունները: Հենց այդ պատճառով էլ՝ «իմ վարքը տարբերվում է իմ բնավորությունից: Իմ բնավորության կառուցվածքը, իմ վարքի իսկական մոտիվացիան՝ իմ իրական կեցությունն է: Իմ վարքը կարող է մասնակիորեն արտացոլել իմ կեցությունը, սակայն սովորաբար այն յուրօրինակ դիմակ է, որը ես ունեմ, որը ես կրում եմ՝ հետապնդելով ինչ-որ սեփական նպատակներ»:³

Լինելու պրոբլեմը Ֆրոմը դիտարկում է նաև ես-ի և «ուրիշի» հարաբերություններ-

¹ Фромм Э. Революция надежды. Избавление от иллюзий. М.: Айрис-пресс, 2005. – с.339

² Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., 2000. – с. 314

³ Նույն տեղում, էջ 306:

րի համատեքստում: Ուրիշը՝ պարզապես սուբյեկտ կամ օբյեկտիվորեն գոյություն ունեցող իր չէ, չնայած որ ն՝ մեկն է, ն՝ մյուսը: Ուրիշը՝ դժոխքը չէ (Մարտր) և ոչ էլ դրախտը: Ուրիշը՝ աշխարհի մեր ընկալման կառուցվածքն է, եթե այդ աշխարհում չկա ուրիշը, ապա նրանում անհնար է ապրել, անհար է այն ընկալել և մտքով հասկանալ: Ես-ի և ուրիշի սերտ փոխկապակցությունն անխուսափելիորեն հանգեցնում է հասարակության, իշխանության հետ հարաբերվելու պրոբլեմին: Շատ բան կարելի է հասկանալ միջմարդկային հարաբերությունների մասին, եթե ուսումնասիրենք իշխանության նկատմամբ մարդու ձգտումները, տենչանքները:

Եթե հստակեցնելու լինենք իշխանության ըմբռնման Ֆրոմի տեսակետը, ապա այն կընդունի այսպիսի տարբերակված տեսք. իշխանությունը կարող է լինել «ռացիոնալ» կամ «իրացիոնալ»: Ռացիոնալ՝ բանական իշխանությունը հիմնվում է մասնագիտական իրավասության վրա: Անկասկած, գոյություն չունի իշխանության գործառնության ինչ-որ համընդհանուր բանական մոդել, որը կարելի է աշխարհի ցանկացած երկրում նույնությամբ կիրառել: Վերլուծությունները խոսում են ինստիտուցիոնալ ճգնաժամի և իրավասությունների բովանդակությունը կազմող որակների կորստի մասին: «Ժամանակակից հասարակության ճգնաժամը ... բացատրվում է նրանով, որ այդ հասարակության անդամները դարձել են անդեն գործիքներ, նրանց նույնականության զգացումը պայմանավորված է միայն կորպորացիաների կամ այլ վիթխարի բյուրոկրատական կազմակերպությունների գործունեությանը մասնակցությամբ: Նույնականության զգացում չկա այնտեղ,

որտեղ չկա իսկական անձնավորություն»:¹

Ըստ Ֆրոմի, ինչպիսին էլ որ լինեն իրավասության բովանդակությունը կազմող որակների կորստի պատճառները, խոշոր ու բարդ կառուցվածք ունեցող հասարակություններում իշխանությունից բնակչության մեծամասնության օտարացումն անխուսափելի է: Իշխանության իրական կամ շինծու և թվացյալ իրավասությունը փոխանցվում է պաշտոնական համազգեստին կամ տիտղոսին: Այսինքն, իշխանության իրավասության կարծեցյալ, կեղծ խորհրդանիշներին: Օրինակ՝ պետական գործիչը կարող է օժտված լինել իշխանության աստիճանակարգում իր դիրքը հաստատող բոլոր արտաքին հատկանիշներով և, միաժամանակ, լինել բթամիտ, կարճատես ու եսակենտրոն մարդ: Հիրավի, թագավորը մերկ է, սակայն հանրությունը պնդում է, թե նա շքեղ զգեստավորված է:

Այդ փոխակերպումն ինքնաբերաբար չի կատարվում: Ընդհակառակը՝ նա, ով օժտված է իշխանության բոլոր խորհրդանիշներով և դրանից օգուտներ է քաղում, հաճախ ձգտում է իր ենթակաների մեջ արմատախիլ անել իրատեսական, քննադատական մտածողության ունակությունները: Դրա հետևանքով ենթակաների կամ հպատակների բանականությունը դառնում է դյուրաթեք և դյուրափոփոխելի: Մարդը կորցնում է ինքնուրույն մտածելու, աչքի տեսածին հավատալու և սեփական կարծիքի վրա հենվելու մարդկային ունակությունը: Հավատալով հորինաբանություններին՝ նա դադարում է տեսնել քաղաքական իրականությունն այնպես, ինչպես որ այն կա:²

¹ Фромм Э. Иметь или Быть? – “Ника-Центр” “Вист-С”, Киев, 1998, с.325

² Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. – М., 2000. – с. 235–236

Առանձնահատուկ հրատապություն այսօր ձեռք են բերում Է.Ֆրոմի՝ հասարակության առողջացմանն ու հումանիզացմանը նպատակաուղղված նախագծերը: Անհատի նկատմամբ հասարակությունը կարող է իրականացնել տարբեր գործառույթներ. նպաստել մարդու պոտենցիալ ունակությունների բացահայտմանը, կամ ձևախեղել, ճնշել նրա ներքին ուժերը, նրանց հաղորդել խաթարված ձև: Հոգևոր առողջությունը, համաձայն Ֆրոմի, չի հանգում հիվանդ հասարակությանը մարդու հարմարվածության մակարդակին, այլ նրա ստեղծագործական կարողությունների առավել իրացմանը: Հենց այդպիսին պետք է լինի «առողջ» հասարակությունը: Իսկապես առողջ հասարակության մեջ մարդը պետք է դառնա հասարակական և ազգային զարգացման կենտրոնակետը, իսկ նրա կատարելագործումը և համակողմանիորեն ներդաշնակ զարգացումը՝ հասարակության և պետական քաղաքականության նպատակը:

«Ունենա՛լ, թե՛ լինել»¹ ՝ րքի վերջին մասում Ֆրոմը հանդես է գալիս կոնկրետ առաջարկություններով, որոնք հրատապ էին ինչպես երեկ, այնպես էլ այսօր: Օրինակ՝ անհրաժեշտ է արդեն ձերբազատվել «ուղեղների մաքրման-գտման» հոգեբանական բոլոր մեթոդներից, որոնք այսօր լայնորեն օգտագործվում են գովազդում և քաղաքական քարոզչության մեջ: Դրանք վտանգավոր են ոչ միայն այն պատճառով, որ մարդկանց դրդում են գնելու իրեր, որոնք նրանց բոլորովին պետք չեն և որոնք նրանք չեն ցանկանում ձեռք բերել: Այլն այն պատճառով, որ նրանք մարդկանց հարկադրում են ընտրելու այն քաղաքական գործիչներին, որոնց նրանք

երբեք չէին ընտրի, եթե լիովին վերահսկեին իրենց: Ֆրոմը գտնում է, որ հարկավոր է արգելել հիպնոսային ներգործության բոլոր ձևերը, որոնք կիրառվում են քարոզչության մեջ՝ ինչպես սպառման, այնպես էլ քաղաքականության բնագավառներում: Այստեղից էլ հետևում է՝ «Այդ սուգեստիվ մեթոդների ներգործության առանձնահատուկ արդյունքն այն է, որ նրանք ստեղծում են կիսամոռացության մթնոլորտ, երբ մարդը միաժամանակ հավատում և չի հավատում կատարվող իրադարձություններին, կորցնելով իրականության զգացողությունը»:²

«Ունենա՛լ, թե՛ լինել» գրքի հրապարակումից հետո անցել է շուրջ 40 տարի: Ցավոք, այդ ժամանակամիջոցում սկզբունքորեն ոչինչ չի փոխվել: Թվում է՝ որպեսզի մարդիկ արթնանան, անհրաժեշտ է ինչ-որ լուրջ ցնցում: Ըստ երևույթին, աղետը այս կամ այն տեսքով անխուսափելի է, ամեն ինչ դրան է մերձենում: Մենք արդեն իսկ ապրում ենք, եթե կարելի է այդպես արտահայտվել, թույլ, դանդաղորեն ընթացող աղետի պայմաններում, և ապագայում աղետաբեր իրադարձությունների ինչ-որ «խտացումը» այսպես թե այնպես անխուսափելի է: Եվ, միգուցե, դա արթնացնի մարդկանց՝ մղձավանջ հիշեցնող քնից և նրանց հոգիներում ինչ-որ արձագանք կգտնեն Ֆրոմի մարդասիրական գաղափարները: Ասված խոսքերն ամբողջովին վերաբերում են հայ իրականությանն ու հայ ժողովրդին, որն ապրում է «թունելի վերջում» լույս տեսնելու սպասումներով և տվյալտանքներով:

¹ Фромм Э. Величие и ограниченность теории Фрейда. Иметь или Быть? – М.: ООО “Фирма “Издательство АСТ”, 2000.

² Նույն տեղում, էջ 418:

ФРОММОВА КРИТИКА САМООТЧУЖДЕННОСТИ
ЛИЧНОСТИ И ЕЕ АКТУАЛЬНОСТЬ

МАНУК АРУТЮНЯН

*Заведующий кафедрой философии международного
научно-образовательного центра НАН РА, кандидат философских наук*

Статья посвящена философскому и социально-психологическому анализу фроммовой концепции отчуждения. Раскрыта сущность фроммовой интерпретации самоотчуждения, рассмотрены механизмы самоотчуждения, показана определяющая роль «рыночной ориентации» в роли формирования данного явления.

CRITICISM AND MODERNITY SELF-ALIENATION OF
THE INDIVIDUAL ACCORDING TO FROM

MANUK HARUTYUNYAN

*Head of the Chair of Philosophy, Scientific-Educational International Center,
RA National Academy of Sciences, PhD in Philosophy*

The article is devoted to philosophical and socio-psychological analysis of From self-alienation concept. Mechanisms and explanation character of self-alienation is investigated and revealed. Moreover, the author investigates the role of “market orientation” in the formulation of this phenomenon.

Հոդվածի ներկայացման փուլերից՝ 10.03.14 թ.

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՏՄԱՆ ՆԱԽԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ**

Սույն հետազոտության հիմնական նպատակն էր՝ պարզել Իրանի Իսլամական Հանրապետության երիտասարդության կողմից ԶԼՄ-ների և, մասնավորապես, հեռուստատեսության սպառման, հեռուստատեսային հաղորդումներից ստացվող տեղեկատվության և այդ տեղեկատվության ազդեցության առանձնահատկությունները՝ սոցիալականացման և սոցիալական մոբիլության ցուցաբերման ընթացքում:

Հետազոտության նպատակներն են.

- հասկանալ Իրանի երիտասարդության՝ հեռուստացույց դիտելու նախապատվությունները և դրանց պայմանավորվածությունը այնպիսի գործոններով, ինչպիսիք են սեռը, տարիքը, կրթությունը ևն,
- հասկանալ երիտասարդության հետաքրքրությունները համացանցային հեռուստատեսությունն օգտագործելիս,
- հասկանալ հեռուստատեսության ազդեցությունը երիտասարդների սոցիալական շարժունության, այդ թվում՝ միգրացիոն վարքի վրա,
- հասկանալ երիտասարդության անձնական իդեալների ձևավորման հարցում հեռուստահերոսների ազդեցությունը,
- հասկանալ երիտասարդության հետաքրքրությունները հեռուստատեսությամբ ներկայացվող ազգային,

կրոնական ու ավանդական արարողությունների նկատմամբ:

Ուսումնասիրության համար ընտրված բազմությունը ներառում է Իրանի երիտասարդությանը: Հետազոտությունն անցկացվել է Իրանի 30 նահանգներում 2011–2012 թվականների ընթացքում: Ժամանակի և ֆինանսական միջոցների սղության պատճառով սույն հետազոտությունը սահմանափակված է Իրանի միայն 30 նահանգային կենտրոններով:

Ընտրանքի չափն ուսումնասիրվող մարդկանց կամ միավորների քանակն է: Համաձայն Իրանի վիճակագրական կենտրոնի հրապարակած տվյալների՝ 2011–2012 թվականներին 18–35 տարեկան երիտասարդների թիվը կազմում է 33,734,800 հոգի:

Սովորաբար հաշվվում է ընտրանքի համախառն չափը: Այնուհետև յուրաքանչյուր մարզի համար ընտրանքի չափը պետք է հաշվել առանձին՝ հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$n_i = (N_i / N) * n,$$

որտեղ՝

N –ը 2011–2012թթ. Իրանի բնակչության թվաքանակն է Իրանի վիճակագրական կենտրոնի համաձայն,

N_i –ն 2011–2012թթ. յուրաքանչյուր նահանգի բնակչության թվաքանակն է,

n_i –ն ընտրանքի չափը:

Այնուհետև յուրաքանչյուր նահանգի համար ընտրանքի չափը (n_i) պետք է հաշ-

վարկել վերը նշված բանաձևով: Եթե վստահության մակարդակը կազմում է 0.95, ընտրանքի սխալանքը՝ 0.03, իսկ բնակչության թվաքանակը՝ $N=33,734,800$, ապա ընտրանքի չափը կլինի $n=1068$:

Հետազոտության հարցերը

- Հեռուստաալիքներից (ԻԻՀՀ¹ ու ՊԱՀՊԾ², թե՞ ՊՀՄԱՀ³) ո՞րն է ու ինչ պատճառով ավելի տարածված և նախընտրելի Իրանի երիտասարդության տեսակետից:
- Ինչպիսի՞ն է երիտասարդության վերաբերմունքը ԻԻՀՀ ու ՊԱՀՊԾ կամ ՊՀՄԱՀ՝ որպես հասարակությանն ինտեգրվելու, հարմարվելուն աջակցող մեխանիզմի:
- Ինչպե՞ս է ԻԻՀՀ ու ՊԱՀՊԾ կամ ՊՀՄԱՀ դիտելն ազդում երիտասարդների սոցիալական շարժունակությանը, նաև՝ միգրացիոն վարքին:
- Ինչպիսի՞ն է երիտասարդության վերաբերմունքը համացանցային հեռուստատեսության նկատմամբ:

Արդյունքների ներկայացում


Հետազոտությունը ցույց է տալիս, որ

¹ Համաձայն Իրանի Սահմանադրության 175 հոդվածի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հեռարձակողը (ԻԻՀՀ) հայտնի է որպես ազգային լրատվամիջոց, որն ունի հեռուստառադիոհաղորդումներ հեռարձակելու իրավունք: Այդ հոդվածն ընդգծում է, որ ԻԻՀՀ-ի ղեկավարին նշանակում ու պաշտոնանկ է անում Առաջնորդը: Այն ղեկավարող խորհուրդը կազմված է Իրանի նախագահի, դատական իշխանության ղեկավարի և իսլամական խորհրդատվական ժողովի երկուական ներկայացուցիչներից: Իրանի խորհրդարանը վերահսկում է այս կազմակերպության գործունեությունը, իսկ դրա վրած քաղաքականությունը, կառավարման ու վերահսկման խնդիրները կարգավորվում են օրենքով:


² Պարսկերենով արբանյակային հեռուստաալիքների պետական ծառայությունը (ՊԱՀՊԾ) հեռարձակում է իր հաղորդումները տարբեր լեզուներով՝ Իրանում և արտերկրում բնակվող մարդկանց համար:

³ Պարսկերենով հեռարձակվող մասնավոր արբանյակային հեռուստաալիքները (ՊՀՄԱՀ) հեռարձակում են իրենց հաղորդումները տարբեր լեզուներով՝ Իրանում և արտերկրում բնակվող մարդկանց համար:

Իրանի երիտասարդների մեծ մասը ավելի հաճախ է սպառում հեռուստատեսությունը, քան այլ ՋՄ-ները՝ այն դիտելով օրական միջինում չորս ժամ՝ չունենալով նախընտրելի ժամեր: Ինչպես երիտասարդները, այնպես էլ նրանց ընտանիքների անդամները և ընկերներն ավելի շատ նախընտրում են դիտել ՊՀՄԱՀ, քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ (Պատկեր 1):



Պատկեր 1. Իրանական հեռուստաալիքների ընտրության առումով երիտասարդության նախապատվությունները



Պատկեր 2. Երիտասարդության տեսակետները հեռուստաալիքներով ճշմարիտ տեղեկատվություն մատուցելու վերաբերյալ

Բացի այդ, ՊՀՄԱՀ-ը վայելում է երիտասարդության վստահությունը, քանզի այն մատուցում է հետաքրքիր, որակյալ, օբյեկտիվ և իրատեսական նորություններ ու հաղորդումներ, ինչպես նաև հետադարձ կապի ավելի լավ հնարավորություն է ընձեռում (Պատկեր 2):

Հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների մեծ մասը նախընտրում է դիտել ժամանցային հաղորդումներ՝ շոուներ, նորաձևություն, ֆիլմեր և մուլտֆիլմեր: Նախապատվության հաջորդ աստիճանում են գտնվում կրթական և տեղեկատվական հաղորդումները:

Սոցիալականացման վերաբերյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդներն ավելի շատ են սովորում մարզական, համերգային, պատմագիտական, բնագիտական և մշակութային, քան այլ տեսակի հաղորդումներից: Ժամանցային հաղորդումները (շոուները, համերգները, մարզական ու նորաձույթի հաղորդումները, ֆիլմերը) գրավում են առավելագույն թվով հանդիսատեսի, մինչդեռ տեղեկատվական հաղորդումները (նորություններ, քաղաքական ու կրոնական հաղորդումներ) գալիս են հաջորդիվ: Վերջապես, ընտանիքը, ընկերները և ՊՀՄԱՀ հեռուստալիքներն ունեն ավելի մեծ ազդեցություն երիտասարդության մեծամաս-

նության վրա, քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն:

Դերերի վերաբերյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների 20%-ը կցանկանային իրենց տեսնել հեռուստաշոուններում, 17%-ը՝ մարզական հաղորդումներում, 10%-ը՝ նորությունների թողարկումներում, 9%-ը՝ համերգային հաղորդումներում, 7%-ը՝ իրանական ֆիլմերում և մնացածը՝ այլ հեռուստահաղորդումներում: Ուստի հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների մեծ մասը կցանկանար գտնվել ժամանցային հաղորդումներից որևէ մեկի, հատկապես՝ շոունների, մարզական, ֆիլմերի և համերգների, մասնակիցը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հեռուստատեսային կերպարներ սրանձնելու վերաբերյալ տեսակետները

Հաղորդման տեսակ	Ցուցանիշներ	Հաճախականություն	Տոկոս	Կուտակված հաճախականության տոկոս
Հեռուստանորություններ		104	9.73	9.73
Քաղաքական-վերլուծական հաղորդումներ		52	4.86	14.59
Շոու-ծրագրեր		214	20.03	34.62
Իրանական ֆիլմեր		74	6.92	41.54
Արտասահմանյան ֆիլմեր		60	5.61	47.15
Համերգներ		99	9.26	56.41
Ժամանց		41	3.83	60.24
Կրոնական ծիսակատարություններ		56	5.24	65.48
Մարզական հաղորդումներ		184	17.22	82.7
Մշակութային հաղորդումներ		40	3.74	86.44
Պատմական հաղորդումներ		26	2.43	88.87
Բնության մասին ֆիլմեր		37	3.46	92.33
Մուլտֆիլմեր		46	4.3	96.63
Նորաձույթի մասին հաղորդումներ		33	3.08	99.71
Այլ հաղորդումներ		2	0.18	100
Ընդամենը		1068	100	

Երիտասարդության մեծ մասը գտնում է, որ ՊՀՄԱՀ-ով հեռարձակվող ժամանակացային ու տեղեկատվական հաղորդումները կոնֆլիկտ ու թյուրըմբռնում են հրահրում իրենց և ավագ սերնդների միջև: Հեռուստադիտողների շրջանում ավագ սերնդի հետ կոնֆլիկտ ու թյուրընկալում հրահրելը դիրքորոշումներ և արժեքներ ձևավորելու մեկ այլ գործոն է: Ըստ հարցված երիտասարդների՝ ժամանակացային հաղորդումների 72.9%-ը (շոուներ, համերգներ, ժամանց, նորաձևություն, մուլտֆիլմեր, արտասահմանյան կամ իրանական ֆիլմեր, մարզական հաղորդումներ) և տեղեկատվական հաղորդումների 27.1%-ը (քաղաքական, նորություններ, մշակութային, պատմական, բնության մասին) կարող են ստեղծել կոնֆլիկտ ու թյուրընկալում երիտասարդների և ավագ սերնդի միջև: Ըստ ստացված արդյունքների՝ երիտասարդների 60%-ը կարծում է, որ ՊՀՄԱՀ-ն ավելի շատ կոնֆլիկտ ու թյուրընկալում է առաջացնում (երիտասարդների և ավագ սերնդի միջև), քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ ՊՀՄԱՀ-ն ունի հասարակական, քաղաքական, կրոնական, տնտեսական, մշակույթի և արվեստի բնագավառներին առնչվող ավելի շատ հանրամատչելի ծրագրեր, քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն:

Հանրամատչելի թեմատիկ հաղորդումների առումով հեռուստաժամանակացային հաղորդումները հիմնականում վերաբերում են աղքատությանը, զվարճանքին, վարկանիշներին, կոռուպցիային, սոցիալական անհավասարությանը, հարուստների և աղքատների միջև առկա անջրպետին: Տեղեկատվական հաղորդումներում գերակշռում են քաղաքական ու կրոնական թեմաները, իսկ կրթականներում՝ համակարգիչային տեխնոլոգիաները, խոհարարությունը, լեզուներն ու երաժշտությունը:

Ըստ հետազոտության արդյունքների՝

ՊՀՄԱՀ-ն ավելի շատ հաղորդումներ է նվիրում սեռային, ռասայական ու տարիքային անհանդուրժողականությանը և անհավասարությանը, ինչպես նաև շքեղ կյանքի գովազդմանը, քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն: Բացի այդ, ինչպես ՊՀՄԱՀ-ով, այնպես էլ ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ով հեռարձակվող գովազդային թողարկումների մեծ մասն առնչվում է բջջային հեռախոսներին, հեռուստացույցներին, հարդարանքի պարագաներն են:

Հետազոտության համաձայն՝ ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ի հաղորդումների մեծ մասը վերաբերում է իրանական կենսակերպին, ինչը նպատակաուղղված է խթանելու երիտասարդներին ապրելու Իրանում և հավատարիմ մնալու իրանական կենսակերպին: Ուստի ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն, ի տարբերություն ՊՀՄԱՀ-ի, քննադատում է ժամանակակից արևմտյան կենսակերպի ներդրումը իրանական հասարակության մեջ: Ի հակառակ դրան՝ ՊՀՄԱՀ-ը խթանում է երիտասարդներին՝ ապրելու արևմտյան ոճով: Հետազոտությունը ցույց է տալիս, որ ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ի՝ իրանական մշակույթն առաջ մղելուն ուղղված քայլերն ավելի թույլ են, քան ՊՀՄԱՀ-ի՝ հակառակ ուղղությամբ միտված գործողությունները. վերջինի հաղորդումներն ավելի լավ են մշակված:

Այսպես, որոշակի կենսակերպի նկատմամբ հանդիսատեսի դիրքորոշումը ձևավորելու առումով ՊՀՄԱՀ-ն խթանում է արևմտյան կենսակերպը ֆիլմերի (75%), քաղաքական հաղորդումների (20%) և նորությունների թողարկումների (5%) միջոցով: Ուստի ՊՀՄԱՀ-ը դրական լույսի ներքո է ներկայացնում արևմտյան մշակույթը՝ որպես ապրելու համար հարմարավետ միջավայր:


Հետազոտությունը ցույց է տալիս, որ ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ի հաղորդումների 87%-ը գովաբանում ու խթանում է իրանական մշակույթը: Այդ մոտեցումը մեծամասամբ (85%) արտահայտված է նորությունների

թողարկումներում, քաղաքական ու կրոնական հաղորդումներում, ֆիլմերում և կինոհաղորդումներում, իսկ մնացած 15%-ը դրական լուսաբանումը բաժին է ընկած ռեպորտաժներին ու հարցազրույցներին:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն խթանում է երիտասարդների իրանական կենսակերպը, մինչդեռ ՊՀՄԱՀ-ը նրանց արևմտյան ոճ է հրամանում: Բացի այդ, ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ն, քաղաքական ու կրոնական հաղորդումների, նորությունների թողարկումների և ֆիլմերի միջոցով քննադատում է արևմտյան ժամանակակից կենսակերպը:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդության մեծ մասը ցանկանում է օգտվել համացանցից ամեն օր: Բացի այդ, նրանք ամեն օր հավասարապես օգտվում են հեռուստատեսությունից և համացանցից:

Երիտասարդները համացանցից օգտվում են նախ՝ էլեկտրոնային փոստն ստուգելու, հետո՝ ժամանցի, հետո՝ տեղեկույթ որոնելու և, վերջապես, սոցիալական ցանցերից օգտվելու համար:



Պատկեր 3. Երիտասարդների գրադնունքը համացանցում

Երիտասարդության ավելի մեծ մասը նախընտրում է առցանց դիտել ՊՀՄԱՀ-ի, քան ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ի հաղորդումները:

Հետազոտության համաձայն՝ հեռուստատեսությունը երեք եղանակով է նպաստում Իրանի երիտասարդների արտագաղթին: Առաջինը աշխատանք գտնելն ու իրենց կյանքի մակարդակը բարելավելն է, երկրորդը՝ Իրանում

իրավունքների և ազատությունների պակասն է և հեռուստատեսության միջոցով արտերկրում իրավունքների և ազատությունների ավելի բարձր պաշտպանվածության մասին ներկայացվող տեղեկատվությունը, իսկ երրորդը՝ ավելի լավ կրթություն ստանալը և արտերկրում բնակվող ընտանիքի անդամներին վերամիավորվելը: Այսպես, երիտասարդության 83%-ի կարծիքով՝ քաղաքատնտեսական հարցերը Իրանից արտագաղթելու հիմնական պատճառներն են, 12%-ը նշում է արևմտյան կենսակերպը գրավիչ լույսով ներկայացնող կինոնկարները և 5%-ը նշում է այլ պատճառներ, օրինակ՝ ժամանցային հաղորդումները (համերգներ, երաժշտություն ևն):

Այս իմաստով ՊՀՄԱՀ-ը ԻԻՀՀ-ՊԱՀՊԾ-ից ավելի շատ է արտագաղթի թեման շոշափում, և, իհարկե, արտագաղթը խթանող կարևորագույն գործոնը արևմտյան երկրներում ավելի բարեկեցիկ կյանքը ներկայացնող կինոնկարների միջոցով քաղաքական-տնտեսական խնդիրներ հրահրելն է: Օրինակ, արևմտյան արտադրության ֆիլմերում ցուցադրվում է, որ երիտասարդներն ապրում են երջանիկ և ուրախ կյանքով, ունեն ավելի լայն հնարավորություններ կրթության ու աշխատանքի առումով:

Աղյուսակ 2-ի համաձայն՝ երիտասարդության 46.6%-ը կարծքում է, որ հեռուստատեսությունը Արևմուտքի երկրների կյանքն ավելի լավ լույսի ներքո են ներկայացնում. երիտասարդները գտնում են, որ Արևմուտքում իրենց հասակակիցներն ավելի ուրախ և անհոգ են ապրում: 34.7%-ը նշում է երիտասարդության համար մեծ հնարավորությունները կրթության, մասնագիտական առաջընթացի և զարգացման առումով: 18.7%-ը մատնանշում է հեռուստածրագրերում Իրանում կյանքի քննադատությունը՝ որպես արտագաղթի պատճառ:


Աղյուսակ 2. Երիտասարդության կարծիքը Իրանից արտագաղթը իրականելու՝ հեռուարսապիքների կողմից օգրագործվող ձևերը

Ցուցանիշներ	Հաճախականություն	Տոկոս	Կուտակված հաճախականության տոկոս
Գրավչության ձևը			
Արևմտյան երկրների ավելի լավ կյանքը ներկայացնելը	498	46.6	46.6
Երիտասարդների համար ավելի շատ հնարավորությունները	371	34.7	81.3
Իրանում կյանքի քննադատությունը	199	18.7	100
Ընդամենը	1068	100	

Իրանից արտագաղթելու վերաբերյալ երիտասարդների 84.2%-ը (վստահաբար կամ մասնակիորեն) համաձայն է որոշումներ ընդունել հեռուստածրագրերով ներկայացվածների նմանությամբ և միայն 15.7%-ը՝ ոչ:

Երիտասարդների 38.6%-ը ցանկանում

է նմանվել հեռուստատեսությամբ ներկայացվող՝ ֆիլմերի, համերգների կամ բեմականացումների հերոսներին, 35.9%-ը կցանկանար նմանվել մարզիկներին, 16.5%-ը՝ հասարակական-մշակութային կերպարներին, 5.8%-ը քաղաքական գործիչներին և 1.6%-ը՝ այլոց (Պատկեր 4):



Պատկեր 4. Հեռուստատեսությամբ ներկայացվող որ կերպարներին կցանկանան նմանվել երիտասարդները

Երիտասարդության նմանարկման 43.82%-ն արտահայտվում է հեռուստահերոսների նման հագնվելով, 27.62%-ը՝ նրանց պես խոսելով, 15.07%-ը՝ նրանց պես մարզվելով, 9.08%-ը՝ նրանց նման հետազոտություն կատարելով և 4.4%-ը՝ այլ եղանակներով:

Երիտասարդների մեծ մասն իր հերոսներին տեսնում է ՊՀՄԱՀ-ով: Որևէ հեռուստահերոսի չերկրպագող երիտասարդները, ըստ հետազոտության, նմանարկում են իրենց ծնողներին, լավ ընկերներին կամ ուսուցիչներին:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ


երիտասարդների մեծ մասը կցանկանար ամուսնանալու, հարսանյաց հանդեսը կազմակերպելու և կահավորելու, ազգային ու կրոնական ծեսերը տոնելու հարցերում հետևել հեռուստահաղորդումներով մատուցված եղանակներին: Ծիսակատարությունները տոնելու

միտումների մասով հետազոտությունը ցույց է տալիս, որ երիտասարդների 55.61%-ը նախընտրում է ծեսերն անցկացնել արևմտյան ոճով, 35.48%-ը՝ ինչպես ազգային, այնպես էլ արևմտյան ոճերով և 8.14%-ը՝ նախընտրում է միայն ավանդական ծիսակարգերը (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Երիտասարդության շրջանում եղած միտումները՝ ծեսերն անցկացնելու վերաբերյալ


Ցուցանիշներ	Հաճախականություն	Տոկոս	Կուտակված հաճախականության տոկոս
Վարքագծի տեսակ			
Ավանդական	87	8.14	8.14
Արևմտյան	594	55.61	63.75
Ազգային ու արևմտյան տարրերի խառնուրդ	379	35.48	99.23
Վստահ չեն	8	0.74	100
Ընդամենը	1068	100	

Ազգային-կրոնական ծեսերին երիտասարդության մասնակցության վերաբերյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց 43.6%-ը ցանկանում է մասնակցել անկանոն կերպով, 32.8%-ը՝ ամիսը մեկ անգամ, 16.3%-ը՝ շաբաթը մեկ անգամ և 7.3%-ը՝ շաբաթը մեկ անգամից ավել, սակայն ոչ ամեն օր (Պատկեր 5):



Պատկեր 5. Երիտասարդների մուրեցումները փարբեր ծեսերը դիմելու վերաբերյալ

Կրոնական ծեսերը դիտելու վերաբերյալ Պատկեր 6-ը ցույց է տալիս, որ երիտասարդության 32.3%-ը կցանկանային դիտել անկանոն կերպով, 31.6%-ը՝ ամիսը մեկ անգամ, 20.2%-ը՝ շաբաթը մեկ անգամ, 13.9%-ը՝ շաբաթը մեկ անգամից ավելի, սակայն ոչ ամեն օր և 2%-ը՝ ամեն օր:



Պատկեր 6. Հեռուստատեսությանը կրոնական ծեսեր դիտելու հաճախականությունը

Այսպիսով, ստացված արդյունքները ցուցադրում են Իրանի երիտասարդության հակվածությունը հեռուստատեսության դիտմանը՝ որպես սոցիալականացման, սոցիալական մոբիլության, արտագաղթի, ավանդական ծեսերի վերաբերյալ պատկերացումների և վերաբերմունքի ձևավորման կարևոր գործոնի: Արդյունքները կարող են օգտակար լինել ինչպես հետազոտողների, այնպես էլ շահագրգիռ կազմակերպությունների և տեղեկատվական քաղաքականությունն իրականացնող սուբյեկտների համար:

ПРЕДПОЧТЕНИЯ ТЕЛЕПРОСМОТРА И ВОЗДЕЙСТВИЕ НА ЦЕННОСТНУЮ
ОРИЕНТАЦИЮ МОЛОДЕЖИ ИРАНА

МАХМУД ХАЛИЛИ

*Исследователь социологии СМИ в Министерстве Сельского хозяйства Ирана,
и преподаватель Университета Пайам Нур, Иран*

В статье представлено исследование предпочтений иранской молодежи при телепросмотре, в частности, выбор между доступными в Иране телеканалами, и формирование ценностной ориентации в связи с предпочитаемыми телеканалами и телепередачами. В частности, рассматриваются предпочтения молодежи при просмотре западных и иранских телепередач, причины, по которым делается соответствующий выбор, и как влияют данные предпочтения на их образ жизни.

PREFERENCES OF TELEVISION CONSUMPTION AND EFFECTS
ON IRANIAN YOUTH VALUE ORIENTATION

MAHMOUD KHALILI

*Media Sociology Researcher at the Ministry of Agriculture of Iran,
and Adjunct Lecturer at Payam Noor University of Tehran*

The study on television consumption by Iranian youth is represented in the article. The study demonstrates the ways in which the choice of TV channels and programs determine socialization process, value orientation among young people, including preferences to watch Iranian and pro-Western programs, learning from them, getting oriented about either stay or emigration to the countries where the more likely life is shown, possible conflicts with older generation, etc.

Հոդվածի ներկայացման ցարկերթի 13.04.14 թ.

ВЛАДИМИР БЛОХИН

*кандидат педагогических наук, доцент кафедры
«Философия и история» Уральского государственного
университета путей сообщения
(г. Екатеринбург, Россия)*

АРМЯНО–РУССКИЕ КОНФЕССИОНАЛЬНЫЕ СВЯЗИ В X – НАЧАЛЕ XIX ВВ. (ОТ ИСТОКОВ ДО ВХОЖДЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В СОСТАВ РОССИИ)

Армения и Россия... Произнося эти слова, в нашем сознании предстают два государства, обладающих богатейшим историческим наследием. Армяне и русские – два народа, судьбы которых соединены многовековой дружбой. Армянская апостольская и Русская православная церкви – древние духовные сокровищницы, обогатившие христианский мир собственными культурными традициями, выдающимися памятниками храмового зодчества. Обе церкви в лице своих деятелей играли большую роль в государственной и общественной жизни, выполняя функции национально–духовного объединения.

История армяно–русских конфессиональных связей насчитывает тысячу лет – именно столько армяне проживают на территории Российского государства, начиная с эпохи киевских князей. Во взаимоотношениях обеих церквей лежит поистине братское начало, проявляющееся сегодня в открытости форм межцерковного сотрудничества и многообразии социального служения.

Существенное значение в конфессиональных связях Армении и России имеет богословский диалог, начавшийся в XIX в. и продолжающийся с учетом новейших догматических и церковно–исторических исследований. Как и Русская, Армянская

церковь именуется «православной» (полное название – «Армянская святая апостольская православная церковь», арм. «Հայոց Սուրբ Առաքելապահ Ուղղափառ Եկեղեցի»). В настоящее время представители армянского духовенства и Русской православной церкви идут по пути создания продуктивных усилий, направленных на достижение единого мнения в вопросе вероучительного тождества обеих Церквей. Находясь с визитом в Армении в марте 2010 г., патриарх Московский и всея Руси Кирилл в приветственной речи в кафедральном соборе Эчмиадзина отметил: «Несмотря на то, что наши Церкви в силу исторических причин не имеют евхаристического общения, мы отчетливо осознаем близость друг к другу. Причину тому мы находим в приверженности Русской Православной и Армянской Апостольской Церквей древнему церковному Преданию. На его основе веками формировались традиционные ценности, в равной степени характерные восточнославянской и армянской культурам. Именно верность христианской традиции и ее нравственным идеалам является для нас связующей нитью, залогом нашего сотрудничества и дружбы»¹.

¹ Цит. по: Приветственная речь Святейшего Патриарха Кирилла в кафедральном соборе Эчмиадзина, 16 марта 2010 г. URL: <http://www.patriarchia.ru/db/>

Заметную роль в современной жизни обеих Церквей играет также географический фактор, связанный с сохранением сформировавшейся канонической территории (территории, на которую распространяются административные и духовные полномочия церкви). Для Русской Церкви — это территории, исторически входившие в состав Российского государства (начиная с эпохи Киевской Руси), для Армянской — земли, составлявшие историческую Армению, а впоследствии — армянские общины диаспоры, в том числе образовавшиеся в России. Справедливым является утверждение К. Мовсисяна, понимающего совокупность армянских общин и епархий в русских землях как единого организма, т.к. возникновение первых обязательно влекло за собой появление церковных структур¹. Такая взаимосвязь объясняется консолидирующей ролью Армянской церкви, направленной на сохранение веры, национального самосознания, языка и культурных традиций армян вне исторической родины. Отсутствие политической независимости привело к тому, что Армянская церковь приобрела национальный характер, до настоящего времени выступая незыблемым символом всего армянского народа, независимо от места его проживания. Образуя, говоря, церковь для армян — подлинное воплощение народной души.

История армяно-русских конфессиональных связей охватывает пять этапов:

1. Конец X – начало XVIII в. Время появления первых армянских поселений и храмов в городах Киевской Руси (Киеве,

Каменце–Подольском, Луцке), а в XVI в. – возникновение армянской церкви в Москве; начало складывания армяно-русских церковных отношений, имевших крайне фрагментарный характер, однако повлиявших на особое почитание в Московском государстве св. Григория, просветителя Армении;

2. 1717 – 1828 гг. Образование в России двух армянских епархий: в 1717 г. – Астраханской (переименованной в 1780 г. в Ново-Нахичеванскую) и в 1809 г. – Бессарабской; закрепление права управления ими за Эчмиадзинским католикосом; признание российскими властями и Русской церковью близости армянского и православного вероучений;

3. 1828 – 1918 гг. Вхождение Восточной Армении и центра Армянской церкви – Эчмиадзина – в состав Российской империи; определение статуса Армянской церкви Положением 1836 г.; признание церковных и гражданских заслуг армянских католикосов на уровне государства и Русской церкви; публикация в российской печати апологетических трудов, подтверждающих богословско-догматическое единство Армянской и Русской церквей;

4. 1918 – 1991 гг. Эпоха богоборческих гонений, охвативших Армянскую и Русскую церкви главным образом в 20 – 30-е гг. XX в.; придание армяно-русским церковным отношениям официального характера и расширение спектра взаимодействия двух церквей (образовательная, просветительская, миротворческая деятельность); учреждение в 1966 г. Ново-Нахичеванской и Российской епархии с центром в Москве;

5. 1991 – 2013 гг. Современный этап взаимоотношений Армянской и Русской церквей, обладающих систематическим,

text/1114986.html (Русская Православная Церковь: Официальный сайт Московского Патриархата). Дата обращения: 12.01.2013 г.

¹ Мовсисян К., диак. Армянские епархии в России: Диссертация на соискание ученой степени кандидата богословия. – Загорск: Свято-Троицкая Сергиева Лавра, 1991. – Рукопись. – С. 3.

конструктивным и братским характером; активность в продолжении богословского армяно–русского межцерковного диалога; совместное инициирование и реализация усилиями обеих церквей образовательных, культурных, миротворческих и социальных проектов; закладка нового русского православного храма в Ереване (2010 г.) и открытие армянского кафедрального собора в Москве (2013 г.).

В настоящей статье подробно охарактеризуем сущность первых двух этапов, раскрывающих особенности армяно–русских церковных связей до вхождения Восточной Армении в состав России.

Становление армяно–русских церковных связей в конце X — начале XVIII в. Ярким событием, положившим начало формированию армяно–русских отношений, стала женитьба Киевского князя Владимира на принцессе Анне, сестре византийского императора Василия II и его преемника, императора Константина VIII, которые были по происхождению армянами. Это произошло в 989 г. Условием брачного союза был конфессиональный фактор – принятие христианства Владимиром и его народом годом ранее, событие, вошедшее в российскую историю как Крещение Руси. Прибыв в Киев, Анна привезла с собой свиту, в числе которой находились армянские священники. Известно, что представители армянского населения столицы Древней Руси принимали деятельное участие в экономической и культурной жизни города¹.

Исследователь К. В. Айвазян приводит факты совместного творчества русских и армянских мастеров в декоративном уб-

ранстве саркофага Киевского князя Ярослава Мудрого и создании ряда мозаик в Киевской Софии и Успенском соборе Киево–Печерской лавры². Армянские умельцы были также в числе строителей православных храмов северо–восточной Руси – в Боголюбове и Владимире³.

После взятия турками–сельджуками армянской столицы Ани в 1061 г. более 20 тыс. армян переселились в Крым и южно–русские земли⁴. Вторая волна переселенцев пришлась на XIII столетие после монгольского нашествия на Армению в 1236 г. А. Е. Тер–Саркисянц сообщает о том, что на протяжении XI – XIII вв. армяне обосновались в Новгороде, Смоленске, Булгаре, Львове, Каменец–Подольском, Луцке. Переселение армян объективно приводило к появлению в русских землях армянских храмов: св. Николая в Каменце–Подольском (1250 г.), св. Степаноса в Луцке (XIII в.), в Булгаре (XIV в.), Успения Богородицы в Киеве (XV в.)⁵.

Возникновение армянских общин и храмов в средневековых городах Руси и прилежащих территориях привело к взаимному узнаванию русских и армян, взаимопроникновению двух культурно–религиозных традиций. Более всего этот процесс проявлялся на социальном и бытовом уровнях. Одной из решающих причин, повлиявших на установление братских отношений двух народов, была близость христианской веры. А. Е. Тер–

¹ Тер–Саркисянц А. Е. История и культура армянского народа с древнейших времен до начала XIX в. / А. Е. Тер–Саркисянц; Ин–т этнологии и антропологии им. Н. Н. Миклухо–Маклая. – 2–е изд. – М.: Вост. лит., 2008. – С. 370.

² Айвазян К. В. История отношений русской и армянской церквей в средние века / Ред. С. С. Аревшатян. – Ереван: Изд–во АН АрмССР, 1989. – С. 22; Тер–Саркисянц А. Е. Указ. соч. – С. 469 – 470.

³ Айвазян К. В. Указ. соч. – С. 90 – 94.

⁴ Алов А. А., Владимиров Н. Г. Армянская апостольская церковь в России // Религиозная жизнь и культурное наследие России. Католицизм. Протестантизм. Армянская апостольская церковь / Колл. авт.: А. А. Алов, Н. Г. Владимиров, Ф. Г. Овсиенко. – М.: Институт Наследия, 1995. – С. 99.

⁵ Тер–Саркисянц А. Е. Указ. соч. – С. 371.

Саркисянц пишет, что «свободное общение русских и армян приводило даже к тому, что между ними ... иногда заключались браки и кумовство»¹. Осознание братского отношения друг к другу именно на частном, чаще повседневном, уровне будет прослеживаться и впоследствии.

Официальный же уровень взаимоотношений Армянской и Русской церковей на протяжении XII – XVI вв., оказался весьма слабым. Этому обстоятельству, на наш взгляд, способствовал целый ряд внутрицерковных и политических факторов:

- незавершенность (по сути – обрыв) богословского диалога Армянской церкви с Византийской во второй половине XII в., направленного на признание вероучительного единства между армянами и греками;
- разобщение духовной власти в Армении, начавшееся со второй половины XI в. (перенос резиденции армянского католикоса в Себастию, Константинополь, Ани, появление автономного католикосата на Ахтамаре);
- политическая раздробленность Армении и русских земель в XI – XV вв.;
- нестабильность международной обстановки, повлиявшей на конфессиональную ситуацию в Армении и русских землях (раскол Христианской церкви в 1054 г., начало крестовых походов и завоеваний на Ближнем Востоке, татаро–монгольская экспансия);
- предвзятый подход к сущности армянской веры у ряда авторитетных деятелей греческого и русского православия XIV – XVI вв. – в частности, Московского митрополита Киприана (1330 – 1406) и афонского

монаха Максима Грека (1475 – 1556), сыгравшего значительную роль в истории русской церковной книжности².

